սորս բազում առնչութեամբ և զուի շաղկապեալ .  
( Հենրի Մատթիեոյ ) : Միջնաշխարհու Առնավու-  
տաց կոչի այժմ Մուսակի , որ ակնորդէ , անուարա-  
կոյս , ի Մոսէք կամ Միաբակա Աղվանից Կովկասու :  
Ասպէս՝ արդի Թօոր իջանեն , հաւանականաբար ,  
ի Թխուեացն Պատղեմեաց . Եսապուր՝ նոցա զրացիք ,  
յԵսալուզաց կամ յԵսալէուց որբյաղթեցան ի Տու-  
ղիստանաց , ի 624 ամին Հառնաց , և Ակրօ-Ակրա-  
նեան լերինք Առնուայուաց յիշեցուցանեն զեկերտ-  
նեան ոպարս հոյն Աղվանից :

Բառքինչյորս տեսանի ընտանութիւն լեզուին Ա. Ե.  
վանից ընդ Ամհակրիստին :

Հայերէն.	Աղվաներէն.	Ամսկրիտերէն.
Թաղաւոր.	Աւգ.	Ուոջա.
Արդ.	Աւուր.	Աւուր.
Ապրդ.	Աւերի.	Ապր.
Երկիր.	Ատերէ.	Ատրիա.
Փայտ.	Դպու.	Դպուհ.
Աշբ.	Ջի.	Աշխան.
Օր.	Դիմու.	Դիմուն.
Եղի.	Կառու.	Կառ.
Արդն.	Արիմու.	Արիմի.
Ընդունիլ.	Գրեխ.	Գրահ.
Առաջին.	Պարէ.	Պարա. ալերսիլի Ուուն:
Աեծ.	Աադ.	Աահադ.
Ընտանութիւն լեզուին Աղվանից ընդ Կելտաց :		

Հայեր.	Աղվան.	Կելտ.
Աին.	Բէ.	Բէան. ի Հայն՝ բամբ-բիւ :

Պառաւ.	Գրուա.	Գրուաժ.
Ազատայր.	Բուրէ.	Բարթ. պարսն ի Հայն բօյար ի Ուռան:
Դատաւոր.	Մ'բրիտ.	Բրիտ.
Կառը.	Կառէ.	Կառա. կառեթայ ի Ուռան :
Գէր.	Լարի՛.	Լարա. Գալլիացիք զզէրն Հայոց արարին զրա. և Լատինկ ի Ըս- րէ, լարիքս :

Ընտանութիւն լեզուին Աղվանից ընդ Խրենաց  
կամ Բասրի :



Հայեր.	Աղվան.	Բասր.
Ուկի.	Արր.	Ուրբու. արոյր ի Հայն որ է ուկեալդինձ :
Քար.	Հուր.	Հուրրիս. Կելոր ի բարէ Հայոց արարին քարեր-քարահանկ :
Մայր.	Եմա.	Ամա :
Ծաղիկ.	Եխու.	Ելիսա :
Ուտել.	Եա.	Ժան. Ժանիք ի Հայն :
Շուտ.	Եմլու.	Ամսար.

Անուանը շատրւածոց Յունաց ծաղին յԱղվանեն:

Հոցեր.	Աղվան.	Յունաց.
Ալոե.	Դիմէ.	Դելիս.
Օդ.	Հերէ.	Հերէ.
Ամա.	Այսինի.	Ուսունեան (Երկինք). Ըստ ացամ Արանն ոչ յոյժ օսուր երեւի ի վրանել. Հոյոց:
Արկիր.	Դէ.	Դէ.
Օով.	Գևիզ.	Տեթիս (կին Ամկանոսի):
Լեզուն Լորոց առեսլ է յԱղվանեն:		

◇ ◇

Հոցեր.	Աղվան.	Էօլ.
Գլուխ.	Բարէ.	Բար.
Հոր.	Ցեարմ.	Թարմաս. դարմի Պարմիկն.
Օսուր աշխարհ.	Ակիւմա.	Ջրմէ. ակսէ- նոս—օսուրական.

Բառական համարեսլ որ ինչ սասցան զլեցուէ  
 Առնավուտաց (Աղվանից) ըստ Հենրի Մատթի-  
 և յի դարձցուք միսամանգամ ի Կովկաս: Խ զրելցոց  
 ի վեր անզր տեսանի թէ արմատ Աղվան բառին է:  
 աղ, աղի, աղը, աղը. որ նշանակէր թերիս ի հնումն  
 ժողովուրդ դոչ, լեռնական կամ սպիտակամերթ,  
 որպէս սովոր է, իննախնիք, բատ արտարին հանդա-  
 մանացն, որէսպէս անուանս զնել և կոչել զոմանս սեւ,  
 սեւուկ, սեւուրք, խարիկիսակս թիսուի ի հան մարթոց

նոցա, զայըս՝ շիկ, շիկամորք, և զիկնո՞ւ միիսք, ալօքան  
ի տակս դռարածոթեան նոցա ( սկսուս ի բեղու  
Ալալաց նշանակիէ անսատոն ) : Այսպէս նաև ի մի-  
ջին գարու գօրդուս Թամթարաց ենառոս կոչեցին  
մատենագիրը մեր ի տակս նետիւ և տղեղամբ սկա-  
տերաղմելոց նոցա, թէ և դիտէին, դէթ ընդ աղօսու,  
թէ գոշամորքք, սեւամորքք, Ակիսրք սրարտնակին  
ցեղս այլ և այլս, և ոչ իջանէին առեներին ի միտջէ  
նահապետէ : Սասպէս որդինացը զմիտհանուս բնա-  
կիչս Կովկասու, այսինքն զԼեզգիս, զԲաշկիրս,  
զԼայդազս, զԿումուխս, զԱվարս, զՉաշանս, զՉեր-  
քէզս, զԽնդուչս, զԼարարդացիս և զայըս կոչեն  
հասարակական անուսամբ լեռնականս, թէ և դիտեն  
սառողիւ թէ դիխովին տարբերեն նորին ի միմեանց  
աղջաւ, լեզուաւ, տանկութեանք և առենոյնիւ :  
Սարարտն վիայէ թէ Ազգանիր Կովկասու խօսէին ի  
26 լեզուս. մեր եւս դիտեմք թէ մեծ մասն նոցա  
խառնեալ ընդ Ակըսս, ընդ Խրերս՝ ափեցս յԵւ-  
րայիս . եւ զտեղի նոցա կազմն Ալանք, դորս ոչ է  
սրարտ շմոթել ընդ Ազգանից : Եւթերեւս յոցս սո-  
կըս է զի Մոլսէս Կազմնեայտուացի ընծայէ ազդին  
ի բուժ ծագութն հիսոխայ, որ յեւս համարելոց  
դՀայս, զԼելսս, զԳամիրս, զԱմարս, զՅոյնս, զՉե-  
տաղս, զԼատինաիՅարեթէ սերեալ՝ յառելս . Գիրը  
Ա. 2 : իսկ որ ի կողմանս հասոխոց են՝ ազգութիւն են

Աետուրացւոց, ուստի Աղվանիք » , եւ ի հ ն այսպիս  
խօսի զնախարարութենէ Աղվանից « զմեծ լերամբ  
կաւկասու բնակելոցն չունիմք ինչ ասել զատոյդն  
ի պէտս բազաց մինչեւ ցԱ աղարշակ՝ արբայն Հա-  
յոց, որ ի կարգելն իւրում՝ զհիւսխայիմսան կոչեաց  
զվայրենի եկամուտ ազգս որ ի դաշտեն հիւսիսյ կամ  
որ զատորոսովն կաւկասու, կամ ի հովիսու կամ ի  
խորաձորս զնարաւով մինչեւ ցմուսս դաշտիմ՝ պատուիր  
առելը զաւազակուրին և զմարդադաւորին բողոք...  
սակա կարգեաց նոցա առաջնորդս եւ վերակացուս,  
յորոց զիսաւոր ոմն Առան անուն, որ ժառանգեաց  
զգաշտս և զլերինս Աղվանից . . . և աշխարհ  
յանուն քաղցրուրեան բարուց նորս անուանեցաւ  
Աղվանիք... Եւ ի սորս (Առանայ) զաւակէն, ասեն,  
սերեալ զազդս Ուսէացւոց, Գարդմանացւոց » :  
Կազանկայտուացին եւ Օրբէլեանն զբաղցրութիւն  
բարուցն Առանայ տան . Խորենացին եւ այլը՝  
Ախակայ :

Հերոդոտ. եր. 118-119 (ըստ Տարազր. Բուշօնի)  
ի խօսելն զ14, զ15, զ17 կուսակալութեամնց պետու-  
թեամնն Օւարեհի յիշատուակէ զՀայս, զՈւտիս, զԱ-  
կըս, զՊարթեւս, զԱսպիրս, զՄոսորս, զՄարտսս եւ  
եր. 245-247 ի թուելն զզօրն Քաերբուէսի՛ դարձեալ  
խօսի յանուանէ զԱ բկանաց, զԱսկաց, զԼասպից,  
զՈւտեաց, զՀայոց, զՄոսորաց, զՄարտսս, զԱսպի-

բաց, եւ չառնէս ամենեւին յիշատակ ինչ զԱղվանից, որով կարծել տայ թէ գուցէ զայնու ժամանակաւ Աղվանը ինքեանը զինքեանս Մազիր կոչէին որպէս եւ այժմ՝ սկիստար որպէս թէ սպարար (սուսերաւոր) կամ ապար, յորմէ սպարապետ, կամ թէ դեռ չէին նուաճեալ ընդ իշխանութեամբ Պարսից: Ամմիեն.  
Գ. 4. Եր. 405-406 ընդ օդնական զօրս Հայոց : Սակաց եւ Սակիսենաց զորս խմբեաց Դարեհ Կողոման յԱրել ի ճակատ ընդդէմ Մակեդոնացւոյն դնէ նաեւ զԱղվանս: Պիհն այսպէս խօսի զԱղվանից «Planitiem omnipotem a Cyutto usque, Albanorum gens tenet» — յախանց Կորդ զետոց սկսեալ զբովանդակ դաշտն Աղվանը ունին: Պատողեմէ առաջին եղեւ որ արար տեղազիր Աղվանից, զոր համառօտեմք աստին: Բայտ նորա ընդ մէջ Աղվան (յորմէ Հռոմացեցիր արարին Այբանիւս) եւ Կասի զետոց էին չէնր վեց, յորոց Կորադան երեւի լինել արդեան Կարսրդայ կամ Խորանարդն, ( զոյ և Կորդուրան զետ) ։ Քաղացանէ այժմեան Շօրդաղն. Մեղիան է այժմեան Միազիս արօտասեղին. Կասրադան է Կապաղայն Մովսիսի. Կաղանկացուացւոյ. Ա. 26. զի եւ բովանդակ գաւառն կոչի ցարդ Պապալայ. Ալտօս է այժմեան Կաղամ. Բաղիատա անուամբ չիր արդ չէն ինչ, այլ կորեք ըերանց որ բաժանեն զմերին լեռնսողաշտն յստորէն՝ կոչին Բօղ-դաղ

բնակին Հոյր եկը յԱբախոց : Ընդ մէջ Կասին  
Հեր ( Կասիոս եւ Հերոս ) ղետոց ղնէ Պատղեմ,  
շնա երկուս եւ վերրարդ խթ առ ղետադերանքն .  
Տիառնան կամ Տիառլան է այժմեան Տօռլան .  
Տարիզական է Տարիկարդաց արօստվայրն . խել Այ-  
վանա ( ի բնաղրին է Գևըտ ) է այժմեան Աղվան  
զիաղն Շիրվանի, որք էին civitates Պատղեմի և  
Տիւ urbis Մելայի : Յոյս առեւ երերին ղետրն Աւ-  
շեհան, Տորիան եւ Գևոկչաց համեալ ի Կոր, հո-  
մարելի են Աղվան ( առ օրով մեղեցաւ արփանահեղ  
պատերազմն ընդ մէջ Աղվանից եւ Պամալիի ), Կասի  
եւ Հեր Պատղեմի : Պին յաւելու շորրարդ ինն  
ղետ Կամբիզ անուամբ զար ամանք առին ի տեղի  
Վիրասհասի, այլը՝ Եօրի, եւ կէսը՝ Գևոկչայի ( այս-  
ովէս կոչեցեալ առեւ դոլցն աղմաւու ). խել Աղվանն  
կամ Աղվանիւն, որպէս ասացաւ ի վեր անոր, է  
այժմեան Աւշեհան կոչեցեալ նաև Լարան ( յոց  
անուն կոչէր ի հնումին նաև Լարա ղետն Գևրմանից ):  
Ի Կոմիսաէ հոսին այլեւս երերին ղետը՝ Աբաս ,  
Հերդիման եւ Վիրասհաս : Պատղեմ, զմին եւ եթ  
յիշէ Առւան անուամբ, որ ընթացեալ ընդ Շիրվան  
Կեօղլու-սու անուամբ՝ թափիի ծովն Կասիից Աւ-  
շանս անուամբ : Ընդ մէջ Հերի եւ Առւանաց ղնէ  
Պատղեմ, շնա երկուս՝ Տելերս եւ Տեղրիս կամ  
Տիգրիս, զանուն առաջնոցն համարիմբ զամանել ի Տա-

լիան առ Առոր զեստով. զերկբորդն թէ, և ոյժմ  
առերեալ՝ նշանաբեմբ յՈՒ-Տիրազ զաւատին Փայ-  
տակարանի : Թառի թէ, Տիպրիան ՊատողԵմի քար  
զայթակղաքեան եան եղեւ աշխարհապլաս մերոց և  
սպասմաբանից, որոց խարեւող ի մերձաւորութենէ  
Ճնշման տրա ընդ Տիպիախին Վլասց՝ զՓայտակարան  
Հայոց տեղափոխեցին ի Վիրու և զհին Տիպրիան  
Աղվանից չփոթեցին ընդ նոր Տիպիախին Վլասց, որ  
յամի 469 հիմնեցաւ ի Գորտ-Ալալանայ Վախթան-  
գայ : Ապարէն Տիպրիան Փայտակարանի Ճնազոցն  
էր բան Վլասցն զանէ 5-600 ամօր. և անոն երկո-  
ցունցն ծաղի ի տեսազի ( ջերմ ) բառէ, Ալալաց-  
զի և Տիպիան Վլասց ելանէ, անշուշտ ի Տպիլիս ( բա-  
լարի ) բառէն, որ նշանակէ բաղադր ջերմեց :  
Տողիլիս անոնն բաղադրմի եւս զոյր ի Կոմիզիլիս և  
կղզի մի առ Եվրաստա, սասպէս և տեսազից ջերմուկն  
Ռունեմից. և ամեներին տրա զնոյն երեւին աննէ-  
զծագումն : Յայս սակա և զՏիպիան Աղվանից հարկ  
էր մերոցն ոչ ի Վիրու. ոցի չըթակացս Բաղդայի որո-  
նել առ դան ցարդ ջերմուկը :

Եւ միոր զարմասցի ընդ անհետանալն Տիպրիաի  
և այլոց շինից Աղվանից. վասնզի ոչ զոյին առ  
նասա ոչ արտեսա աղխամարկութեան և ոչ  
գաղատափի, ամենոյն շէնք երկրին զորով ի հում  
աղիւսց և գեղեգանէ, յորս բանեալ ի ձմե-

բայնի՝ լրանէին յամարայնի. եւ հեղեղքը լերանց կամ  
հուր թշնամեոյն բնաջինջ առնելին ի քիթիթ ել ական։  
**Մայրաբաղար** Աղվանիցն կարծի լինել ի հնումն  
**Աղվան** ի մերձակայս այժմեան Բագույի (բաղնեաց  
առան, թէեւ սցլք ստուգարանեն դայն բուն հող-  
մոց). որ եւ թուի լինել հինն Բագաւան։ Երկրորդն  
ի քաղաքաց աշխարհիս կոչիւր Կամախիս կամ  
Քամախիս, յորում չէ դժուարին ինչ նշմարել  
զարդեան Շամախի. այլ սիսալի վօլուեր, որ ի սպառ-  
մութեան մեծին Պետրոսի համարի զայն աթոռ  
արքայոթեան Մեղաց, եւս եւ նորին որբ առին  
զայն ի տեղի Ափուրսալօսի։ Խորենացին սղիսր ան-  
ցանէ բանիւր, յաշխարհազրոթեան իւրում, զԱղ-  
վանիսք ասելով թէ և ունի դաշտու արդաւանդս,  
քաղաք, բերդս եւ գիւղաբաղարս, գետս բազումն  
եւ եղեղունս հզօր։ Եւ դաւառք են, ասէ, այսորիկ  
Եխնիբեխ, Շաքէ՛ սատան ի Մարծալան դաշտի,  
Բաղասական եւ այլ դաւառս զորի Հայոց հանեալ են՝  
Շիկաշէն, Գարդման, Լողը, Զամէ, եւ ոյլ 20 դա-  
ւառս մինչեւ ցիստնումն Երասխայ ի Կուր գետ։  
**Մովսէս Կաղանեկայտուացի**, ի սպառմոթեան իւ-  
րում, յիշատակէ 15 զաւառս Աղվանից ամփոփելով  
զՓայտակարան, զԱրծախ եւ զՈւտի՛ նահանդս  
մեր։ ի 15 զաւառաց աստի ինունդն են ի սահմանս  
Հայոց մեծաց. ի մեայեալ վեցիցն ոմանիր եւ եթ

Երեխն ի բռն Աղվանս. որք եւ թուխն յայս օրինակ .  
1. Պարսկանք ( Պարծկանք գաւառն Արձախոց ) ,  
2. Կապազազ ( զուցէ՝ արդեան Ղապազ ) որ եւ  
ունէր մայրաբազաք Կապազ անուն . 3. Գարդման  
( գաւառ Ուտեաց ) 4. Բիրմուռան . 5. Փիւրոք .  
5. Մեծ Կուշնք ( գաւառ Արձախոց ) . 7. Մեծ  
իրանք ( գաւառ Արձախոց ) . 8. Կապիճան ( զու-  
ցէ՝ այժմեան Քեռողէշի ) . 9. Շակաչէն ( գաւառ  
Ուտեաց ) . 10. Արշակաչէն յորում էր քաղաքն  
Գանձակ ( գաւառ Ուտեաց ) . 11. Գլա . 12. Միջ-  
նարձախ . 13. Աղբիգ . 14. • Բուստի-Փառն ( գա-  
ւառք Արձախոց որոշակի յիշեալ ի Հ . Ղ . Խնձի-  
ճեանէ ) . 15. Սաղկու : Են այլը եւս այլ առ անորոշ  
զոլոց նոցա զանց արարաք : Առ ժամանակօք մերս  
պատմազրի մայրաբազաք Աղվանա-Հայոց էր Պե-  
րոպապատ կամ Պարտառ յՈւտիս առ Տրտու զե-  
տով ( այժմ՝ Թարթառ ) նորողեալ ի Վաչագանայ  
արքայէ : Բաց ի Պերողապատէ յիշատակէ նոյն  
պատմիչն այլ եւս քաղաքս եւ շնորհ կարդեմք  
սատէն ի տեղեկոթիւն Շնասիրաց : Զողաց ( Ճոր )  
ըւալ երեւմն կաթողիկոսարան Աղվանից, Բերդակ՝  
շինանիստ, Պիտուական՝ դաստակերտ, Աղվին՝ ( եթէ  
այլ իցէ յԱղվանէ ) սարբաւոյթ, Խաղիսաղ առ Լո-  
րնա զետով՝ ի սահմանագլուխա Վրաց՝ ձմերոց իշ-  
խանաց Աղվանից, Ա այունիք՝ բաղանիք, Պարահան,

Առաջին, Կապաղ կամ Կապաղակը, Եւուտ, Կա-  
զանկայստաց, Գեղամ, Յոի կամ Յոս, Գարսհոմ,  
Բեղ, Պրմանուշ, Ոստաց կամ Ոստակ ի Զդո-  
խեան հովտին, Մանուշ (այլ ի Պրմանուշց),  
Ուրաթացր, Գիտ ի մօրուտո Ուտեաց, Բազայեատ  
կամ Բազայստատ, Ամարաս, Բազասական, Շորէ-  
բազար, Գարգման բերդ, Գարբանդ բերդաբազմար,  
Զարարերդ (ուղիղ եւս՝ ջրարերդ առկարաբազեալ  
դուցի ջուրց), Ենիրացբազմար, Տղրակերա (ուղիղ եւս՝  
Տղրանակերա), Շիմարար ի գաւառին Մեծ Խրա-  
նաց, Գանձակ բազար (այժմ Եղբայինալու )  
յԱրշակաշէն գաւառին, Խոչչենոյ բերդ, Հանդաց  
բերդ, Հաւախազացին, (Հաւախազացին) բերդ +  
Զուանքեր՝ պատմիշ Վրաց, գիէ յԱղվանոնա և  
Մոխրաբերդ, Խունան, Ճերանոյ բերդ եւ Շամբոր :  
Հ. Դ. Խնձիճեան, ի ստորագրեն դշին Հայստան  
շոնէլով ի ձեռին զԼազանկայտուցին՝ բազմաց ի  
սոցանէ անդէտ մնացեալ է, և անկեալ որեք որեք  
ի վրիպակս, թէ եւ բազմաքիրան ձգնութեամբ  
թարթափեաղ ի զիրսայլ՝ զտեալ է անուսան բազա-  
րաց և վանորելից սցրոց որ պակասէին ի Կապանիայ-  
տուցին զոր օրինակ . Գանձատար, Խոխանաբերդ,  
Համերը, Փայտակարան, Վարդանակերա, Մած-  
նարերդ, Կածարեթ, Երբ բերդ, Գագ, Լորտ,  
Տուտ, Ասհատ, Հայրատ, Սանահին, Գասնոյ անա-

պատ եւ Խորանաշատ : Ամանը ի վանորելից առաջ  
յետոյ կանգնեցան բան զԱսղանկայտոցին . ոյլը  
եւս էին ի բուն սահմանս մեծին Հայոց որում տիրե-  
ցին սակաւիկ մի Հայկազոն թագակիրը Աղվանից  
զինի զաղաքելից Բաղրատումեացն յԱնոյ : Կի-  
րակոս . Ա . Գանձակեցի . Եր. 113-114 ասէ Ա իրոյի  
իսթողիկոսի շնեալ յիւ դարու բաղարս վեցյանուն  
Շամթոյ՝ որդւոյ Զերու-իսարանոյ Խաղբաց, ինու  
զՇամթոս, զՇարի, զՇափան, զՇամախի, զՇապօ-  
րան : Թմբեւս բան Գանձակեցւոյն սասց իցէ  
նկատմամբ ունաց՝ ոյլոցն կանխաղոյն դողով բան  
զԱ իրոյ, որդ զացէ նորողեցան ի ձեռն նորս : Առ  
այժմ բաւականացուք որ ինչ զքեցան, զայլոցն  
բան լիցի դարձեալ ի ծանօթ ոթիւնս :

Եսլիակալուստրանը Աղվանից էին Բաղայետակու  
Բաղախոսու, Կապաղակ, Ամորսու, Բաղատական,  
Շարէ, Գարդման, Վեճ Կողմանը, Պարծանը,  
Յուշի : Ա անորացը անուանիք՝ Կոտորոյ կամ Կո-  
տորոյ վանք ուր ոյրեցան կտակարանը եւ կտա-  
րեցան 3870 վեցը, Յովհաննու վանք, Կարմեղենոյ  
անուանու, Կաղանկայտոցի վանք, Տղրակերուոյ  
վանք, Աղածախոյ վանք, Գաոյ վանք, Յովհենիոյ  
վանք, Ներս-Միհրի վանք կամ Զբկշտիկ, Խորո-  
ձոր կամ Թաղեի վանք :

Մասողի՝ պատմաղիր Արարաց, ( ծաղկեալ

յ944 ամի ) գնէ յԱղվանս դաւառս երիս. 1. Կայ-  
զաղ ի հիւսիսոց Պարբանդի, որոյ մայրաքաղաք էր,  
ասէ, Ամանղար՝ հիմնեալ ի Նուշիրվանոց, ուր  
նստէրիսաբանն Խաղրաց. այլ յորմամ Աաղման՝ որ-  
դին Ոստիրի, տիրեաց գաւառիս, խաբան փոխեաց  
զաթոռ խր յԱտել շինեալ առ Աօլգացիւ : Խրն-  
չէ յկալ յաւելու թէ Ոսուր կործանեցին զԱման-  
դար յ969. որք եւ արշաւեալ անտի յԱղվանս՝ արա-  
րին, ըստ շարունակողի պատմազրին, մերոյ, քանդ-  
մոնս եւ կոտորած ոչ սակառ : 2. գաւառն է, ասէ,  
Արիր (գահ) յարեւմուսա հիւսիսոց Պարբանդի,  
հեռի երեք օթեւանօք : Խշանն Արիրաց, ըստ Մա-  
սուղիի, քրիստոնեաց էր եւ կոչիւր Ֆլան-շահ, եւ  
բնակիչըն երգը 12,000 : Հուալ առ Արիր էր, ըստ  
Նորա, Զերեհ-զռան (զրահարարք, արդ՝ Քեօրէ՛շի) .  
3. Ըստնազաւառն է Կումոխայ ի հիւսիսոց Արիրայ եւ  
յարեւմուց Կայդաղաց, որոյ բնակիչը քրիստոնեաց  
էին եւ վարեին յայնժամ տանուտէրամբը : Ընդ այս  
ձգի, ասէ, ուղին որ հանէ ի տէրութիւն Ալանաց ,  
որոց թազաւորն կոչի Կերկենդուղ կամ Կերկե-  
րենդաչ, եւ թազուհին իւր՝ Մաղոս. ունի 30,000  
այրուճի : Մինինախորդաց սորա, ըստ Մասուղիի,  
թողեալ զկուապաշտութիւնն՝ հաւատաց ի Քրի-  
տոս . և ասդայամին 932 ուրացեալ և զբրիստոնէու-  
թիւնն՝ հալածեաց զերիցունս :

Աւանդետ. Ուստի որդի Աքզուլ-Ուահմանայ, պատ-  
միչ Աղվանից ( Շիրվանի ), նոյնակէս բաժանէ զեր-  
կիրս զայցյերիս զառառու. 1. ի Դաշտ. 2. ի Զե-  
րեխ-զռառն. եւ 3. յԱվար. իսկ հեղինակն Պար-  
բանդ նամեն սկզբէ թէ՛ Խակենդիր ( Աղեքսանդր )  
եւ Կուշիրվան բաժանեցին զայն ի և զառառու՝ ի  
Պեղպախ, ի տէրութիւն Թառմանշահի, ի Խացղաղ  
եւ ի լեռնացին Կումուխ. սակայն արդի սկառամա-  
գիրք բազում փաստիւր ցուցին թէ Մակեդոնացին  
եւ ոչ յերազի ետես զաշխարհն զայն : Գնդապետն  
Աքաս-զուլի խան Բագի-խանով, որ առ մեօք զը-  
րեաց զպատմութիւն Պաղասանի ( Աղվանից ) շիո-  
թեաց զՎեկս կամ զԼազի-Կումուխս ընդ ծովե-  
զերեաց թասթարացն, որք, որպէս յայտ է, յերեք-  
տասաներորդ դարուն մուտ կալան յաշխարհն յայն.  
իսկ Կազի-Կումուխը իբազմաց հետէ բնակելին անդ.  
եւ սկառնառ անուանակոչութեան նոցա այս ինչ  
համարի. յորժ ամ յԲ. դարուն ( 737 ) Աքա. Ազիմ՝  
զօրսավար Եղիս Բ. Խաղիֆային, արշակուց յԱղ-  
վանս եւ քարոզ եկաց Մահմետականութեան,  
Ղեկը ( Ղեղիկը ) աշակերտեալ նմա՝ կոչեցան Կո-  
ղի-Կումուխը ( ախոյեան հաւասար բնողդէմ կու-  
մուխաց ). իսկ Բարսդիկը ( այսովէս կոչեցեալ յանուն  
Բարս լի բաղադրին Կումուխաց ) վասն մերժ ելոյ զնա եւ  
զդեն իւր՝ կոչեցան . Բեռնիդիկ. Կումուխը : Ղուպայ է

արեւմոնեան դաւառ Աղվանից բաժանեալ ի վեց  
զատասակը՝ Բուղուղի, Խաղբենի, Վուսպոյի, Շապ-  
րանի, ձգեալ զերելին ախամքը Ատաց գետոյ, Բարսմակի  
և Անիկադարաց . Երկրին լեռնուտ է Իրամ կաւուտ և  
անյարմար վարուցանի : Բնակիչքն զրավին դուա-  
րածոթեան, մետաքահանութեան, մշակոթեան  
սոտքարեր ծառոց, շինեն զէնա և սպատրաստեն  
ներկը. և Իրանայր գործեն օֆոց : Հրեայր և ս  
մշակեն ծխախտա : Բնակիչքն են Հայր, Պարախիր,  
Լեզլիր, Թաթարը և Հրեայր : Պատրաստանցիք  
սկսեալ ի Վաւարայէ մինչ ցղեսան Կոյսու Անդիս  
և ցԱռւակ իսահմանս իշխանութեան Շամիսալի,  
կոչին ի մերոցն Ղեկը, ի Պարտից Լեազլիր :  
Սարագան. ԺԱ. 7. ՊՄ. Զ. 18. Պլուտարք. Հատ.  
Պ. եր. 287 և սցլր յիշաստակեն զմողովուրդս զայս :  
Խորենացին . եր. 158. խօսի նոյնակէս զԼազլիիս ի  
կողմանս Փոնստոփ ( Լազլատան ) և եր. 458 և  
460 զԼեկաց որոց սպատկաւորն Շերդիր զրգու-  
թեսմք Պարախից յարձակեալ ի Հայս՝ սպանաւ ի  
Սպանդարաստաց :

Գառառն Ճարօ-Բէլօրանայ է արեւմոնեան սահ-  
ման Աղվանից, ուներով լերինս Գաղար և Պազ-  
Մուրով յարեւելից, զղետն Ալազանյարեւմսից,  
զղուտոնն Կոխուց ի հարաւոյ և Կորողորան դետ  
ի հիւսիսայ. և բաժանի ի զատասակը Բէլօրանաց :

Ենիսաւի և Լովառյի : Թիւ բնակչացն է 9,969 լրդ .  
յորոց 4,376 Լեզվով , 3,940 Մալալը , 1,545 Ան-  
կեցյր այսինքն ուրացող քրիստոնեաց : Ճար  
( Ակրեւո՛ ի Շումի Ճոր , Չող ) կամ Զարաստրիէ  
մացրաբաղար գաւառին : Մեծաղոյն մասն բնակչաց  
գաւառին դՅմարին ունի զգեն . արբ և կանայր  
ի միասին ճաշեն , եւ յետինքս շրջին բացաւ երեսօր  
հակառակ կը օնիլից Մահմետականութեան : Տանր  
խրեանց բարաշէն են եւ սիխու յայդեստանա խաղո-  
զոյ և ԱԲԵՆեաց :

### Տիւրբիւն Արվանից :

Զնաբինի պիճակիէ ոցսր Ժողովրդեան չունիմասել  
հաւասարի ինչ և կորպաւոր , զարմէ լսաթեամի՞ ան-  
ցինաս և ողառմիչք մեր և օսարբ սոհնասրակ :  
Խորենացին եր . 120 յիշէ զԱղվանս իրը 550 ամօր  
յառաջ բան գլուխասոյրեամ Տիւրբան Ա . Ժողո-  
վաց զօր ի նոցանէ ընդդէմ Աժդահակաց , սորս  
ոտ Ալաղարչակառ որ կացոյց նոցաւ կուսակալ զԱ-  
սան . այլ հարցաւաէր մասց անհարինէ բառակա-  
նանալ դոյզն բանիւրս հայեցեալ ի նոցին հնութիւն  
որ ի վեր ելանէ , զէթ 1900 ամօր նախ բան զգալ  
Փրկչին՝ համարեալ դիսաւ սերեալս ի Ալասկաց :  
1. Աթէ արժան իցէ հաւասակ Զուանքերին Վ բաց  
Ժամանակակրկէ , Քայլուու և Մովկան կացին առա-

Հին աղջապետք երկրիամբն չդեռ անմարդաձայն  
էր Կոմիաս . որ եւ այսպէս զրէ : Եւ Բարտոսայ ետ  
ի նոյն գետոյն Բերդահոնց առ կողմամբն Կուր  
գետոյ մինչ ցծովն ( Կասպից ), յոր մոտանեն ի նա  
Երասխ եւ Կուր գետը միաւորեալը : Սա նաև չի-  
նեաց զՊարտու անուամբն իւրով : Խակ Մոմիանայ  
ետ ի Կուր գետոյ առ կողմամբն հմաժայ առ դըւ-  
խովն Ալաղանայ մինչեւ ցծովն մեծ . և նա չինեաց  
զՄոմիանէթ քաղաք : 2 . Կախնական անուն  
աշխարհն Աղվանից թոփ լինել , որպէս ասացաւ  
ի վեր անդր , Առան կամ Արան ( բայնարար առեալ ,  
որ բաց ի յիշեցուցանելոյ զանուն Առանայ կու-  
սակալի ակնարիէ նաև . յԱրեաց աշխարհն . զի  
ըստ Գոյերի ( Goertes ) ոչ միայն Արիր . այլ նա եւ  
Պարար , Մեղացիք և Ասորիք ելին ի Կոմիասէ սրի-  
ռեալ ընդ արեւելու : Առան կոչէ զԱղվանա նաև .  
Հ . Վ . Խնձիմեան ի ստորագրութեան Հին Հայա-  
տանի . եր . 304 եւ 310 առեալ ի յիշաստակարանէ  
Պատաստանազրոց զօշին Մխիթարաց . սասպէս մին  
ի գառառաց այնորիկ կոչէր տակարին յԼ . դարուն  
Մեծ Խրանք : Հայք Արարատայ Արան . կոչեն ընդ-  
հանրասպէս զամենայն դաշտազետին , եւ դորսն  
զամենայն լեռնադաշտ : Ա . յս խակ էր թերեւս բռն  
սրատճառ բաժանման հին Պարսից յիշան և ի գու-  
րան որպէս թէ ի դաշտային եւ իլեռնային Պարար :

Յոյժ հաւանական երեւի տիրելն Արքամաց , Տիգրա-  
նայ Ա. Վաղարշակայ , Արքաշեսի , Տիգրանայ Բ .  
Եւ այլոց ոմանց Աղվանից : Սուրբն Տրդատ խոր-  
տակեալ զապատահութիւն Աղվանից՝ վերատին  
տիրեաց նոցա եւ ձգեաց զոէրութիւն մեր մինչեւ  
ցատհման Մասպթաց . Ազաթանգ . Եր. 593 : Այլ  
յետ մահուան նորա եւ Արշակայ Բ . ոչ միայն  
Աղվանիր չկացին ընդ մերով տէրութեամբ ոյլ եւ  
Հանին ի մէնջ զՈւտիս , զԱրձախ եւ զՓայտակա-  
րան նահանգս մեր : Յառաջազոյն եւս յորժամ  
Հայաստան կոյրընդ ընդ Ասորեստանեաց , Բագ-  
տրիացւոց , Պարսից եւ Մեզաց , թոփ թէ եւ Աղ-  
վանիր բաժանորդ զտան ճակատազրոց մերոց նախ-  
նեաց թէ եւ ունելով իշխանա ազգային պանեալ  
արքայական տիտղոսիւ որպէս այժմեան պետք Հնդ-  
կաց : Զասացեալս հաւաստէ եւ Զուանթեր որ  
զԱղվանս համարի անկեալ ընդ տէրութեամբ  
Պարսից ի ժամանակս Պիշտապեան կամ Քայօ-  
մորեան ցեղին զոր կոչէ Քէկապոս , և զՊարրանդաց  
հիմնեալ ասէ յԱղբամաց՝ սրարսիկ կուսակալէ :  
Ամին նմանյաւորս Գարեհի Վշտապեաց , Քաերը-  
սէսի եւ Գարեհի Գ. ( 521-336 ) սրատմազիրք  
Յունաց եւ Հոռմացեցւոց ցուցանեն զԱղվանս լեալ  
ընդ իշխանութեամբ Պարսից : Պո պէ՝ զօրավար  
Հոռմացեցւոց , բայտ Պլուտարքի , եւս նոցա ճակատ

սաստիկ 60-70 սմօք նախ քան դՌիքստու , եւ ոչ  
իարացեալ յաղթել իացոյց առ սահմանօր նոցա  
րէգէռն ի սրահամութիւն սահմանաց հաստրակա-  
պետոթեանն Հոռմաց : Յառաջին դարուն Քրիս-  
տոսի Առվանք վերտափն անկան ընդ իշխանու-  
թեամբ Պարախց . և Սայուրմակ՝ արքաց Արաց , առ  
ինութեան զգուասր սրագակիլ կուսակալին Պարտա-  
ւոյ : Յերկրարդ դարուն Արտաշէս՝ Թագաւոր  
Հոյոց (ըստ Զուանիքերի) , ամրեաց Կամբէճի ,  
Շունդացւոց (Շովզէացւոց կամ Զուդաց) , Արաց  
և Օսից համանգամացն , եւ կանդնեաց զԱսցիսէ  
բերդագաղար ոչ հեռիյնօր դետոյ . այլի հետեւեալ  
դարուն Միհրան Սասանեան նառեալ յաթոռ  
թաղաւորոթեան Արաց՝ ամրեաց Պարբանդոյ ,  
Հերեթի , Ռասնաց և Մովկանաց , զորս վերտափն  
զրաւեցին Պարտր առ Խոսրավու Բ : Եւ ի իւմն Դ-  
դարուն յաւարի առին զաշխարհս զայս Օսր՝ ելեալ  
ընդ դուռն Շարբանդոյ : Ճոխոթեանն Սասանեան  
իրեւ տիրացաւ Պարախց փոյթ կալաւ հեռաւառեա  
քաղաքականութեամբ ապահովել զաշխարհ իւր ի  
հիսոխոյ . յայս սակա զանուպան հասրիսք մարթա-  
ցաւ նասուցանել յաթոռս ոկեստոթեանց Հա-  
յոց , Արաց և Աղվանից զաղղացինս իւր : Հայր  
վաղ մերժեցին յաշխարհէ մերմէ զՇապտհ Ար-  
տանեան . խոյ են . զ . 55 . այլ Այրք և Աղվանիք

կացին Ժամանակս յուղի ընդ նոյն հարաստեթեամբ :

Միհրան Սասանեան եկեալ յԱղվանս 30,000  
Արդիոք ի Ե. գարուն՝ տիրեաց այնմ բարձեալ օրով  
զԵռան-շահիկ (Այսան-շահիկ) Հոցկաղունի իշ-  
խանսն. և եղ զամոռ իւր ի Միհրանան քաղաքի :  
Ապա ինսամաթեամբ խառնեալ ընդ բնակիչու աշ-  
խարհին՝ աշակերտեցաւ քրիստոնէական հաւատոց,  
և բաշխեաց զերկիդն յաւագանփա իւր : Այսպէս  
ուստրիկն Քարոյեան (արքունի ցեղ ուստրիկ) կա-  
զա զԼապաղակ. Բատի Հրահատեան յԱտղապատա-  
կանի նախարարացն՝ զԼողիժ. Ա ահան Ա արագ-  
Յովհաննեան ի Մաղիանացւոցն Պարսից՝ զԼամբե-  
ճան. Ուստում Ա արագ-Ա քոյեան յԱտահը դաւառէ՝  
զՈւտիս. Կաղանկայտ. Բ. 17. Գ. 10 : Խոսրով Ա.  
Նուշիրվան, յանուն որոց թերեւս երկիրս կոչեցաւ.  
Եիրվան, ելից բաղմամարդութեամբ եւ շնութեամբ  
զաշխարհս. եւ եւ նորողել յամին 635 զահադին  
սպահակն Մաղողոց միսեալ ի Պարբանոցայ մինչ  
ցլեառն հանդիալոյ առ ի արգելուլ զարշաւանս հիւ-  
սիսայնոց : Տիեզ . սպատմութիւն Կեսար Կանու.  
Հաս. 7. եր. 93. ոյլ յետ ի վերաց անցանելոյ ամաց  
իրր 100 Զերու խարան (թադաւոր) Խաղբաց, աի-  
րեաց Աղվանից, Լ գնաց եւ Չողացի, եւ արկ ընդ  
ջոկ ծառացութեան իւրոյ զՄիհրանեան իշխանս  
երկրին : Կ մէջն Բ. գարու Արարք մուտ զոր-

ծեալ յացս երկիր՝ կաղան նախ ի ձեռն բնիկ իշխան-նացն. ապա յընչաքաղց բարո խրեանց յառելեալ զմոլեռանողութիւն եւ զյափիշտակութիւն՝ յինքեանս կորդեցին զ Պարբանդ, զ Շամերու եւ զ Պարտաւսեր-մանելով ի նոսա սրով եւ հրով զկրօն խրեանց. եւ հրէն Բուզայ լուսց արեամբ զգաւառն Պարբան-դայ : Աս եհան անտի բազմաթիւ Խաղիրո, զորա-տարեալ բնակեցոյց ի Շամբու, յորոց իջանեն թեր-և այժմեան Խաղախոք Աւտեաց :

Յերեսաց այսրան շվտթից, սպանութեանց, զե-  
րութեանց եւ կրօնափոխութեանց անհետացս  
զրեթէ բոլորովին յաշխարհ, ո յայտանէ բոն ժողո-  
վորդն Աղվանից կամթէ հազիւ զերծեալ պահեցան  
այսր անդր սակառաթիւ երդը ինչ. եւ մեծաղոյն  
մասն բնակչաց երկրին կացին, մնացին Հայր, հաւա-  
տացեալ Պարսիկը եւ Ռւտիք, որք թէ և կոչէին զին-  
քեանս Աղվանիք. այլ բարր, սովորութիւնիք, աւան-  
դութիւնիք եւ կրօնիք նոցա էին հայկականիք : Ասա  
բնակին նաեւ յանցիշտակ ժամանակաց հետէ  
Հրէայր, Խաղիրք, Լեգիիք եւ այլ լեռնական ժո-  
ղովուրդը, կէս մի քրիստոնեան, կէս մի մոխանեան,  
կէս մի կրտակասրաշտ եւ կէս մի մահմետեան կրօնիք :

Տոհմի Բաղրատունեաց ի 1,500 ամաց հետէ զաղ-  
թեալ ի Հայս, եւ հասեալ պատուոյ նախարարու-  
թեան՝ բարիոք տնտեսութեամբ իւրով ոչ միայն

զիզեալէր ճոխտ թիւն ամրառ եւ ստոցեալկալուածս  
անհուն + այլեւ խմաստուն կենցաղավարութեամբ  
յինքն յանդոցեալ զաէր Հայոց, Այսաց եւ Աղվա-  
նից : Ապաքէն խաղիֆայութիւն Այսարաց, նաև  
ի ժամանակի բուռն տիրողութեան իրոյ, եցոյց թե-  
րութիւնս քաղաքավարութեան կրելով յինքեան  
գուրմին ապագայ խօմութեան եւ կործանման :  
Բաղրատունիք եւս իշա՞ անձանց եւ Հայաստանի  
վարեալ զթերութիւնս տէրանց խրեանց՝ կանդնե-  
ցին յամին 885 զաթոռ թագառորութեան Անոյ  
տիրելով Այսարատեան, Գուգարաց, Ռւտեաց եւ  
Ասակուրական աշխարհաց : Յօրինակէ աստի խրա-  
խուսեալ իշխանացն Արանեաց եւ Աղվանից՝ նորա-  
ւու թօմտիկեցին յանձանց զլուծ Այսարաց : Աս-  
ղիկ եւ Օրբելեան յելս Թ. զարուն առեն զՀամա-  
մայ թագառորեալ Աղվանից : Գաւառն Ռւտեաց  
ի Ժ. զարուն կանդնեաց զլուսակ անկախու-  
թեան իրոյ ի ձեռն իշխանաց իրոց Մոփիսի,  
Ֆիլ - Ամրամայ եւ այլրոց : Ի նմին զարու ան-  
տանի եղեւ Փիլիպպուս՝ արքայն Աղվանից, որ ըստ  
Ամբատայ սպարապետի . Եր. 22. եկն յ962 ամի  
քառասուն եալ սկսուսօր յօծումն Գաղկաց Ա. յԱ-  
նի : Ապա Կորիկեան Բաղրատունիք Լուսուց դո-  
րացեալ օր ըստ օրէ՝ կարան դրույր Սոմիսիթ, զթիֆ-  
թիզ եւ զարեւելեան հարաւոյ մասն Աղվանից : Ճարու

անուանի եղեւ. Պատիմ. Անհողին որ եհար յամին  
1056 զԱպուավար՝ ամիրայն Պարսից, և տիրեաց  
12 բերդից և բազարաց յաջակողմին Կոք գետոյ.  
խել Պարբանդ, Բագռ, Կուխի և այլքաղաքք բուն  
Աղվանից մասցին միշտ ընդ իշխանութեամբ Արա-  
րաց, Պարսից և այլոց : Գանձակ և յետ մազոյ  
ամս իրր 120 առ Շատատիկեանա՝ անց առ Պար-  
սիկս : յԱղվանահայս տիրեցին մինչև ցելս Ժ՞ի՞ դա-  
րոն, և այսր ևւա, հայտղդի իշխանք, որք բարձան  
բոլորովին յելս Ժ՞ի՞ : դարոն, և երկիրն անկառ փո-  
փոխակի ընդ իշխանութեամբ օտարաց : Մէլիր շահ  
Աղջուկեան ի ԺԱ. Պարոն նուաճեաց ընդ խրեա  
զմանն ինչ Աղվանից և զբերդն Շամշուդու : Խ-  
խանն Շամախույ առ տիսոլոս Շիրվան շահի, և  
Առանին կողմանալազն՝ Աթարեկին զորա եհար Պա-  
րթ Բ. վերանորոգիչ ասացեալ արքայն Վյաց և  
տիրեաց կարճօրեաց Շիրվանի, Շամախույ, Պալմա-  
տանի, Պաղսց, Տէրունականի, Գաւարդինի, Պայ-  
շաճորց, Պուտոցի և այլն :

Առ ի ուղղել զխոսորումն հաւատացեալ ժողո-  
վրդնան խրոյ, երեւի թէ, Կախավանամութիւնն յա-  
րուցանէր անդադար խուժս և զուժս ի չորից ծա-  
դաց աշխարհի իրր գաւաղան խրասու : Պարսք և  
Այարք թէ, և ողողեցին արեամբ յԱղվանա, ասկայն  
արարին անդ դռնէ չինութիւնն ինչ և ձեռնուու

և զեն բարդաւաճանաց երկրագործութեան, վաճառ-  
ռականութեան, արտեստից եւ գիտութեանց . եւ  
Պարտաւ հանդիաանայր ձեմարանաւ իւրով եւ դրա-  
տամրք իրեւ հիւսիսացզն ի նաևմացեալ դարն մի-  
ջին. այլ որ դեմի նոցա երեւեցան վիմածք Թուր-  
քաց եւ Թամիմարաց, բոլորովին անհաղորդ մարդ-  
կեղին զգացման եւ քաղաքական հրահանգաց, իրեւ  
վայրի գաղանք աւերեցին եւ ապականեցին անե-  
նայն ուրեք ուր եւ կոխեցին սմբակը ձիոց նոցա :  
Այնուհետեւ քրիստոնեաց իշխանք բարձան յԱղմա-  
նից, եւ խառնուրդ իմն Պարաից, Արարաց, Թուր-  
քաց և Թամիմարաց կալսա զնոցա տեղիմինչեւ ցդարձ  
ԺԶ. յորում Օամանցիքընդ զօրավարութեամբ Լա-  
լաց փաշացին ափեցին Շամախուց, Պարբանդաց և  
Կոմիտուց : Ի 1579 Ամիր Համզայ, զօրավար Պար-  
սից, կոսորեալ զՕամանցիս՝ վերստին կարու զԱղ-  
վանս : Յետ սակաւուց Օամանցիք ի նորոյ սովին  
զաշխարհս զայս եւ ի նորոյ հաղածեցան ի ՇահԱրա-  
սաց Ա. որ եւ կործանեաց զՇամախիսի եւ զայլ քա-  
ղաք : Մեծն Պետրոս ափեւաց յամին 1722 Պար-  
բանդաց եւ Բազուտաց յորժամ զնույր յօդն Շատթի  
Արանուց որ կանդնել ձգներ գուերութիւն Հայոց, այլ  
Աննաց կայսրուհին դարձոյց զայնա Պարաից :

Յամին 1798 Պարաֆ Զուրուին վերստին կազա-  
զՊարբանդ, զԲաղդատ, զՇամախիւ զՊանձակ, այլ ի

սակամահուան Եկատարինէի Բ. կայսրու հույ Ռուսաց,  
վերատին Ելիք զայնս : Յամին 1804 Ռուսք կաղան  
զիշխանութիւնս Ճարո-Բժշկանի եւ Ելիտյի . ի  
1805՝ զիշխանութիւնս Շամախույ եւ Շաբռույ . ի  
1806՝ զիշխանութիւնս Դարրանդույ , Բագուայ ,  
Կազի-Կումոխայ եւ Ղուպայի . եւ ի 1813՝ զիշխա-  
նութիւնն Թագիչի : Եւ ըստ սրբածանին հաշտութեան  
զոր արարին Ռուսք ընդ Պարսից ի նմին ամի ի  
Գիշխատան , Երասխ կացուցաւ սահման ընդ մէջ  
երկուց սկսութեանցաւ . եւ Աղվանք հանդերձ առե-  
րարի հազարասոր քաղաքաց , սահմանաց , բերդից ,  
վանորէից եւ եկեղեցեաց աղքատեալի մահմետական  
հրէշից անցընդ տէրութեամբ բրիստոնեաց կայսերու-  
թեանն Ռուսաց . եւ ժողովուրդը սկսան ուշարերիլ :

### Հոդ Աղվանից և բարեբերութիւն :

Զիք ի սահմանս Կոմիքաստ երկիր ինչ այնալէ ս  
բերրի , յարմար դուարածութեան և առեւտրոյ որ-  
պէս Աղվանք : Գետափունք Արոյ և Երասխայ  
մատակարարեն դաշտի մշտականաշ և սրբարտ-  
ըստնածիր գաշտը երկուստեր գետոցն երկոցոն եւ  
սյլոց ընծայեցուցանեն անդս եւ մարմանդս ար-  
դաւանդ ի մշակութիւն արմանեաց , սրբարեր ծա-  
ռոց , խաղողց , քրբմեց և տորսնի . հօրք բաղմաթիւ  
բղանեն նաւթ սեաւ և ձերմակ դօրհանարադ .

գետք սնուցանեն ձկունս առաստ և ոռողջն զանդառ-  
տանս. Տմակը լերանց ընծայեն ող զով յերեսաց  
խորշակի դաշտաց, եւ խորք Երկրի՝ մետաղս այլ եւ  
այլ, մանաւանդ, երկարթ ի գործ հերկի և դիմոց.  
Ճովն Կասպիական՝ ասպարէղ բայնածառալ նաւա-  
զնացութեան : Առանո՞ք զիսց առից որպէս զի  
Կազանկայտուացին ինքնին բոլորեացէ զնկարագիր  
իւրոց հայրենեաց. որ Գիրք Ա. Գլուխ Ե. այսպէս  
խօսի ։ բարեկայելու և ցանկալի է աշխարհն Աշ-  
խանից ամենազիւտ շահիւր . . . և զետն մեծ Կուր  
Հեղասահ զնացի ք բերելով յինքեան ձկունս մեծա-  
մեծս և մանունս՝ ձեմելով զայ, անցանի, անկանի  
ի ծովն Կասպից : Եւ որ շուրջ զնովան ևն դաշտք,  
զըստանի ի նոսա հաց և զինի շատ, նասթ և աղ,  
ասպեշում և բամբակ և ամբաւ ձիթենիք : Եւ հա-  
տանի ի լերանցն ուկի և արծաթ, պղինձ և զեղնա-  
խունկ : Եւ որ ինչ վայրենիք ինչ՝ առիւծ, ինձ,  
յովազ, ցիո. և ի թռչնոց յոլովից՝ արծովիք և բա-  
զէք եւ նմանք նոցին . . .

Ուշադրութեան արժանի է մետարսն հայկական  
Աղվանից յայսչափ հին դարս, եւ զզենուն կանոնց  
հովուաց մերոց աշխարհի զմետարսեղին ի զարսն  
յորս տակաւին Եւրոպիա ազանէր մորթ եւրուրդ, և  
տիկնացը Հռոմաց ի կշիռ ուկւոյ զնէին զապրեշում.  
եւ մշակութիւն չերտամին հազիւ մուտ զործէր

ի Բնականութանառ Յուստիանոսիւ, ուր, որպէս սրբաւ-  
մի, ըերան ի Զինաց : Ապաքէն Եթէ մերայինք սիրէ-  
ին զիսսս աղջային, որարտէին ցուցանել եւ արա-  
ցուցանել թէ մետաքսն ի Հայաստանէ անց :  
ովտեցաւ յԵւրոպիա եւ ոչ ի Յունաստանէ : Մո-  
լան կամ Մովիկան որ եւ Բաղաստիկան է արօտա-  
ժայր ընդարձակ ուր բաժանին հօտք եւ նախիլք  
անթիւ չորրուսանեաց, եւ կեան ամրաւ բազմու-  
թիւն ունից եւ այլոց գեռնոց : Կերինը Շերիկանի  
ընծայեն մետաղ առատ մանստանոց երկաթ : Ի  
սահմանա Շիշի դեղի առ Ալաղանաւ դուռ յամին  
1816 հանր կասպարի . ի զիւղն Խնօ առ Խնօ գետա-  
կաւ, 67 վերատիք հեռի ի Կոխուաց, դասաւ յամին  
1819 հանք արծաթախառն կասպարի . յակունա Աս-  
մուրի, ի սահմանս գեղջն Կորումի, 60 վերատիք  
հեռի ի Կուսպայի, դասաւ յամին 1843 հանք արծաթա-  
խառն կասպարի . ընդ մէջ հանդուցայն հին Շամա-  
խաց եւ Մօրտղուոց, առ արբունի սրողուսային,  
դասան յամին 1818 նշանք մաքուր ծծմբոց : Զորքո-  
տանիք երկրին են նժոյգ ժիր, եղն, զոմիչ, ուղու,  
ոչխար, այծ, ջորի, էջ, ինծ, վաղր, ճաղար եւ  
այլն : Ի վնասակար սողնոց ունի օձ, մորմ, կարիմ,  
մէնխս, մշակ դարչելի եւ մարախ ուտիճ : Պիրախոր  
Կոնենեաց եւ մրգարեր ծառոց ձեւացուցանեն  
առ Կոխուաւ եւ յայլ տեղիս անստառս վիթխարիս.

բարեհամակը խաղողոյ կռուեալ ի ծառա՛ մաստակու-  
րաբնն զինի շառ . բամբակէ , մեսաւրս , բրբռմշ ,  
տարօն , ոլաստաւր , զորդ եւ զինք նշանաւոր են  
ի վաճառս երերին . արյնապէս եւ տֆիոն , աղ եւ բո-  
րակ : Որոր ձկանց կտոր եւ Երասխ զԼառց առաստ  
են յոյժ յոյժ . եւ ռերեն ամի ամի իրր միշխն մի փր-  
ռանգ եւրամուտ : Հոգր 82 բղիսնն դօրհանապաղ  
շուրջ զԲազուտ նասթ սեաւ . եւ ապիստակ , որ բաց  
ի մաստակարարեցյ բնակչացն վաճառ մեծաղին  
առանց աշխատութեան եւ քրտանց՝ մաստցանե  
նա եւ հուր առ ի մոռքել զազտաւ . եփել զիերակուր  
եւ սրաշտաղանել ի ցրոց : Եւ նախնի բնակը աշ-  
խարհիս ոչ կրարցեալ ի միտ առնուլ զարատանան  
երեւութիւն , եւ ի տեսականեն ի վեր ելանել բննուե-  
սանելի օրատնաւն — Աստուած , իրեւ ի տրիստր  
երախսուեցն ի սրաշտան առեալ օրատուեցին զտար-  
րքն զայն ջեր հանդերձ խորհրդական նշանաւոր  
խրովր — Այեւաւ եւ Կոտմիւ ( Միհր և Մահմիկ ) :  
Յայս մոլորաւթիւն զթեցան ոչ միայն Աղիսնը ,  
ոյլ նա և Հոգր , Պարար , Հնդիկը , Ասորիր և ոյլ  
աղղը հիւսիայ և ուրեւելից . զորս արացուցանեն  
ըստ Խմիր բազմամիւ մեհեամք հրապաշտու-  
թեան , զորոց զանուանու օրանեցին մեզ նախնի  
մաստենազիրք , զոր օրինակ . Հրարսու , Եօմնիու-  
րակեան բաղիմք , ԱՄՀի , Բաղաւան ( բաղենոց )

աւան ) Ապահովարան-ոլերուժ , Որմղղի-պերուժ և  
յիշատակեալն ի Ստրարոնէ հաշակառոր կռա-  
տունն որ իստհմանագլուխու Աղվանից և Արաց :  
Ոչ առաքելաջան մշակը Աւատարանին սիրոյ, եւ ոչ  
որեւանաբրու ոռ բն Կուրանիկարացին ջնջել խապա-  
յԱղվանից զարաշտոն Զյադաշտի . որինչ էրն 2000  
ամօր Աթշին Խորենացւոյն, նոյն է Եւայսօր Աթաշ-  
դաշն Բազուայտը փութ ան յերկարագութիւննուի-  
րական կրակին մոլորեալ որդիք հիւսիսի եւ արեւե-  
լից : Միեւ կէս ժամառ հետի ի բարձրէ, անտի ձգի դաշ-  
տըն աթրիուր ի փորակաց յոլովից ելանէ, հոր հանա-  
պազորդեան կամ զազ վառելից : Անդ կանզնեալ է ի  
Գերրից կամ ի Մողոց աստրաշան և վանր կրօ-  
նաւորաց որոյ մի միայն է զուռն յարեւելից կուտէ :  
Եւնք մենաստանին է քառակուսի և բռեալ ար-  
տարաւստ . ի միջակետին է սեղան զարդարեալ  
կռօք Բրահմանից և զմբէթ ի վերաց : Խ միջոց  
սեղանոյն և ի շորից անկեանցն խոզովակօք ի վեր  
վազեալ ելանէ նութն զիւրագառ որ մերձեալ ի  
հուր՝ վասի կապոյտ բոցով : Շուրջ զսեղանովն են  
20 խցիկը : Առ բազնաւու սպար առեալ կրակամոլ  
Հնդիաց եւ Պարսից զիրկս ածեն միմեանց ի ծա-  
զել արեւուն , ծո նր զնեն , ծնծզայ հարկանեն .  
ի միջորէի վասարանեն զհուրն նուիրական , եւ  
յել Եկոյի ախրութ եւամբ մտանեն յանկողին :

Աղանդն հրապաշտութեան, որպէս յայտէ, հաստատեցաւ, կամ՝ ուղիղ եւս, նորոգեցաւ ի Զրադաշտէ ( Զերզուշտ ի Պարսից, Զերզօշտրո ի Զանդից, Զարադայ ի Պահլաւայ կոչեցեալ ) առ Գուշդասպաւ ( Վշտասպաւ ) հարր Գարեհի Ա. որ եւ տարագրեալ ի Մակեղոնաց ոյն՝ վերանորոգեցաւ ի Սասանեանց. և բարձաւ ի նորոյ ի Մահմետականաց : Ըստ աւանդելոյ մոգուց Զրադաշտ արար 26 ճուքս ( զիրք ) կեշտին իւրոյ. ի խեշերանաց որոց կարկատեցաւ յետ ժամանակաց Զենդ-Ավետացն ( բան կենդանի ) . և օրէնտիրն մեռաւ ի լեռոն Աբորչի :

Յամին 1827, Կոյեմբերի 27 երեւեցաւ յանիւրծ առ Եօկմազեաւ ահաղին սիւն հրոյ հանդերձ շառաշմարժ. եւ տեւեաց ժամս երիս արձակելով ի վեր բարինս հրացեալ եւ ջուր ամրաւ : Անդ առ մեհենաւն են կրկին ջերմուկը կամ ակունք ջրոյ տողորելոյ կասոյտ կաւով : Հայեցեալ ի բնական երևոյթը շրջակայիցն Բագուի երկրաբանն բռնադատի խոստովանիլ թէ ի հնումն էին անդ հրաբուզիր ականաւորք, որք և սրատմառեցին սաստիկ սրատառուածս շրջակայ լերանց : Զնոյն է տեսանել նա եւ ի կողին որ յառաջս կուր և Երախո գետոց զոր Ռուսը կոչեցին պոդօքերայաց պիխայ ( սալ այրեցեալ ) : Ի հրաբուխաց սատիթերեւս ան գանոն

իւր մերձակայ դաւառն Ատր-պատական, որ, որ-  
պէս յայտ է, նշանակէ դարձան հրց : Շուրջ զբաղ-  
տան են մօրք կրտախտան ընդ որթ որի նառիթ որ  
է ձիսթ լուծեալ, եւ ասի քարտաճիսթ : Յանդիման  
յիշեալ քաղաքին, յոյնկրց ծովուն, յաշխարհին  
թուրբմանաց ի կղզուցն Ջելնկան ( նաևթ ), նա եւ  
յլուրշերսն եւ ի Սուրբ Կղզին բղիսէ նառիթ, յօրմէ  
մարիթ է մակարերեւթէ հեղուկս այս հոսի ընդ յատա-  
կաւ Կասալիական ծովուն եւ բղիսէ ի քաղում տեղիս :  
Հանդէալ քաղաքին ջուր ծովուն պղպճակեալ եռաց,  
յոր իրրեւ արկանեն տրցակ խոսոյ եւ հուր ի վերաց՝  
բորբոքի ջուր ծովուն պայծառ լուսով . որ եւ մա-  
նատեալ ապա ի պատառ պատառ՝ երեւոյթ իմն  
գուարճալի ընծայէ ի զննին կացելոց : Բուսական  
գորութիւնն կարի նուազ է առանքն. եւ լիճը չօր ջրոց  
առաւելուն թռուվ : Աշ կարի հեռի ի քաղաքէս  
ականի երէզն Աղմանից որ երկայնեալ զձախ ե-  
զերբ Կրոյ երթայ մինչեւ ի Շամախի . այլ ամայիս  
փախի յերեւոյթ կանաչասաղարթ ի սահման Կո-  
խուայ . ուր դալարի շռայլ եւ քարավաղը յոլով  
ցանկալի գործեն զբաղումն ի հովտաց Կովկասու ,  
Եւ չէ անտեղի համարել թէ երէզս լեալ իցէ եր-  
բեմն ծով կամ բաղուկ Կասալիականին :

Մովսէս Արարակիայտուացի :

Սի միայնէ սրատմաղիր զորքնծոյեցին մեղ Ա.Ղ.  
վանր փոխանքբառանցն և ճգանց զորա հոսեցին սուա-  
րելաջան սուրբ հորբ մեր՝ Գրիգոր Լուսաւորիչ,  
Գրիգորիա՝ թոռն խր, եւ Մեսոր վասն մոծա-  
նելոց առ նոսա զլոցս որրոց Աւետարանի . սակայն  
որպէս տեսանելոց եւմբ սակատիկ մի զինի, բնա-  
գաւառ նորա ոչ էր րուն Աղվանիք. այլ Ուտի՛ մի ի  
նահանգաց Հայոց մեծոց : Գիշտարին է յոյժ միա-  
րանել զուարաձայն զրոյցս ազգոյցին և այլազգի  
մասենազրաց որ ի մասին ծագման Ուտեաց :  
Խրբ դի երկորին Մովսէսը՝ Խորենացին եւ Կազան-  
կացտուացին այլավք ոմամբը կրաեր սրատմաղբօրմե-  
րովք համարին զնոսա սերեւալ յԱռանոց որ եկաց  
148 ամօր յառաջ քան զԲրիտանու . սակայն ժողո-  
վուրուս այս յիշատակի բազում անզամ ի Հերոզոտէ  
եր. 118-119. 245 եւ 247. իրը 520 ամօր նախ քան  
զԲրիտանու, յարշաւանս Դարենի եւ Քաերբաէսի ի  
Յունատան, եւ յԱմիենի, եր. 405 ամօր իրը 336  
նախ քան զԲրիտանու ի ճակատուն Արբելի : Ապա-  
քէն դոլով Ուտեացն 400 ամօր նախ քան զԱռան,  
բնականարար ոչ կարէին լինել ի ծննդոց նորա :  
Բաց յայտանէ, ընդ առաջ ելանէ մեղ այլ միւս ևս  
զրժուարոթիւն, այսինքն թէ Ուտիք յազգէ Ա.Ղ.

վասնից էին թէ՝ ոչ։ Զըռւծումն իմողրոյս գիտնազունից  
թողեալ՝ զսցս ինչ արժան համարիմ յաւելու թէ  
Աղվանիք, ըստ միտոյելոյ արժանահաւ աստ պատմա-  
դրաց, միշտ թափառական վարեցին կեսնա, ի ձմե-  
րայնի օթեալ յեղեղնեոց կուզս, յամարայնի՝ աստ-  
անդական ի լերինս, պարապեալ մարդադատ-  
թեան, աւազակութեան եւ վարձկան զինուորու-  
թեան ըստ Տակիտի, զօրէն այժմեան Առնաւուտաց  
եւ Հերինտաց։ Եւ թերեւս յայս սակաէ զի յետ  
ամս բազումն մնալոյ անդ եւ անհետանալոյ՝ ոչ թո-  
ղին ամենեւ ին յիշատակարանն ինչ, ոչ տաճար, ոչ  
դամբարան, ոչ քաղաք, ոչ անողիք, ոչ արձանադիր,  
ոչ զրամ եւ ոչ այլ ինչ զորս տեսանեմք յայլ աշ-  
խարհս։ Խակ քաղաքք ինչ յիշատակեալ անդ կամ  
ի Հայոց են շինեալ, որպէս Տիգրանակերտ, Ար-  
դանակերտ, կամ ի Պարսից, որպէս Պերսպետավատ,  
Պարբանդ եւ այլն։ Այսմ ներհակ զՈւտիս նկարա-  
դրեն պատմագիրը իրեւ ժողովուրդ քաղաքակիրթ,  
բնուակեալ ի կայս հաստատ եւ պարապեալ շատ կամ  
սակաւ արտեստից, առեւտրոյ եւ հողագործու-  
թեան, և թերեւս հատթեսամբ իւրեանց ոչ ինչ  
սրակաս ի նոցանեւ։

ԶՈւտիս մեր յոյնեւ հումայեցի մատենադիրը կո-  
շեցին Օղէն, Օղին և Ուդ, Ես ևս, որ, ըստ Առքք  
կորց զազգս ամենացն ի Հայաստանէ համարիմ

սիտեալ . Եւ յարենելից կուսէ տեսանեմ զՈւտի՝  
հին թագաւորութիւնն Հնդկաց, ի հիւսիսոյ՝ զՈղին  
կիասատուածն Ավանդինաւաց, որ ըստ դրացաց  
Գերմանաց կալաւ զայժմեան Ռուսիա, զԱրքա-  
նիա, զԴանիմարդ, զՆորվեգ. որ կրէր յուս խր  
ագռաւու երկուս՝ մին անուանեալ հուղին (հողի,  
միտք), միւսն՝ մունին (ուշ), որ տեսանեմ զՈւդա-  
գետն Արքերիոյ, զՈւդ նահանգն Գաղղիոյ հան-  
դերձ հոմանուն լճակաւ եւ գետով, եւ զմիւս այլ  
գետ Ռւդօն կոչեցեալ, եւ զՈւդինա գետ վերին  
Խոտալիոյ, ստիպիմ հետեւեցուցանել թէ՝ զուցէ  
Ռւտիք ևս յանդիր դարս, զօրէն Աղվանից, ա-  
ռաքեցին հատուածս ընդ արեւելս, ընդ հիւսիս  
եւ ընդ արեւմուսու, որոց հետք յետ ի վերայ ոն-  
ցանելց իրր երեսուն, աւելի կամ սրակաս, զո-  
րուց, տակաւին նշմարին այսր անդր :

Աղվանիք, որպէս ասացաւ ի վեր անդր, անհետա-  
ցան ի կոմիասէ . խել Ռւտիք, թէ և թուով սակա-  
քան զնոսա, սրահեցան իրրեւ նշխար սպատուական  
հնագոյն ժողովրդեան ուրուք, մինչեւ ցարդ ունե-  
լով զյասուկ լեզուն իւրեանց եւ զաթութոյ : Թիւ-  
քրիստոնեայ Ռւտեայն ոչ անցանէ անդր քան զ3000  
զերդաստան բնակեալ խառն ընդ Հայսի Նորի,  
ի Ա արդաշն (Ա արդանաշն) և ի Նիշ . խել որոց  
Մահմետին ունին զուսումն անծանօթ է թիւ :

Քրիստոնեաց Ուտիք զՀայոց ունին ուղղափառ  
հառասս եւ հովուին ի մերոց առաջնորդաց բաց ի  
117 ընտանեաց որբ ձանձրացեալ ի բոնո թենէ...  
դարձան յամին 1817 ի կրօնա Յունական : Ինձ խել  
դէպ եղի երբեմն խնամ տանել մանկանց մերակրօն  
Ուտեաց յազգային դպրոցին Թիվիլիզի : ՅՈւտեաց  
աստի էր Մովսէս Կաղանկայտուացի, դորի՛ է  
ձառս : Նա ինըն ասէ զմնրենէ ծնեալ ի բաղարա-  
ւանն Կաղանկայտուց որ առ Տրառ գետով, ի առհ-  
մանս արբայտնիստն Պիւտականի : Ոմանք կոչե-  
ցին զնա Կաղանկայտուացի, այլ՝ Կաղկանատուացի,  
որպէս և ես՝ երբեմն. այլ զի տեղի ծննդեան նո-  
րա էր Կաղանկայտուց ըստ չորից օրինակաց մերոց,  
ուղղադոյն թուեցաւ ինձ անուանել զնա Կաղան-  
կայտուացի : Ժամանակ ծննդեան նորա և վախճա-  
նի, որպէս և այլոց բազմաց մերոց մատենապրաց,  
տակաւին անցայտ է : Այսեփաննսոս Ասողիկ որ ի նա-  
խադրունա սրասմութեան խրոց թուէ զոման  
ի պատմադրաց մերոց, զանց առնու զսովաւ : Ատե-  
գաննոս Օրբէլեան, Միսիթ ար Այրիփանեցի և այլը  
յիշեն զստ ընդ այլ մատենապիրս մեր « Մովսէս  
Աղվանեցի » անուամբ . եւ երկրորդնկարդէ զստ ընդ  
մէջ Շատրոց Քաղրաստունոց եւ Ղեռնդ երիցու :  
Հետազոտեալ իմ խնամօք ի զիրս խըր՝ զտի հառա-  
տի ցոյցս բատ որոց մարթ է, անտարակուսարար :

համարել զնա կեցեալ ի սկզբան Եւ դարուն առ  
Ա իրոցիւ կաթողիկոսաւ որում եւ ուղեկից եղե  
յերթալ նորա յողջոյն Շաթի՝ արքայորդւոյն Խաղ-  
րաց, և առ Զեւանչիր իշխանաւ : Ի Գլուխն 18 Ա.  
Գրոց, ի պատմելն զաղանդոյն մատնահասութեան  
զոր երարձ արքայն Վ աչաղան, յաւելու « զոր բե-  
րեալ խակ տեսար բազումք » : Ի պատմելն զշանդի-  
պումն Ա իրոցի արքայորդւոյն Խաղրաց, ասէ, Բ. 14.  
« անդ տեսար զբազմոց նոցա . . . եւ զընծայ ող-  
ջունին որ բարձեալ ի վերայ բաղկաց մերոց » : Եւ  
ի Գլուխն 28 նոյն Գրոց ի ճառելն զհանդերձանաց  
պաղատան Զեւանչիր իշխանին, ոյսափէս զրէ « յայն-  
ժամ լիներ անդ համաշխարհական ժողով . . . եւ  
տեսանեար անդ . . . տեսանեար զթ ագաւորական  
հաւն . . . տեսար օրֆիչ . . . ի զրօանս խաղուց տե-  
սանեար . . . » : Դարձեալի Գլուխն 32. որ յաղաղա-  
զիւտի Մեսրոպեան խաչին « զոր ո չ (միայն) մեր .  
այլ աշխարհ ամենայն եղեն տեսօղք » : Եւ զի մա-  
ռաւոր իշխանն Զեւանչիր եկաց ի կէսն Եւ դարուն,  
զՄովկաէս եւս համարելի է ժամանակակիցից նմին եւ  
տողեալ զպատմական զիրա խր » :

Թէ եւ ի Կաղանկոցտուց զոյրի հնումն վանք կրօ-  
նաւորաց, յորում առ Եղիսայիւ կաթողիկոսաւ պատ-  
մի կարգեալ յառաջնորդութիւն Պատիթ եսլի-  
կոսոս ոմն. այլ շոնիմ ասել ինչ հաւաստի յաղաղա-

կոչմաննորա, այսինքնթէ յուխտէ եկեղեցւոյ էրթէ՝  
ոչ. ինքն դիմքենէ, ոչ ինչ խօսի. այլը եւս, ըստ իմ  
զխտելոյ, ըստն զայսմաննէ, բայց եւ այնպէս հայե-  
ցեալ ի չափ հմտութեան նորա Գրոց Արբոց եւ  
աստուածաբանական խնդրոց, հայեցեալ ի հմտո-  
թիւն նորա դրականութեան մերոյ, որ, որպէս  
յայտէ, ոչ այնպէս ի ծաղկի էր յՈւտիս որպէս յԱրա-  
բատեան նահանգի, ոչ այնչափ ընտանի աշխարհա-  
կանաց, որպէս, եկեղեցականաց, չգործէ որ յան-  
ցանս ինչ համարեալ զնա յեկեղեցական կարդէ :  
Ինչ եւ իցէ՝ չէ ինձ փոյթ զվիճակէ Մովսիսի զի բանս  
որ զնմանէ՞է իրրեւ զմատենազրէ, այլ ես եւ ուսում-  
նասէր խրաբանչիւր շնորհ մեծ ունիմք զնմանէ  
իրրեւ զմիակ հին պատմազրէ, որ ի բազմամարտ  
դարուն յայնմիկ հոգացաւ հարկանել ի զրի եւ ա-  
ւանդել մեղ զրոյցս աշխարհին խրոյ. առանց որոց  
ի խոր խաւարի մեոյժն առյաւխտեան անցը համայն-  
և իրր ազգին և աշխարհին Աղվանից :

Ի սկզբան գրոց իւրոց Կաղանկայտուացին ծաղ-  
կաբաղ առնէ զխորենացին եւ զԵղիչէ, թէ եւ ուրեք  
ուրեք տարրերի ի նոցանէ : Յամենացնի սիրէ զհետ  
երթալ ճշմարտութեան, ջատադոլ հանդիսանայ  
ուղղութեան հաւատոց և վարոց բարեաց. այլ պատ-  
մական և աշխարհազրական հմտութիւնը խր, նա-  
մանաւ անդ, հնադիտութիւն խր աղբատին իմն են :

Ար և, թուի թէ, ի շարադրելն զգաստմաղիր իւր  
շունէրի ձեռինոչ զներողուտ, ոչ զՊլին, ոչ զՊլո-  
տարը եւ ոչ զԱստրաբոն, յորոց ոմանք ծանօթ ե-  
րեւին եւ թերեւտ թարգմանեալ ի նախնեաց մերոց։  
Յայս սակա է զի ոչ ինչ ճառէ ամենեւին զնախնի մի-  
ճարէ Աղվանից, զկրտնից նոցա, զբաղարպական տես-  
չութենէ, զբաժանմանէ գաւառացն, զբաներազմաց  
նոցա ընդ Յունաց, ընդ Հռոմացեցեւոց, ընդ Խաղ-  
րաց, ընդ Հռոմաց, ընդ Հռոմոց, ընդ Պարսից եւ այլն,  
որպէս զրեցին Տակիս, Պլուտարք եւ այլը։ Այլ  
ընդարձակագոյնն խօսի զոր ինչ զործեցան սա-  
կաթիկ մի յառաջ քան զինքն եւ առ իւրեւ ի Հայկա-  
կան Աղվանա, այս ինքն է յերեսին դաւառս Ու-  
տեաց, Արձախաց և Փայտակարանի, որոց տիրեալ  
Աղվանից ի Դւ դարուն եւ ընկալեալ յԱռարելոց  
մերոց զհաւաստո քրիստոնէական՝ խառնեցան ընդ  
ազդ մեր եւ մերաղնացան։ Յիշ. դարէ եւ այսր ան-  
անուն զրիչ ոմն շարունակեալ է զզործն Կաղանկայ-  
տուացւոյն եւ հասուցեալ ի դարն տասներորդ։

Տպագրութիւն մտանիս եղեւ չորից օրինակաց  
համեմատութեամբ. յորոց զառաջինն բազում զգու-  
շութեամբ գաղափարեալ էի ես ինձէն ի սուրբ Եջմի-  
ածին ի մտի ունելով միւտ զտպագրութիւն այնորիկ  
ի պատեհ ժամու։ Զերկլորդն, նոյնպէս օրինակեալ  
ի սուրբ Եջմիածին, ընծայեաց ինձ աղդասիրարար

Մեծապատիւ զխտնական Աղքատիչ աղայն Առմէնան  
բարեկամն իմ . զերդորդն զրեալ ի Դամիրէժ յայլ  
իմն ձեռագրոյ, ետ ինձ համեմատոթեան աղազա-  
արգոյ բարեկամն իմ Գրիգոր Խինտին Արմե-  
ռուսան, եւ զշորդորդն զաղափարեալ ի Կոստան-  
տինովիս, ետ ինձ սրատուարժան Գալուստ աղայն  
Տէր Պօղոսեան : Որոց ամենեցուն յիշտտակն օրհ-  
նութեամբ եւ զովութեամբ եղիցի իժովովս դրասի-  
րաց : Զորոտառոչով Պատթակաց քերթողի արա-  
րեալ ի մաշն Զեւսն իրի, սրակասեալ ըստ կիայն  
յերկրորդ եւ ի չորրորդ օրինակս մեր, անթերի ո-  
նեին առաջին եւ Երրորդ օրինակիրն :

Այդ յետ մանրակրկիտ համեմատոթեան օրինա-  
րաց մերոց, եւ կարգելոյ յառաջարան եւ ծանօթո-  
թիւնու կարեւոր ի բացատրութիւն և յուզզութիւն  
միխակարաց ընծացեմ ահա ի լոյս զհոչակաւոր եւ  
հազուաղիւս մատեանս զայս, ի 1200 ամաց հետէ ,  
թողեալ ի խառարի, ի փառս ամենօրհնեալ Արրյ  
Կուսին և յօդուս ուսումնասէր հայ մանկուոյն ոչ  
այլ ինչ խնդրելով ձզանցս փոխարէն բացց եթէ  
զման ազօթից արժանաւորաց ի կաղղոյր վշտա-  
կիր անձինս զի որպէս սկսաց նոյնպէս եւ կատա-  
րեցից զձեռնարկին իմ :

1 Յունլարի 1860 . Պարիս :

Կ . Վ . Շահաղարեանց

# Մովսիսի Կաղանկայտուացւոյ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱԴՎԱՆԵՑ

ԳԻՒՐ Ք. Ա. Ռ. Ա. Հ. Կ. Կ. :

Ա. — Նախերգուն սակա պատմութեան Առվանից :

Աստուածաստեղծ մարդն առաջին՝ հայրն Ազատ  
եկաց ամս 230 և ծնառ զԱթ. Աթ եկաց ամս 205  
և ծնառ զԵնով. Ենովս եկաց ամս 190 և ծնառ զԿայ-  
նան. Կայնան եկաց ամս 170 և ծնառ զՄաղաղացէդ (Մաղաղիել). Մաղաղացէդ եկաց ամս 165 և ծնառ  
զՅարեղ. Յարեղ եկաց ամս 165 և ծնառ զԵնով.  
Ենովը եկաց ամս 165, և ծնառ զՄաթուսաղաց.  
Մաթուսաղաց եկաց ամս 167 և ծնառ զՂամեր.  
Ղամեր եկաց ամս 168. և ծնառ զՆԵց. և ՆԵց եկաց  
ամս 500, և ծնառ երիա որդիս՝ Անժ. Քամ և Յա-  
րեթ : Եւ յետ 100 ամի ծննդեան Սեմաց եկն ջրհե-  
ղեղն յամի վեցհարիւրերորդի կենացն ՆԵցի : Եւ  
լինին յԱղամաց մինչև ցջրհեղեղն ամբ 2242, և  
աղդ 10 (1) :

Բ. — Դիր ազգարանուրեան Յարեթի ժննդոցն :

Աստունօր զրայտարարութիւն սահմանաց Յարեթի  
և զաղղաբանութիւննորին գտցես յիւրումտեղուջն :  
Սահմանք Յարեթի այս են, զոր Նոյ եւ բաժին. և  
երգումն իսկ ողահանջեաց ի մէջ եղբարցն չղրկել  
եղբարց զմիսկեանս : Ի Մարտոց մինչեւ ցՊաղիրովն(2)  
կողմն հիւսիսոյ, և ցզետն Դիկղաթ որ մնկնէ ընդ Մարտ  
և ընդ Բարելոն: Եւ որդիր Յարեթի՝ Պատմեր. և ինմա-  
նէ Պատմիրը. Մարտոց. և ինմանէ Կեղոր և Պաղատա-  
ցիր. Մարտոց. և ինմանէն Մարտ. Յունան. և ինմանէ  
Հելենը և Յոյնք. Թօրեղ. և ինմանէ Թմւտաղը. Մո-  
սոր. և ի նմանէն Պուրիկացիր. Թիրամ. և ի նմանէ  
Թրակացիր. Քետին. և ինմանէ Մակեղոնացիր: Եւ  
որդիր Թիրամաց Ապրանազ. և ի նմանէ Ապրանար :  
Ախիսատ. և ինմանէ Սաւրոմասոր. Թարդոմն ի նմա-  
նէն Հայք: Որդիր Յունանաց, Աւղիշայ. և ինմանէն  
Սիմեկացիր (կամ Աթկիղիացիր) և Աթենացիր:  
Թարշիշ. և ի նմանէն Վիրը (3) և Տիւրենացիր.  
և Ախտրիս. ուստի և Հոռոմք և Պատմինացիր և  
Հոռվդացիր. Ընդ առենն ազդ 15: Եւ ի սոցանէն  
ելին և մեկնեցան կզզիր հեթանոսաց որ են Ախու-  
րացիր:

Ի Կետարացւոց որդիր Յարեթի. իսկ որ իկող-

մանս հիւսիսոյ են՝ աղղակից են Աետուրացւոց, ուստի Աղվանք, և աղղք որ են ի Հեղաս աշխարհի՝ են յայնցանէ որ յետոյ փոխեցան անդր, որպէս Այեւտացիքն որբ բնակեալ են յԱթէնս՝ ի պատուականն Յունաց . և ի Թերայեցւոց Աիդովնացիք (4) ելին, սրանզիստեցան, որ են ի Կաղմեայ որդւոյ Աղենովրաց . և Կարգեղովնացիք են Եկը ի Տիւրոսէ : Խոկ ի խառնակեալ լեզուացն Ելինի Յարեթէ աղղք Հնդեւտասան, ի Մարտաց մինչեւ յԱստարիավնոր ձդի յԱւեկիանոս, և հայի ընդ հիւսիսի . այս է Երկիր նոցա. Ատրապատական, Աղվանք, Ամազոնիա, Հայք մեծ և փորք, Կապուտակիա (5), Գաղատիա (6), Կողքիա, Հնդիկ, Բոսպորիա, Մէաւախա, Դատրենիա, Ատրմատիա, Ըստոթիս, Թրակէ, Ատկեղոնիա, Դաղմատիա, Մաղիս, Մաղիս, Թեսասաղիա, Վոկրիա, Բէովտիա, Հետաղիս, Ատտիկէ, Արայա, Տեղենիսմ, Ակարնէս, Հուալիրիատիմ, Վիուրիա, Վեքնիսիս, Աղրիսկէ յորմէ ծովն Աղրիսկան, Գաղիա, Սպանիա-նիս-Գրալիա, Իրերիա, Սպանիա մեծ : Աւտ կատարին տահմանք Յարեթի մինչ յկղզիսն Բերտանիկէցւոց ( Բրիտանացւոց ) . և հային ամեներեւան ընդ հիւսիսի :

Գ. — թալ որ ազգ զիտէ դպրութիւն :

Եւ ի սոցանեն որ զիտեն զդոլլութիւն՝ Երբայեցիք, Ղառինացիք, որով և Հոռոմը վարին, Սօլանիացիք, Յոյնը, Մարր, Հոյք, Աղվանիք : Ի Մարտաց կողմին հիւսիաց ցԳաղիրովմեաց սահմանն որ ձղի ի Պարուածիրու դետոյ մինչև ցՄաստոսիս, որ է Եղիովն (7) :

Խակ կղզիք՝ Արդիս, Եւրիս, Ռոդոս, Քիսոս, Ղիրնոս, Ափելերա, Զինկեթէոս, Կասիալոնիս (8) Խթրակէ, Կարելիսրիս (9), և Կեղաղէմ (10, և մասն մի Ասիոյ (11) որ կոչի Յովլանիս. և գետն, Իլուզայիթ որ մեկնէ ի մէջ Մարտաց և Յարելոնի : Այս սահմանիք Յարեթի : Աւմ կալու զկողմին արևելից երկրին . Քամը զկողմին հարաւոյ. և Յարէթ՝ զկողմին արևմտից և հիւսիաց ուր Աղվանիք են և ծովն Կասովից : Ծաղը երկրի արևելը. և ի կողմին արևմտից երթան, հասանեն ազդքս այս մինչ ի Տրապան (12) :

Խակ որ ի Յարեթէ մինչև ցՏիգրան թագաւորք է ։ և կողմանց Պարսիցթագաւորք ԱՄշակայ մինչև ցԱրտավան՝ 14. և ամք 450 (13) : ԶԱՐՏԱՎԱՆ սպան Արտաշիր ի Սասանեան Ստահրայ, և Երազը դթաղաւորութիւն Պարթեաց, ուր Պարսից և Ասո-

բեաց տիրեցին 252 ամառ յառաջ քան զդող կե-  
նարարին մերոց Գրիստոսի եւ յետ զարձի զերո-  
թեան Հրէիցի Բարելոնէ 270 ամառ։ Եւ ի նոյն Պար-  
թեաց որք ի Վաղարշակայ մինչև յԱրտաշր՝  
Վաստիակոյ որդի, թագաւորք Հայոց 24 (14) և  
ամք 620 : Աստ բարձաւ թագաւորութիւն յԱր-  
շակունեաց, և հայրապետութիւնի ցեղէ որբոյն Գրի-  
գորի Խալ եթէ յաղագս Բագրատունեացն կամիցիս  
զիտել, Պարոյր Ակացորդի կոչեցեալ (15) Հրաշեայ՝  
թագաւոր Հայոց՝ որդի Հայկակայ, որին զբեաց յար-  
քայէն Բարելացոց զմի ոնն ի զերելոցն Հրէից (16)  
Երաթ անուն . զօր ածեալ բնակեցոյց յերկրին  
Հայոց մեծաւ որառուով : Ի ամսնէ սերեցաւ ազգն  
Բագրատունեաց ի նուազիլ մեծաղոյն ազդին Յա-  
րեթականի :

○○

Դ. — Կարգելն զնախարարութիւն Աղվանից

Վաղարշակայ :

Անդ սկիզբն առնէ (Վաղարշակ) նախադահու-  
թեան Աղվանից, ոյի յակը յանձն յաշխարհաղործու-

թեան մարդկութեանս, որ զմեծ լերտամին կառեասու  
բնակելոցն չունիմ ինչ ասել զստոյդն ի պէտալսողաց՝  
մինչեւ ցԱ աղարշակ՝ արրայն Հայոց, որ ի կարգելն  
իւրում զհամասայինան՝ կոչեաց զվայրենի եկամուռ  
ազգս որ ի դաշտէն հմասիաց կամ որ զստորոտովն  
կառեասու, կամ ի հովիսուկամ իխորաձորս դհարաւով  
մինչեւ ցմուռա դաշտին, պատուէք առնեք զաւաղա-  
կութիւնն եւ զմարդաղաւութիւն թողուլ. Եւ հարկաց  
արբոնի հնագանդ կալ : Ասրա կարգեացնոցս առաջ-  
նորդս և վերակացուս, յորոց զլիսաւոր ոմն ի Ախա-  
կան սոհմէ Յարեթական ծննդոց կարգի հրամանով  
Վաղարշակայ, Առան անոնն, որ ժառանդեաց զդաշ-  
տրս և զլերինա Աղվանից ի գետէն Երասխոց մինչեւ<sup>17)</sup>  
ցամուրն Հնարակերտ: Եւ աշխարհն յաղադս բազց-  
րութեան բարուցնորս անուանեցաւ Ավղանք. զի ա-  
զու (17) ձայնէին զնա վասն բազցրութեան բարուցն :

Ի սորս ծննդոց Առաննաց, ասեն, անուանիս և  
քաջս կարգեցան կողմիակալս բիւրաւոր ի Պար-  
թեւէն Վաղարշակայ: Եւ ի սորս զստակէն, ասեն,  
սերեալ զազդս Ուտէացոց և Գարդմանացոց  
իշխանութեանց : Այս մինչեւ ցայս վայր ցուցումն  
ազգարանութեանց :

Ե. — Յոցումն բերմանց և պարարտոքեանց առհամանացն Աղվանից թէ զինչ ունի ի պետք մարդկան :

Բարեվայելուչ և ցանկալի է աշխարհն Աղվանից ամենազիւտ շահնիւր և բարձրաբերձ կոհակացն Կաւկասաղուանս (18), և գետն մեծ Կուր հեղասահ գնացիւր բերելով յինքեան ձկունս մեծամեծս և մանունս, ճեմելով զայ, անցանէ, անկանիի ծովն Կատալից. և որ շուրջ զնովան են դաշտք, դոսանի ի նոսա հաց և զինի շատ, նաւթ և աղ, ասլրեշտմ և բամբակ, սոմբառ ձիթենիր : Եւ հատանի ի լերանցն ուկի և արծաթ, սղինձ և դեղնախունիր : Եւ որ ինչ վայրենիր ինչ՝ առիւծ, ինձ, յովազ, ցիռ . և ի թըռչնոց յոլովից արծուիր և բազէք և նմանք նոցին, և մայրաբազաք ունի զմեծն Պարտառ :

• • •

Զ. — Զիսուրին երեմանն Աստու Իոյ մերոյ մերոցս արևելիցս :

Պատմութիւն ճշմարիտ առաւել քան զնախազահելն Առանոյ ի Վաղարշակայ տանս Աղվանից

այլինչ ոչ դտաք մինչեւ ցբաջն Աւաշագան , որ  
միանգամայն տիրեաց կողմանցս Ազվանից :

Իսկ ի հասանել ժամանակի երևման արեգականն  
արդարութեան, և յայց ելանել փրկութեան մերոյ՝ ան-  
քննին էութեան ըստ փառաց և էութեան Հօր ծագու-  
մն զտնօրինականն կատարեալ զամենիցս ամենայն, և  
յէութեան նստաւ ի փառս, ուստի ոչն էր մեկնեալ. եւ  
զտւրբ և զցանկալի աշակերտա իւր առաքեաց քա-  
րոզս տիեզերաց. որում և մերոցս արեւելեացս վիճա-  
կեցաւ սուրբ առաքեալն Թագդէոս: Աս եկեալ ի  
ՀայրյԱյտապատառ, անդ առնու վախճան մարտի-  
ռոսութեան ի Անատրկոյ՝ արբայէն Հայոց :

Եւ աշակերտ նորին սուրբն Եղիշէ դառնայ յԵրու-  
սաղէմեպատմէ զտենչալի նահատակութիւն առա-  
քելակցաց նորա : Անդանօր յազդմանէ սուրբ Հոգւոյն  
ձեռնադրի Եղիշէ ի ձեռաց սրբոյն Յակովբու՝ եղբօր  
Տեառն, որ էր առաջին հայրապետ Երուսաղէմի. և  
վիճակ առեւալ իւր զարեւել՝ ճանապարհ արարեալ  
յԵրուսաղէմէ ընդ Պարսս մոտանէ ի Մասդութս՝  
խոյս տուեալ ի Հայաստանեայցն . սկիզբն առնէ  
քարոզութեան ի Չողայ (19), և ի տեղիս տեղիս  
զբաղումս աշակերտեալ ծանոյց զփրկութիւն :

Անտի եկեալ յՈւտի գաւառ, ի Ասհառն քաղաք  
երիւք անձամբք աշակերտելօք, որոց հարազատք  
անօրէնք ոմանք զկնի եկեալ՝ մի յաշակերտելոցն

ընկալաւ ի նոցանէ զնահատակութեան վախճան :  
Եւ երկուցն թողեալ զերանելին Եղիշէ՝ գնացին  
զինի խողխողիչ արանցն : Խակ սուրբ հայրապետն  
եկեղեալ ի Գիտ (20)<sup>4</sup> կանգնեաց եկեղեցի և մատոյց  
զանարիւն պատարագ : Յայսմտեղւոջ եղեւ սկիզբն  
արևելեայց եկեղեցեաց մայրաքաղաքաց և լուսա-  
տութեան տեղի : Եւ անտի անցեալ ընդ դաշ-  
տակն Զերգունի, ի տեղի զոհատանցն դիսցամոլ  
կոսակաշտիցն, անդէառ զնահատակութեան պսակն :  
Եւ անյայտ իմն է՝ եթէ յորում տեղի եղեւ եղք  
իրացն. և անդէն ի գուբ միմահապարտաց ընկեցաւ  
պատուական նշխարիքն . և ծածկեցաւ ի տեղւոջն,  
որ կոչի Հոմինք, բազում ժամանակս :



Ե. — Գիւտ նշխարաց արևելից շուսաւորչին՝ սլր-  
բոյն Եղիշեի :

Ոչ էր սլարտ ծածկիլ ճշմարտութեանն, և ընդ  
փակմամբ լինել լուսոյ : Յետքազում ժամանակաց  
երևեալ երկիրած արանց տեսլեամբ՝ դան միախումբ  
ժողովով ի տեղի գրի անդ, տեսանենոսկերսյոդունս  
շեղջակուտեալ . և առհասարակ տարակուսեցան.  
սակայն հանին, դիմեցին և հսկեցին յաղօթս զդի-  
շերն զացն : Եւ եղեւ յառաւօտուն շարժումն մեծ,

մինչև որ անդնկային անկանել յերկիր : Եւ եկն հողմ  
սաստիկ յանապատէն, ցիր և ցանք (արար) զանաբը-  
րոցն զուկերս ընդ դաշտն առնենայն . և մեաց միայն  
ի տեղւոցն առարելականն ացն նշխարք , զորոց  
զլուխն միայն մեծահաւատ ոմն Ատելիաննոս՝ քա-  
հանաց Ուռեկան գեղջ, յափշտակեալի միջոյն՝ աճա-  
պարեալ յերիխօր խար՝ ի բաց զնաց : Եւ շարժեալ  
բազմութեան դկնի նորա՝ մառախուղ խաւարացին  
ընդ մէջ անցեալ զարհութեցոց զնոսա, որք զարձան  
ի բանակն :

Եւ տեսլեամբ յայտնեալ սրբոյն Եղիշէի՝ տարան,  
հանգուցին զնշխարս նորա, ուր եղեալ (էր) զլուխնի  
յաւանին Ուռեկան ի ձեռն սրբոց քահանային Ատե-  
լիաննոսի. և ապա անտի վոխեցին ի Ներս-Միհրաց  
սուրբ ուխտն, որ այժմ կոչի Զրվշտիկ(21), ի վասու  
Տեառն Աստուծոյ առնենակալի : Խակյետ բազուժ  
ժամանակաց բարեսրաշտն Վաշագան՝ Աղվանից  
արբայ, կանգնեաց սիւն ի զրի նահատակութեան  
Եղիշէի. և սենեկապանն արբայի մենակեաց եղեալ  
ի վերաց սեանն՝ կատարի :

Ը. — Բառ կարգի զրոյցք յԱռանայ մինչեւ ցՇունայր՝  
Աղվանից արքայ, և ցՏրդատ՝ Հայոց արքայ, ոչ  
զատք. այլ հարեւանցի զրեցաւ որ ինչ ի ովեաս էր  
անդեակ լինել :

Յոյժ ցանեկաղիէր ըստ կարգաց զիտել զսրատմածս  
որ ինչ յԱռանայ նախաղահութենէն ցայսօր դործք.  
բայց արևելեացս բաղմաղ դութիւն ամրոխեալ ցու-  
ցանէ զորպէսն, և կտակարանացն հրկիվութիւնք.  
սակայն յայսմ վայրի նախատառ որէ մեզ Քերթողա-  
հայրն Մովսէս(ի սրբամենն) զսրատերազմելն Այտա-  
վաղդայ ընդ Հռովմայեցիան : Վասն զի ի գումարելն  
նորա զրիւրաւորսն Ատրաբատականաց՝ անդկոչեաց  
զհզօր ազգս լերինն կաւկասու և զզօրս Աղվա-  
նից և Վրաց, և խաղաց ի Միջազետս . և սոյին  
ուժով հաղածեաց զզօրսն Հռովմայեցւոց :

Խակ ի շահատակելն Այտաշխախ ի վերաց Երվան-  
դայ, էր նա ի սահմանս Աղվանից յՈւտի զաւա-  
սի . թողու անդէն զզօրն, և ինքն գնայ յիւր  
քաղաք : Եւեկեալ Այտաշէսմիարանէ զզօրս Աղվա-  
նից ընդ ինքեան, և ելանէ առ ափն ծովակին  
Գեղամայ. և սորօք վանէ զԵրվանդ . և ինքն տիրէ  
Հայատանեաց :

Զայսու ժամանակաւ միտրանին Աղվանիր լեռնաւ-

կանօքն ամենեքումը և մասն ինչ էրի լ բաց, և մեծ առ  
ամրոխիւ տարած անին յերկիրն Հայոց : Ժաղովի եւ  
Արտաշես զգորսիւր ընդդէմ նոցա և բանակի առ  
կուրդեստով : Աստոկանայ պատերազմն, ըմբռնի ար-  
քայորդին, Աղվանից(22)ի ձեռս Արտաշխիւ . եւ վասն  
այնորիկ զօրիորդն Սամինիկ առնու կին Արտաշես և  
դառնայ խաղաղութիւնն հա (ատա) տեսալ : Ա ախճանի  
հայրն Սամինկայ. և այլ ոմն բռնացեալ թաղաւորէ,  
և զեղբայրն նորա հալածէ : Եւ դայեակն Արտաշխիւ  
Ամրատ եկեալ զօրով մեծ առնէ զրոնացեալն, և  
տիրել տայ Եղբօրն հայրենի աթոռոյն, և դառնայ  
մեծ առարտ և բաղում զերեօր ի Հայր Շնորհե-  
ցուցանէ զդերեալսն ի գաւառին Շաւարշան, որք էին  
յԱրտադ գաւառին. և նախարարութիւն Առակ-  
ղեան տոհմին յաղգէ Սամինկայ է կարգեալ, որ  
ի մեծէն Խոսրովայ՝ հօր Տրդաստայ, ինամենցա-  
տոն բաֆի և Շասպաց եկելոց :

◇ ◇

Թ. — Հաւասարին Ռունայրի և մերտին ի ձեռաց  
սրբոյն Գրիգորի . և Աղվանից միարան բառաւորիլ  
բեղ ձեռամբ Ռունայրի արքայի :

Ա ան զի երանելին Եղիշէ զառաքելադորձն մշա-  
կութիւն ի ծագաց երկրի սկսեալ՝ լուսուորեաց

զմաստնու ինչ արեւելեացս հիւսիսոյ, այլ ոչ զամե-  
նեսեան, և նոյն ինքն զբարխոքն կաստոքեալ զմարտ  
ի վերաց ժաղովրդեան խրոյ ճգնեցաւ : Առ յոր  
ժամանակի ոյց արար Աստուած ազգի մարդկան,  
ընդհանուր ծաղկեցոյց զարեւմնեաց կոյս մեծ  
կայսերին Կաստանտինոսին, լուսաւորեաց և զմեծ  
Հայր երանելեան Տրդատու, ուծ ի հաւատու և  
զելս արեգական որ սակաւ ինչ ծանուցեալ էին  
զծագութիւն փրկութեան ճշմարիտ արեգականն :  
Կայսերակիւնդ ձեռն Ռունացրի դերադոյն լուսաւորե-  
ցան. և այսր ի միումժամանակի եղեն հրաշք յաստ-  
ուածուստ :

Եւ էր Ռունացր՝ աղքաց Աղվանից, քեռացր Շատ-  
հոյ՝ Պարսից արքայի, քաջաղօր ոյր, որ ի մեծամեծ  
պատերազմունս հոյակասպ անուն ժառանգեաց՝ իմէջ  
Հայաստանեացն նշան յաղթութեան կանդնեալ :  
Առնու և զվերատին ծնունդն ի սրբոյն Գրիգորէ՝  
Հայոց Լուսաւորչէ, և զայ լուսազգեատեալ ի  
սուրբ Հոգւոյն. առանել լուսաւորէ զԱղվանս . եւ  
կոյս, մեայ որդիի մշտնչենակալ լուսոյն . վախճանէ  
զմարդկային կետնա : Խակ զինի սորա մահուանն  
ինդրեցստ յԱղվանից մանուկն Գրիգորիս ի կա-  
թողիկատթիւն խրեանց զի Ռունացր՝ աղքայն մեր,  
ինդրեաց ի սրբոյն Գրիգորայ նորին սուրբ ձեռնա-  
դրութեամբն լինել եալիսկուուս աշխարհին իւրոյ.

որք և այսու կանոնիս կացին աշխարհու Հայոց եւ  
Աղվանից համակամ եղբայրութեամբ և անքակ  
տիստիս մինչեւ ցացսօր :



**Ժ.** — Վասն Մաշեկ՝ Աղվանից արքայի թէ զիսրոց  
որոցաւ զներանոսական գործ մոլորութեան և հաւա-  
տաց յլլառուամ կենդանի. և ետ պատերազմ ընդ Պար-  
սիս, և միանձնացաւ յանապատի սուրբ վարուք :

Յինն և տասներորդի ամի թաղաւորութեանն  
Յազկերտի հասանէ նմա վախճան մահու . և ընդ  
հակառակս լեալ երկու որդիքն նորա ի վերայ տէրու-  
թեանն կուռեցան : Մինչդեռ նորա յայսմ խոռվու-  
թեան էին՝ ապատամբի և Վաշեկ՝ արքայն Աղ-  
վանից. զի էր նա նոցա քեռորդի, և յառաջն լեալ  
քրիստոնեաց ըստ հոյրենական աւանդին, զոր Ուռ-  
նոցր հաստատեաց . և անօրէն Յազկերտ արար  
րբոնութեամբ զնա մոգ : Խակ յայսմ վայրի ժամ  
զուալ պարապոց անձին իւրոյ՝ լաւ համարեալ  
մեռանել պատերազմաւ քան ուրացութեամբ ունել  
զթաղաւորութիւնն :

Ընդ երկար(ել)՝ խոռվութեանն Այսեաց զնդին  
ովի Ուռհատ անուն ի Միհրեան տոհմի, որ էր զա-

յեակ իրտակը որդւոյն Յաղկերտի, սա դիմեաց դալ  
ամբու դնդիւ խրով ի վերոց երէց որդւոյ թագա-  
ռորբն։ Եհար, սաստակեաց զգունդն։ և ձերբակալ  
արար զորդի թագառորբն, և անդէն ի տեղոջն  
սաստակեաց . եւ զմասցեալ զօրսն ած, հաւանեցոց  
և միտորեաց տա գունդն Արեաց . և թագառորե-  
ցոց զիսր սանն որում անուն էր Պերող : Իսկ ար-  
քայն Աղլանից ոչ կամեցաւ նուածիկ անդրէն ի  
ծառայոթթիւն, այլ խրամատեաց զպահակն Չողայ,  
և անցոյց յայսկոյս զզօրսն Մասգոթաց : Միարա-  
նեաց և մետասան թագառորս զլեռնորդեացն,  
և ընդդէմ եկաց պատերազմնաւ Արեաց դնդին եւ  
բազում վնաս արար զօրացն արբունի : Եւ զրեալ  
(Պերողի)երկիցն եւ երիցն հրամատակս աղաչանաց՝  
ոչ կարաց ածել ի հաւանոթթիւն զնա . այլ զրով  
և պատգամաւ յանդիմանէր զնա վասն զոր առե-  
րելոյն զաշխարհն Հայոց և զմահ նախարարացն եւ  
զշարչարանս կապելոցն.որ փոխանուկ կեանս տալոց  
սիրոյն եւ ժաստակոցն՝ զարեւ հատէր. լաւ լիցի ինձ  
շարչարանօր մեռանիլ բան ու բացութեամբ կեալ :

Եւ իրրեւ զիտացին եթէ՝ ոչ բռնութթիւն եւ ոչ  
մէր կարեն ածել զնա ի հաւանս, զանձ սաստիմկ  
ետ տանել յաշխարհն Աղուանորեաց . եւ բացին  
զզրունս Ալանաց, եւ հանին զունդ բազում ի Հո-  
նաց, եւ կուեցան զմի ամ բնդ Աղմանից արրային

Եւ թէսլէտ սպակասեցան Եւ ցրուեցան զօրք նորա.  
սակայն զնա ոչ կարացին ածել ի հաւանա . այլ եւ  
հարուածք մեծամեծք հասինի վերայ նոցա , է՛ր որ  
կոռուով , եւ է՛ր որ շարաշար ախտիք ծրղեցան :  
Եւ յերկարել սպաշարմանն մեծ կողմին աշխարհին  
աւերեցաւ . այլ ոչ ոք ի նմանն բաժանեցաւ : Աստ  
յղեաց առ Աւաշէ թագաւորին Պերող ։ զրոյրդ իմ ,  
առէ , եւ զրեռորդիդ ի բաց տար ածել զի ի բնէ  
մոգ էին , եւ դու քրիստոնեաց արարեր . և աշխարհ  
քո քե՛զ լիցի ։ Խակ երանելի այրն ոչ ի վերայ  
տէրութեանն կոռուէր այլ յաստուած սպաշտութեանն  
մրցէր . և ետ տանել զմայրն և զկինն , և զաշխարհ  
բովանորակ ի բաց եթող , և ինքն զաւետարանն առ  
ե ի բաց կամէր զնալ : Զայն լուեալ թագաւորին  
Պերողի ի դիոզ եկեալ , զամենայն վնասն ի հայրիսր  
արձանէր . անառատ երդմունա կնքէր և տայր տանել  
առ նառ եթէ յաշխարհէդ միացն մի զնար , և զոր  
ինչ ասես առնեմ : Խակ աս հաճեցաւ միացն ըզ  
սեպհականն առնուէ բաժին խր , զոր ի հօրէն էր  
առեալ հազար երդ . առ զայն ի թագաւորէն , եւ  
նասաւ ի նմա միայնակեցօք հանգերձ . և այնոքս  
անզրազագէս կեայր ըստ Աստուծոյ . և ոչ յիշեաց  
ունենեւիմք եթէ թագաւոր լեալ իցէ յառաջ . այս  
եղէ վարք նորա :

ԺԱ. — թուղթ գտայ ևսիսկոսոսի առ սուրբըն

Աւալ :

Ասու Տօյ երկնաւոր շնորհօքն ողոյն :

Ե ձառս սուրբ սիրոյ քո առաքինութեան ի կամաց  
կամաց անձին խոյ բղիսեցան մխաք խմ, երկնաւոր  
զօրութեամբն յօժարեցի պատմող լինել բանիւ :

Եւ առ անկատ բնձ մեծ և ահազին եւ բարձրա-  
գոյն քան զերկինս երկնից, և խորագոյն քան զներ-  
քին կիտագունդն. և յամննացն կողմանց շորջ ոլո-  
շարեաց դիաի վեր և ի վայր, ի վերջ և յառաջ, յաջ  
և յահեալ, փախչիլ ոչ կարեմ, և խորամուխ լինել  
երկնչիմ, և թէ զուցէ ընկղիցիմ, որպէս Պետրոս  
առաքեալ, ի ծով անզնդացին, բայց եթէ Տէր Յիսոս  
մեռն կառկառուցու յօդնականութիւն : Յայս սա-  
կըս եւ քաջալերեցացց և յանմուխտ մխեցացց քանզի  
քան տնիմ մատաց գործի, և թէ զուցի ինչ հիմթա-  
նիսթ հոգեկիր յառաքինութենէ արանց քաջաց, որք  
զշրմշտակս ածին ի ղարսնացումն, և անզիր օրի-  
նար անձամբ անձին օրէնք Եղեն, և զառանց օրի-  
նաց Տէրն ի վեր ծանեան, և զեղեալն դիտացին  
ընդ օրինար . և առանց առաջնորդի մարդարէի  
ուրուք կամ երկնաւոր հրեշտակի աստուածատեսք  
եղեն :

Այդ՝ ահա՝ յորմէ երկուցեալս էի՛ ի ձեռու սկսոյ  
մօտիմ, և յուսով մերձենամ, և հաւատովիք աներ-  
կիւղ հաստատիմ և սկսանիմ, ուստի արժանն (է)  
սկսանել. որպէս յառաջադոյն սէրն Քրիստոսի  
բնակեաց ի նախնառյն (նին) ձերում Ուռնացրի, նա-  
խանձ երկնաւոր երեր ընդ Տրդատայ՝ Հայոց ար-  
քային, իրրե լուսու զմեծամեծ սքանչելիան Աստո-  
ծոյ, որ ի ձեռն սրբոյն Գրիգորի նշանք և ար-  
ուեստք գործեցան յաշաբհին Հայոց, վաղվաղակին  
զառնալ ի բազում շաւղաց մողար ճանապարհին  
առ ճշմարիտն Աստուած. ծանօթութեամբ և բա-  
րեկամոթեամբ ի բաց ընկեցին զծանրատաղսուել  
լուծն հեթանոսաց, թեթեացան, թօթափեցան,  
թեակոփսեցան, թռեան, ի յերկինս ճախրեցան,

Զայս լուեալքաջին Ուռնացրի՝ ոչ զլաց և ոչ դա-  
դարեաց և ոչ ի ձեռն ծառայական հրեշտակին.  
այլ ինքնին մեծ թագաւորն մեծամեծօք նախա-  
րարօք և բազմագունդ գորօք դացր, հասանէր յաշ-  
խարհն Հայոց, յանդիման լինէր սկսցազօք թագա-  
ւորին : Խակ նորա եղբայրաբար սիրով բարեկամո-  
թեամբ ընկալեալ՝ բոլոր զմիքն առաջի առնէր նմա՞  
զներքին և զարտարին, խորհուրդս մերկանացր և  
զնէր առաջի նորա հանդերձ սրբոյն Գրիգորին. Եւ  
ամենայն բազմոթեամբ զօրոցն Հայոց. խոնարհէր  
թագաւորն ձեր, անկանէր և սկատէր զոտիւր և զձե-

ուր. սրատոմէր զամենայն մոլորութիւն հեթանոսոց՝  
և ինքն խոստովան լինէր վասն տղիտագործ մեղացն  
անցելոց :

Քաջալերէր զնա սուրբն Գրիդորիոս ի գալուստ  
մարմնաւորութեան Որդւոյն Աստուծոյ, որ ի թու-  
ղութիւն եկն և ոչ ի զատապարտել, ի կեցուցա-  
նել և ոչ ի մեռուցանել. և յառաջ անցելոցն ի հոգոյ  
կեանս խոստացաւ : Զայց ամենայն իրրեւ լսէր թու-  
ղաւորն ձեր՝ ինքն և ամենայն զօրքն որ ընդ նմա,  
զառուրս քառասուն աղահուցաւանդէին զանձինս իւր-  
եանց ի բաց հրաժարելով յառաջին առգտանելի  
գործոցն. և յառուրն յիաներորդի՝ իրրեւ ուրացան ի  
սատանայէ և յամենայն դործոց նորա և խոստովա-  
նեցին զսուրբ Երրորդութիւնն . էջ թագաւորն յա-  
մենասուրբ ջուրն և ամենայն զօրքն ընդ նմա : Եւ  
կատարեաց զնոսա բահանայապետն ի վերատին ծը-  
նոնդն, ի յերկիսուոր Երրորդութիւնն ելին ամեներին,  
Հոգւովին սրբով : Ի նմին ժամանակիր չնորհնցառ  
նոցա այր մի երանելի ձեռնադղրեալ յեռիակուակոսու-  
թիւն, ի Հռոմ քաղաքէ, որ եկեալ էր ընդ Տրդա-  
տաց արբային, այսու երկնաւոր բարուք :

Եկն Ուռնացր արքայ, եմուտ յաշխարհն Աղփա-  
նից, ուստի և կատարեաց զնոսա առաքելական կա-  
նոնօք. ընկալան ամեններին զդրութե երկնաւոր, և  
զրեցան ի դորութիւն կենաց. հալածեցան դեք աւ-  
6.

խարհիով. խափանեցան զո՞ր և ճենձերը. ամաչեաց  
մոլորութիւնն, բարձրացաւ ճշմարտոթիւնն, թա-  
գաւորեաց լրյան աներեւոյթ, մերժեցաւ կամաւոր  
խաւարն. կարգեցան երեխայրիք եկեղեցւոյ. տա-  
սամորդեցան պառւողք կալոց եւ հնձանաց, անդոց և  
շարանաց (23) և ամենայն ընտանի անսանոց. նաև  
զհող երկրին եւս ի նոյն վիճակեցոյց, և հաստա-  
տեալ կալաւ. կարգ ուղղութեան առ նախնեօքն ձե-  
րով, հանուօք և հարբն քով երանելեաւ մինչև ի ժա-  
մանակս քոյ սրանչելի տէրութեանոդ. վիշապն, որ  
հինն էր յառաջն առաջին մարդոյն, եռես դչքնազ  
ծնունդ քոյոյ ընութեանոդ յառաջին ի հայրենի հա-  
ւասոյն երկրորդ, որ ի գոռող վիճակին. յոյժ կաս-  
կած ի միտ անկառ. շարասեր թշնամեոյն, ևթէ դո-  
ցէ ընդ որս եղեւ մուտ կենաց յաշխարհս Աղվանից՝  
ընդ այն ծնունդ եւ մուտ ճշմարտոթեանն յաշխարհն  
արեւելից. շտապեցաւ, տաղնապեցաւ, տարակու-  
ուցաւ առաւել բան յաւորան Յորաց որուարոյ. ժո-  
ղովեաց, զումարեաց զզօրան խր խաւարայինս,  
յայտնեաց նոյցա զախտն չափ, որ տանջէր զնաւ. ամե-  
նեքեանք զոյզ հարան եւ դողացան. եւ ի միտարանու-  
թիւն եկեալ՝ զելս իրացն խնդրեցին. «մի այզոլէս,  
տան, տաղնապիր յանձն քո ու քաջ՝ կանուխ է  
մոլորութիւնս մեր քան զճշմարտութիւնն նորա,  
տկար գտաղանաւն առաջին մարդոյն յաղթեցեր, մեծ

թաղաւորովս տղայոցն չիրարե՞ս կալ առաջին : Զայս  
ասացին և դշամառարած ծովն շարժեցին ի մերսոյ  
քո . իջին ի նա օղբ մրրկածինք , շարժեցին և յու-  
զեցին զբաղմութիւն ալեաց նորս . ոկաս . մրմնել,  
ելանել , տարածանիլ , ասրականել զդաշտա և  
զերինու. եկն , եհաս ի վերայքո միանգամայն բազմու-  
թիւն աղգաց հեթանոսաց ահաւոր դաղմանօք , խոս-  
նաղրոշմն նշանօք , բաղմաձայն փողօք , դարարա-  
փող գոչմամբ , անստառախիտ նիզակօք , ճառագայ-  
թաւոր սուսերօք , ուկեկմբեաց վահանօք , թանձը և  
ստուար մինդակօք : Հողեղէնքն դշոգեղէնադ եր-  
կեցուցանէին . Եւ ասրականացուքն զանապա-  
կանադ կամմէին կորուսանել . Եւ անսասուածքըն  
զաստուածային շառաւիղդ կամմէին յարմատոցն  
կորել . երկիցս եւ երիցս սրարտեցան , Եւ ոչ ամա-  
շեցին :

Իսկ այն , որ նասին յերկնից երկինս , և տեսանէ  
զաշխարհս ամենայն ականելով և կշռելով զբարի օ-  
րէնս և որ ընդդիմ իցեն , ետես զբեզ միայն օրինաւոր ,  
թոյլ ետ պատել զբեւ շուրջ սաստիկ հնոցին . վա-  
ռեցան , բորբոքեցան և այրեցան իրրեւ զիտչք ի  
մէջ հրոյ . նմանեցար երից մանկանցն , ի հնոցին  
զզօրութիւն հրոյն շիջուցեր , զիտչորութիւն կայծա-  
կանցն ի կակլութիւն վարդի փոխեցեր , զիմզմու-  
թիւն ծխոյն ի սպիտակութիւն շուշանի չըջեցեր ,

զայրեցող ընտիւն հրոյ յարալող դօրութիւն սո-  
վորեցոցեր, զԱզրորդն Աստուծոյ յերկնից յերկիր  
ածեր քեզ յօդնամկանութիւն : Խմաստոթիւնքն  
նոցա յիմարեցան, քաջ քն նոցա վատեցան, սպա-  
նալիբն նոցա դաղարեցին, նահատակը նոցա զօղե-  
ցան, բաղմոթիւնը սակաւացան :

Երանի է քեզ, և երանի է որ մերձեցին սո-  
քեզ սակաւ էիր թոռվ, և անթիւ եղեր բաղմո-  
թեամբը. սակաւ էիր յայտնեօր, և անթիւ եղեր ան-  
յացանեօր. նիզակ բոյ նիզակ Յեսուս, և սպատազի-  
նութիւն քո սպատազինութիւնը սպատազեամբն  
Աստուծոյ, որ իջանէ ընդ նմա յաւորն յարութեան:  
Կ'որս ձայն, որ զերկիր շարժ եաց, դիմու զզորդէ,  
զզերեղմանս տւերէ, զմեռեալս յարուցանէ, զնա-  
ցեալս նորոգէ, զզաստատանս հասուցանէ, ամանց  
ի ձախակողմն, և ոմանց ի յոջակողմն. այս Աստուծոյ  
միայն է, նմա վայել է. իսկ քեզ իրբեւ հաւատարին  
ծառայի և սիրելոց և ժառանգաւորի արրայու-  
թեան ետ չնորհս երկնաւորս զի զտուրն յարու-  
թեան թերէ նմանութիւն : Որ սպարձէր ի չարն  
տազնապեցաւ . որ ինչափսիւր ի մոլորութիւն յի-  
մարեցաւ . սակենայն ինչ քո զնդինկոկին է, եթէ զր-  
բեահը հաւատոյ. եթէ սազաւորս էր ի զդու չութիւն  
սուսերի, ընդ նմին էր և սազաւորս փրկութեան .

եթէ վառան ունեիր ընդդիմահար լսնչացդ առաքինեաց, ընդ նմին ունեիր գլխահանն համբերութեան հաւատոց . եթէ նետ ի կորովից քոց թռչէր ողզակի, ընդ նմին և աղօթք սուրբը խնդրուածոց քոց վաղվաղակի գեր ի վերոյ գտանեին քան զերկինս սուաչի Աստուծոյ. եթէ շողայր սուսեր ի բազուկարդ առաքինին՝ լուսաւորութիւն հաւատոց քոց ի մէջ հրեշտակաց վայլատակունս արձակէր, դրօշակի քո զրօշակի երկնաւորք, և առ դ նիզակի քոյ ձառագոյք աւոր իրրեւ զշառաւիզու (24) արձաթեոյ արեղակրան:

Այսէ, որ զահի հարեւալ էի ի սկզբանե, սրաւմոթեանս, եթէ զիանդ կարացից բանիւ սրաւմնել զայնմանէ, որ ի մեր քան զրան գտանիւ. բանս չորերնիւթեայ աշխարհս ոչ կարէ ասել. եւ այս միհակ ոչ ամենեցուն. այլ որ քաջապէս դեզերեցան յուսումնասիրութեամն, ի թուականին, յերկրաչափականն, յաստրանի թժշկականին, և ապա ի ծայրս ծագաց հասին ի մարդարէ ականն, յատարելականն, յաւետարանականն, որ է սկզբըն և ընձուղումն. եւ թէ պէտ եւ ունեի զայտամենոյն արուեստս նիւթականաց սրաւմնող : Եկիր դու երրեմն նիւթական. այլ զաննիւթացն ունիս նմանութիւն . ընդ արտասեկին կշռեցից զբեզ, դու սրայծ առագոյն քան զարուսեակըն նշոյց արձակես. արտասեակին զմեց ամիս արտակէ, եւ զմեց ամիս զիւերախար. դու առար

առուր արտասեալ և ի վեր բան զարտասեալ. ( նոր )  
յացդուն պահունե եթ երեխ. խել զու ի քանի և չորս  
ժամն ի տունջեան և ի գիշերի : Եւ եթէ ղլուսին  
ածից քեզ յօրինակ՝ յոյժ ծիծաղելի է խմասանց .  
Երկուսասան անդամ ի տարուոջն վիճած . ժանդա-  
հոծ, մանղաղաձե, կիսազունդ, խոնաւալից, կիսա-  
լըս, հիւանդոս, գիշերազնաց, խուարամեր, լուսա-  
տեաց, զզջանման, պակասընթաց, հրատանջ :  
բազո մանդամ ի թաղուտտ մասեալ : Խել զու  
միալցո, բարձր, լուսասարսա, առեսարեր, հրեշ-  
տաւիսերալ, արախսարար, քաջալերիչ, որոշառ,  
զեղեցին քան զամենացն հոսակալից ընկերու քո ,  
ոչինչ բաւականքեզ բաւեմասելորքան զարեղակն  
ի վեր զտանիա , ոչ զնա թշնամանեցից ևւ զրեզ  
դովեցից . այլ զինութիւնն նորս պատմեցից բեզ .  
շնորհաց ( է ), թիւրընթաց, կողման որ, ասուե-  
րաշոր, հարաւարնակ, ձմեռնաստանջ, ամառնակէզ, զ  
թանուտ զարնանի և աշնուտ աշնանի , գիշերա-  
կուլ, առասօտածին, ծաղիսաթ արշամ , դարմարա-  
ցամար, կենղանահաղած ի ստուերու ի մէջ առօրէի ,  
կիսարաժին աւորն ողջունի . յիրաւի սմա Յոյնք  
Աւողովն կորդացին : Եւ սարա եթէ ի զու զնարեաց  
ձառաղայթ անցցես մոօրդ, ընդ նմին և զայն գի-  
տասաջիր ( թէ ) զիշերաւ է ծածկեալ, ամորք է թա-  
քուցեալ, փոշով է մղտացեալ, մրրկօք է աբեկո-

ձեռլ. զու արեգական նմանեցար, ի Հօրէ զօրացար,  
ի յՈրդւոյ քաջալերեցար, ի սուրբ Հոգւոյն լուսա-  
ւորեցար. ի դիշերիտեսամնեն, և ի տունջեան թափ  
անցանեն ճառագայթք հաւասար քոց.

Ասացից քեղ բան ինչ առակա որ. յամենացն կող-  
մանց աշացար, սրատեսիլ եռ քան դարձտի, և ե-  
րազալուր քան զմի ի հանդրասանաց. ոչ միայն զեր-  
կինս տեսեր, այլ եւ զերկնից մեծն տեսեր : Զփորրա  
թողեր, զանցառա եւառը եւ զանանցն տեսեր, ի  
բաց ընկեցեր զակլաւեռո թագառորոթիւնն, եւ  
ահա կույ, սրահի քեղ անձնեռագործ պատկն զոր ընդ-  
ունելոց եռ յամենաստր ձեռացն Քրիստոսի : որ  
թողցէ վասն աւետարանին դհոյք և զմայք եւ զբորա  
եւ զեղբարս եւ զամենայն առացուածս խը՝ զհա-  
րիւրասրատին առան ընկալցի եւ զիեանան յաւի-  
տենից յաշխարհին որ ոչն անցանէն : Զայդ աղբատի  
ումեր զիւրագոյն է առնել, խել առն թագառորի,  
իբրեւ զբեղ, անշաքը է. ապա եթէ արացէ, որ որ-  
պէս եւ արարերդ, մարդկան անհաւատալի, հրեշ-  
տակաց զարմանալի, Աստուծոյ ի մանալի, որ թո-  
ղեալ զանթիւ, բազում զօրս հրեշտակաց և եկն  
ի զձուձ կերպարանս մարդկան. զատ քո զործդ  
այնմ նման, նու և բոլոր աշխարհի եղեւ կեանք եւ  
փըրկոթիւնն, զու բոլորից աշխարհիս բացեր դուռն  
փըրկոթիւնն. քոյն խել աշխարհին հոյրենի հա-

աստին պահեցան , եկեղեցիք չէն մնացին , վերաբարձր ի խաղաղոթեան , քահանացը ի քահանացոթեան , պատարագը իսեղանս , մարդարեք յընթերցուծս , առարեալը ի միմիթ արտօթիւնս , սազմուերգուր ի յօրհնութեան , կուսանք ի կուսութեան , կըրօնաւորը ի սրբութեան , և ամենայն ոք յիւրաքանչիւր կարդի , եհաս լուր առարինութեան քոյրաբեւելից մինչեւ ի Շաղարտին (25) , ի հարաւոյ մինչեւ ի հիւսիս :

Գլուցաւ անուն մարտիրոսութեան քոյ յտակիտախտակն ընդ առարեալսն եւ ընդ նախավիրացն , ընդ հայրապետսն եւ ընդ եպիփակոպոսապետսն , միանդամայն եւ ի դպրութեան կենացն ի յերկինս : Զգոյշ լեր սրանչելի՝ որ այսչափ մեծ ամենայն արժանի եղեր , և յայսչափ բարձրութիւնս վերացար , հասեր ի հաստատուն կալ յուսոյն եւ անհատ ի սիրոյն , համբերուղ լեր ի հաւասար ճշմարտութեան զի մի վիշապն մեռեալ զոտան շարժեսցէ ի վերայ կենացս մերոց :

Զի թէ մինչ տղայն էիր՝ յաղթեցեր նմա , ի չափ հասեալ , գիտեմ , թէ առ ոտն կոխես զամենայն մերենայս շարի նորսա , այլ որչափ միտք զրեղ սիրեն , և մարթ էր զայն բանիւ ընդ պատմութեամբ արկանել , բազում մազաղաթի ծախը լինեին . բազում անդամ յառաջ եկեալ վասն քո սիրոյն զալ առ բեզ , այժմ ի մերմէ բարեխօսութենէ , եւ

յամենացն սուրբ ոխտի եկեղեցւոյ, յանձն արարեալ  
զրեզ Հոգւոյն սրբայ. Տէր ընդ բեզ ամէն :

Ա կայ Քրիստոսի, շարչարակից խաչին, ի հրեշ-  
տակաց փառամասոյց պատմումաննաւ զարդարեալ,  
անդարչ որդեակ իմ Ա աչ՝ Աղվանից սրբայ, Գև-  
տայ եսլիակոպոսի՝ Տէր երկրի, յամօթաղից հեղղու-  
թենէ շկարեմք համարձակել առել բանս միսիթա-  
րութեան յաղթողիով աներեւոյթ պատերազմին . որ  
ոչ ի մարդկանէ առեալ քաջալերութիւն, այլ յոյժ  
ահեղ զօրութիւնն Քրիստոսի քեզ յօդնականու-  
թիւն կոչելով՝ վերապոյն դերագանցեալ քան զրո-  
լոր աշխարհս բարձրագոյն դտար : Բոյց արդ զրեզ  
Եհաւան ածեալ քոյտի ժուժ կալութեամբ ազաշեմ  
զի ախորժ և անոշ իմ ողջոյնս քեզ թուեսցի. այլ  
գոհանալով զրո վերաբերութենէդ ո՞վ զօրական  
Քրիստոսի՝ ոչ ունիմ զիստթիւն աղբաստոթեանս  
իմոյ կազմութեան պատրաստութիւն . զի և ոչ  
նիւթ ինչ ձարտարեալ խմաստոթեան իմ համբա-  
րեալ կարասցից կկել զգեստ ինչ զովութեան քուժ  
ազնուականութեանդ. նա մանաւանդ Եթէ, ամե-  
նայն հանեսորական վիշտափայքն աշխարհին Յո-  
նաց ի մի տեղի զումարեսցին, և ոչ ինչ կարասցեն  
ասել զարժանն զովութեան քուժ հոգելից յաղթու-  
թեանդ : Ա ասն զիւզո ծանեար սիրելով զԱսո-  
տած յամենացն սրբէ, յանձնէ, և ի զօրութենէ, զա-

մենայն ինչս եւ զմեծութիւնս փոխանակեցեր ընդ  
միոյ Տեառն ամենայնի. զի զնա ընդ քեզ հաշտունե-  
լով ոչ միայն զերկիրս՝ այլ և զերկնից զմեծութիւնն  
առեալ ըմբռչխնեցեր : Հրաժարեցար ի զոհիցն  
ճենճերաց զիւամոլ հեթանոսաց , եւ եղեր հոտ  
անոյշ ի Քրիստոս, որ հասեալ մինչեւ յարեւմուսու  
հոչակեալ ծաւալեցաւ. եւ բերկրեալ զուարձացոյց  
զամենեցունց հոգիս: Թողեր զմեծութիւն երկրացին  
որ առթի մեղօք , ժառանգեցեր զարդարութիւն  
հանդերձ երկնային մեծութեամբն, հեռացար բնաւ  
խոկի զրադանաց աշխարհիս, մերձեցար ի Քրիստոս  
որ է նաւահանդիստ խաղաղութեան . եւ գումա-  
րեալ զբանս իմ ի մի տեղի խօսեցաց . եւ եթէ էիր  
մարդ , եւ եղեր հրեշտակ. ունիիր աղջականս ի  
յերկրի, եւ գտար եղացը Քրիստոսի ի յերկրինս .  
էիր մահկանացու , եւ եղեր անմահ . ոչ թէ դու  
միայն ես անմահ , այլ վասն զի համարձակութիւն  
ունիս առ Քրիստոս որ բազում մահկանացուաց  
կարէ տալ կենդանութիւն. ցանկալի ես հրեշտակաց,  
փափաղելի ես մարդկան , առաւել անձկալի ինձ  
հեռացելոյս մարտակից քեզ յաներեւոյթ պատե-  
րազմի ամենաչար սաստանայի : Բայց արդ աղաչեմ,  
փոխանակ առեմ չունիլ վեսա ի մոփ , չյիշել զիմ  
հեղդութիւնս , զի այն որ արարն զբեզ իմ որդե-  
զրութեան արժանի , նոյն եւ շնորհեսցէ մեզ զբեզ

առողջ հոգւով եւ մարմնով տեսանել յաշխարհի ,  
եւ վայելել ի բոյ չնորհալից վարսդ առաքինութեան .  
ողջ լինելով ի Քրիստոս լիցիս մեզ բազում ժամա-  
նակս (26) սպառագեալ եւ լցեալ սիրովն Քրիս-  
տոսի . ամէն :

◇ ◇

**ՃԲ.** — Պատերազմելն Տրդառայ ըմէ Բարսդաց  
արքային ի յաշխարհին Աղվանից , և բազա-  
տրելն Ասմասորկոյ ի վերայ Աղվանից և ընդ-  
դիմանալն Հայոց . և Խոսրովու զալն յօդնա-  
կանորին զօրօքն և առեւու զԱղվանս իւ  
զնարկուն :

Վինի զօրաժողով Տրդառիսա' մեծ թագաւորն  
Հայոց , և իջեալ ի դաշտոն Գարգարացւոց՝ սրա-  
տահէ հիւսիսականաց սաստիկ սպառերազմաւ . եւ  
թագաւորն Բարսդաց մարտակից խր եղեալ , որ  
ձգեալ զնոսպան արւոյն Տրդառայ և ոչ զօրեալ  
ընկճել զնա' ինքն լինի միջակտուր ի նմանեն . եւ  
վարէ Տրդառիսս զնոսս կոտորմամբ մինչեւ ցՀոնո .  
և բազմաց լինի անկանիլ ի զօրացն Հայոց . և Այսու-  
ազդ՝ սպառագետն Հայոց , Վանդակոնին

մահանաց : Անդ առնու սրբատիոս Տրդատիոս . եւ  
միարանեալ դհիւսիսայինսն՝ դիմէ ի վերաց Շապհաց՝  
որբային Պարտից :

Խակ ի վախճանելն Տրդատաց Աննատրուկ ոմն  
թաղաւորեաց Աղվանից ի Փայտակարան քաղաքի .  
և եկաց զիմակաց Հայոց : Եւ Խոսրովայ՝ որդւոյ  
Տրդատաց , ածեալ զԱնտիոքա յանական զօրօր ,  
և զԲագարան արեւմտեաց զնողին , և զՄիհրան՝  
Վրաց րդեաչիր ացարիսկ ամենեքումը միարանեալ  
խազոց ի վերաց Աղվանից : Անապարէ Աննատրուկ  
զօրօրն Աղվանից , և գնայ առ Շապոհ՝ արրայ Պար-  
սից , թողավզ զօր բազում ի քաղաքին Փայտակարան :  
Եւ Անտիոքա առեւալ աւարբազամ և զհարելն արբո-  
նի՝ դասնայ առ Իսյորու Եւ գտեալ ժամ՝ պարսակ Աննա-  
աբրկոյ՝ հրամանաւ Շապհոյ ժողովի՝ զօրու Աղվանից՝  
թուով իրեւ երեսուն հազար . և արշաւէ ի միջոց  
Հայոց . և զօրադրախ ոմն անարի սկաց ի տիպտու-  
րացն վառեալ թաղիս կոմեայ՝ շահատակէր ի մէջ  
որտերազմի առ Աւշական առարարով . Եթէ զի-  
նով հարկանեին՝ ոչ զծէր ( 27 ) . այլ ձախր առնոցր :  
Յացնեամ քաջն Վահան Ամաստենի հայեցեալ ի կա-  
թողիկէն՝ առէ . օգնեալ ինձ . և ողջեալ զնիզակն՝  
ընդ դաւակէ ձիոյն յերկիր կործանէր զահազին  
զիրազն ( 28 ) :

ԺԴ. — Շատրվանը քաղաւորեցու ցամելն զՃիրան և  
փրկելն ի հիւսիսականացն. մասն Արշակոյ.  
Պատգայ քաղաւորելն . և կորուստ Մ'ենքու-  
ժանայ . և խոց առնուլն Ռումայրի յայն  
պատերազմի :

Թագաւորեալ Տիրանայ Հայոց՝ առնէ խաղաղու-  
թիւնընդ Պարսա, և լեալ աւգնական Շատրվան՝ թափէ  
զնա ի յարձակմանէ հիւսիսայնոյն, որք ամս չորս  
բընակեալ Աղվանս՝ նեղէին զՀայս Ապա ըստ բա-  
րուց չարին Տիրանայ կուրանայ ի Շատրվան . և Ար-  
շակ՝ նորին որդի, առնու զթագաւորութիւնն . ի  
նմին ժամանակին եղեւ խոռովութիւն Շատրվան յազդաց  
հիւսիսայ. և նա անցեալ ի Բյաթանիա՝ նատի ամիսը  
յոլով. և ոչ կարաց առնել ինչ : Ապա սիւն առ  
ծովակին կանգնեալ և առիւծ ի վերայ՝ մատակ ընդ  
տոխաք ունելով, նշան իմն կոչել առիւծ զՊարսա և  
մատակ՝ զՀռումայեցիս .

Մեռանի Արշակ. թագաւորէ Պատ. ապատամբի  
Մեհրուժան Արծրունի զԱրիստոփէլին խորհեցեալ  
կորուստ անձին խորայ. լինի մեծ պատերազմ ի մէջ  
Պատգայ և Մեհրուժանայ : Յայնժամ քաջն Շերզիր՝  
Կեկաց արքայ, մեռանի ի ձեռաց Ապանդարսասայ

Կամսարականիւ Անդ առնու խոց մեծ արքայն Աղ-  
վանից Ուռնայրի Մոշեղէ Մամիկոնէ՝ Վ ասակայ որ-  
դոյ. սաստակիւ և Մեհրուժ ան յայտարարապետէն Ամբա-  
տայ սրակեալ բոցագոյն երկամթիւ զզլուխն սրբոյն  
Ներախի աղօթիւք :

♦♦♦

ԺԴ. — Սակահիկ յայտարարութիւն վասն սրբոյն  
Գրիգորի Հայոց Լուսաւորչի, և երանելի որ-  
դեաց նորին . և ընդ նմին ձեռնադրութիւն  
սրբոյն Գրիգորիսի որդույ Այրդանիսի բոտին  
մեջին սրբոյն Գրիգորի, ի կարողիկութիւն  
Աղվանից և Վրաց . և եկն նորա յԱղվանս ի  
բասաւորութիւն աշխարհիս . և նահատակութիւն  
նորին և բերումն եշխարացն :

Այդ մի ոմն յաշակերտացն Տեառն Թաղղէոս  
անուն, որպէս յառաջազն ասացաք, հասեալ սմա-  
ման ինչ ի Հայաստան աշխարհին, լուսաւորէր  
զկողմանս ինչ արեւելեաց աշխարհին, մինչև եկն  
հռչակելի պատերազմողն և երիցս երանելին Պար-  
գորիոս, զոր ի մեռանելն Խոսրովայ Հայոց թագա-  
ւորի յասլանանելն զնանենողոթեամբ Ենակայ Պար-

թեւի՛ հօրն Գրիգորի , և իւր մախուցեալ զնալով  
հեղձամիջուկի ի ջուրս Երասխ գետոյ լինէր , դայեկաց  
ոմանց առեւալ մախստեաց Յունաց յաշխարհն զեր-  
ծուցանէին զերանելին Գրիգորիս : Եւ այս լինէր  
նախախսամութեամբ մեծին Աստուծոյ յօրինակ  
նախամարդարէին Մոլոխի որ ի պրտուեաց տա-  
պանակին ի մէջ ջուրյն զերծանէր ի ձեռաց ամ-  
բարիշտն Փարաւոնի առ ի փրկել զժողովորդն  
Աստուծոյ ի ծառայութենէ եղիպտական տան-  
ջանայն :

Այնովէս և ամենաստորին Գրիգորիս զերծեալ  
ի որոյ Հայաստան նախարարացն՝ ի փրկութիւն  
սպահէր նորին Հայոց աշխարհին և ամենայն արեւե-  
լից կողմանց , իրեւ նետ մի ընտիր ի կապարձա թա-  
գուցեալ ի յունական աշխարհին , որով խոցուեալ  
սատակէր գաներեւոյթ թշնամին , զոր ընտրեալ  
յորովայնէ մօր ի բոյ , և սրբեալ յարգանդին յաղթող  
նահատակ , առաքեալ միանգամայն և վայելու չ  
տուեալ քահանասայալեւ Թարգոմական աշխարհին և  
Ասրանոսպեան զաւակին :

Այդ՝ մնեալ և ունեալ երջանիկն Գրիգորիս ըզ  
ըրիատոսական հաւատոյն զօրութիւն՝ առաքելական  
և քաջալերական համարձակութեամբ եկեալ յան-  
դիման լինէր Տրդատոյ՝ արքային Հայոց , միամու-  
թեամբ և քաղցր հարկանել ծառայութիւն , պաւզ-

սեռն հաւանեալ ձայնի՛ հեղաղոյն քաջութեամբ  
ծառայել Տեառն զօրութեանց մարմնաւոր տէրանց.  
այլ ոչ առ ականէ ծառայութեամբ հնազանդու-  
թեամբ . ուր առանայր երկուս որդիս՝ Ուստա-  
կէս և Արդանէս : Խակ թաղաւորն մովեգնեալ ի  
դիւացն զանազան և որդալից սպաշտամունան՝ ձեռն  
արկանէր յամենազօր նահատակին Քրիստոսի օժան-  
դակութեամբ չար միշալին կամեցեալ խրն ծառա-  
յել ի խորիսորատ կորատեան զիցն ազտեղութեան  
սպաշտամանն . բազում զանազան տանջանօր չար-  
շարեալ զսուրբն՝ ոչ ինչ կարաց զամադիւտ լինել  
յանշարժելի հաւատա երանելոյն , այլ օր քան զօր  
բաջարար մրցեալ առնու զյաղթութեան մրցանակն  
ի վերայ աներեւոյթ և երեւելի թշնամոյն : Եւ  
իբրև ոչ ինչ կարացեալ սպաճարանս դտանել փոխելոյ  
զառաքինին յուղիզ հաւատոյն Քրիստոսի . յայն-  
ժամ ազդեալ չարին ի միտս չար արրանեկացն  
տարեալ ընկենուին զսուրբն Գրիգորիոս յանհա-  
րին խոր միլապին Այսուշտատ քաղաքի, յորում զե-  
րեքտասանն ամ յօձախտառն ընակէր վայրի, մինչեւ  
այլ ևս կանայր ումանր երանելիք Հոխիսիմէ եւ  
Գայիսանէ հանդերձ երեսուն և հինգ ընկերօր ի նո-  
րին ի Հայոց արքայէն կաստարեցան : Եւ երանելեացն  
լինեին մարմինք բացընկեցիկ :

Եւ ապա սոմենազօրն Աստուած յոյց ելանէր երա-

նելոյն Գրիգորիոսի և Երանելի նահատակացն սըրբոց Հռիփախմեանց, և պատուհաս մեծ հաստցանելը ի վերաց աշխարհին Հայաստանի, (որ) ոչ պատուհասի այլ մեծի ողորմութեան է նշանակ, որպէս Խորատել զիրելի որդի և անտես առնել զօտարացեալ խորի : “Արքին խալ գերն, զորա նուիրօն եւ զոհոր մեծարէին, իրրեւ ի վերաց թշնամեաց հասեալ՝ տային մոլեգնել եւ ուտել զիւրեանց մարտինան, այլև զնորին թաղաւորին զիւրագարանա ի խոզի դարձուցեալ բնութիւն՝ յեղէ գն լինել փախատեաց : Յայնժամ ահ եւ երկիւղ սասափկ զամենեսեան լնոյր, մինչեւ մեսցին կորատեան կենաց աշխարհին : Մինչդեռ յայսմ ահի եւ ի գովման կոյին ի մեծամեծաց մինչեւ ի գորունա՝ երեւէր ի տեսլեան զիւրաց հրեշտակ ողորմութեան Աստոծոյ կնոջ ումեմնելու խորսովիդուստ անուն՝ քեռ Տրդատայ՝ Հայոց արքայի. «անդասրին է ձեզ, ասէ, ի հարուածոյդ զերծանել բայց եթէ ի ձեռն սրբայն Գրիգորի. երթեաւ հանէր զնա ի խոր վիրապէն» : Եւ զարթուցեալ պատմեր զերազն, և ամեներեւան բժիշկանեալ զարթովին զիլինն և առէին. « և դու ուրեմն զիւահարի՞ս . խակ արդ եւ զաւկերսն անզամ զինչ ( չէ ինչ ) հարէ է գտանել զնորա » : Եւ իրրեւ կրկնեալ եւ երերէնեալ զտեսլին. յարուցեալ առ վտանդի հարուածոցն՝ չողան ի բերան վիրապին թերահաւատքն

կազմ ի կազմ բարբառել բանիւն Աստուծոյ. «Եւ  
ի գուրս եթէ իցես կենողանի» . եւ վաղվաղակի զե-  
կուցաներ զիեւալն կենդանի : Բաղում խնդու-  
թեամբ ի վեր առեալ՝ ածին ի Կոր քաղաքն թա-  
գաւորանիատ Հայոց արբացին : Այնուհետեւ զի-  
ւացն առեալ զմարդիկն ակամաց ընդ առաջ մեծին  
Գրիգորի տանեին մոլեզնելով եւ ուտելով զմար-  
մինս զիւրաքանչիւր Եւ զմազաւորն նոյնպէս յեղե-  
ղանեին առեալ զիւտցն ածէին ընդ առաջ սրբոյն .  
որոյ ծունդ եղեալ մեծին սրբոյն Գրիգորի արտա-  
ռօք խնդրէր յամենողորմն Աստուծոյ զիրկոթիւն  
թշուառացեալ ազգին . եւ անդէն վաղվաղակի ընդ-  
տանեին ի ձեռն սրբոյն աղաչանաց զրժ շկոթիւն  
մարմնական տանջանացն , ընդ նմին եւ զհոգւցն  
լուսաւորութիւն :

Եւ իրեւ ոչ ումեր ինչ զեկոցեալ վասն երա-  
նելի կանանց որ պատկեցան՝ զՀոխիսիմեանն ասեամ  
եւ զնորին ընկերացն , ինդն իսկ ի խոր վիրապին  
մարդարէական ակամարն առեսաներ զնահատակու-  
թիւն երանելեաց վկացիցն Կրիստոսի . եւ ասէ  
«ո՞ւր են նշխարք սրբոցն» . եւ մորդիկ զարմացեալ  
«զո՞ր սրբոցն սոսէ, ասէին» : Եւ իրեւ լուանի նմանէ  
զանուանս պատկերացն . ասքա ի միտ առեալ՝ ցուցին  
զպատուական և զամենասուրբ նշխարք սոսէրացն :

Եւ առեալ Գրիգորիոսի պատէր խրեանց իսկ սրա-

տառատուն հանդերձիւքն՝ չարարեալ ուրուք ինչ  
արժանի յերանելեցն մերձեցոցանել ի մարմինս,  
մինչև սրբեալը ելանէին յաւաղանէն վրկոթեան .  
և դնէր ի հանգատարանի, ի տեղւոջն յորում պասեւ-  
ցան սուրբքն :

Խակ զրովոր աշխարհն Հայոց ուսուցանէր եւ  
խրատէր և կնքէր կենասատու խաչին և լուսաւորէր  
մկրտութեամբ աւաղանին վրկոթեան. և արժա-  
նաւորս առնէր զանճառելի Հոգւոյն ընդունիլ շնորհս  
և ճաշակմամբ կենասատու մարմնոյ և արեան Տեսանու-  
թւ ոչ կամեցեալ իւր խակ ունել զաթուահանայա-  
պետութեան . հրեշտակ Աստուծոյ եկեալ առ մեծն  
Գրիգոր՝ առէ ցնա. ոչ հեռափիլ և յամսաել առ խո-  
նարհութեան՝ կարդին. այլ յայսմքանապէտոնու-  
կրկին զանանցական պատիւն որ վասն քահանայա-  
պետութեան շնորհին Աստուծոյ : Եւ առեալ այնու-  
հետեւ դրահանայապետութեան եւս պատիւն . եւ  
երթալ լուսասորել զլյոսոց և զլյուզանից աշխարհնու-  
թւ երթեալ ի Հարանդ դաւառ՝ ուսուցանէր և  
խրատէր պահել զպատուիրանս Որդւոյն Աստուծոյ.  
և արկանէր հիմն եկեղեցւոյ ի զիւզարաղարին Ամա-  
րասայ . և կացուցանէր դործօնա և հրամանաստարս  
շինել եկեղեցի : Եւ երթեալ ի Հայոց աշխարհն՝  
օծանէր վոխարէն իւր զորդին զլյուզանէս նասու-  
ցանել յիւր ովթու քահանայապետութեան(տուեալ )

հրաման (ըստ) հայրենի վարուց լինել չնորհ հաւասարութեան , որ ուղիղ եւ սպարբինասէր վարուք կեցեալ՝ ուստուհասէր եւ խրառէր զայնուիկ , զորս ի դիսապաշտոթեան զըստանէր յաղանդին . և յանդիմանէր դկին թագաւորին վասն այլանդակ սրունկութեանն : Եւ մինչև մուեալ յեկեղեցի , ի Տարօն դաւասի , զտէրունեանն կաստրէր խորհուրդն չար և դիւապաշտ մարդիկ ժողովեալք բազմութիւն յոց առ ի սպանանէլ զերաննին Վրդանէս խորհրդեամբ կնոջ թագաւորին : Եւ յորժամ վազեցին ի գտիթ եկեղեցւոյն , ի դիւաց սլմոդ կապեալ կաշիմանդեալք եղեն հրամանաւ բարերարին Աստոծոյ ուղաղելութեամբ ( 29 ) ընդ կատճեալք կոյին անմռունչ սակենեքեան , մինչև կաստրեալ երաննելոյն զաստուածեզին խորհուրդն և ի զուրա եկեալ՝ զարմանայր : Եւ հարցեալ զպատճառս՝ խոստովանէին դիւրեանց չարեաց խորհուրդն և զիսմա կնոջ թագաւորին : Եւ նա կացեալ յարօթմ՝ ձեռնազրութեամբ զամեննեսեան բժշկիք , և խրառէր մի ևս զործել չար ինչ , այլ ապաշխարութեամբ զտանել ողորմութիւն :

Եւ սորս երկու որդիք . ( անուն ) միումն Յու սիդ առարբնասէր և սրբամիտ վարուք . որ եւ սա նորին խոստովանողական վարուքն կատարեալ պակեր . քանզի հասեալ յամբոռ քահանացապետոթեան :

հօրն՝ յանդիմանէր զթաղտաւորն վասն մեղսաակը չա-  
րագործութեանն. և նորա հրամացեալ անդէն յեկե-  
զեցւոցն բրով սպանանել զնոս Եւ անուն միւսումն  
Գրիգորիս յանուն հաւուն . և համանման և հաւա-  
սար նորուն վարոցն առարինութեան, ոչ ամուսնա-  
ցեալ ի կարդս աշխարհականս . այլ ժամանակեալ  
բաղձացր հացրենի հոգեւոր ժառանդութեանն : Եւ  
անդէն ի տղայական տիտոցն վարժէր զինդն Աստուա-  
ծաշունչ զրոց կրթութեամբ, և զմարմնական ըլ-  
դացութիւնս պահոք և աղօթիւր պարկեցացու-  
ցանէր, զշողին սիրոցն հաւատոք լուսաւորէր, և  
անդէն վաղվաղակի զինդեան հաւոյն զմեծին Գրի-  
գորիափ զգերաշխարհիկն բարձրութեանցն զերկո-  
սեան զպատիւնն առեալ՝ յօրինէր զրահանացապետու-  
թեանն զպատիւ . և զոթուն, և զմարտիրուսութեան  
զամենապատիկ բարձրութեանց պատկն : Գանդի  
զհնդեւտասան ամեօր ձեռնազրեալ յեպիսկոպոսու-  
թիւն զմանուկն Գրիգորիս Արաց և Ազգանից  
աշխարհին . և երթեալ լուսաւորէր զերկոսին զուշ-  
խարհան, և հաստատէր քրիստոսական հաւատովն  
զնառ. շինէր և եկեղեցիա ըստ կարգացե բաղարաց,  
և ձեռնազրէր զերիցունո, և յորդորէր ի պաշտօն  
սրբութեան. և ի յիշատակ սրբոց կանխեալ հանա-  
պատ. և նախանձեալ զրարինախանձ առարելսական  
ուղղութեանն. և կատարէր դհրաման մարմնացեալ

Աստուածորդուցն՝ շրջեալ ընդ ամենայն հեթ անոսս,  
միլլուեալ յանուն Հօր և Ուզւոյ եւ Հոգւոյն որբոյ :  
ուսուցանելու պահել զամենայն տէրունեան պատուի-  
րեալն , և ոչ առնուլ ընդ իւրեանս ուկի , արծաթ  
եւ պղինձ եւ պարկ անդամ ևւ ցուու : Յայսմ  
բոլորից զգուշանալով երանելոյն՝ առեալ ընդ իւր  
վայելուշ եւ յոյժ պատուականագոյն թուակ՝ զմեծ  
քահանայապետին եւ մարտիրոսին Զաքարիայ զհօրն  
Յովհաննու ի սրասուական արենեն նշխարս եւ  
զաւրբն Պանտաղեւոն , որ զաւանեաց զբարուոր  
զաւանութիւնն Քրիստոսի , եւ սրաակեցաւ ի Նիկո-  
միղիա քաղաքի :

Եւ տարեալ զամենաստրը նշխարս վկացիցն ի  
մեծ քաղաքն Յոի Աղվանից իշխանութեան՝ շինէր  
փորբիկ եկեղեցի , եւ զնէր անդ մեծ զգուշութեանը  
մասն ինչ յարենէ Զաքարիայ եւ ի նշխարսց սրբոյն  
Պանտաղեւոնի . եւ թողոց երեց մի սպասակալ եւ  
սպասոնեայ վկացիցն Քրիստոսի . եւ զիտոն նշխա-  
րսց սրբոյն Զաքարիայ եւ երանելոյն Պանտա-  
ղեւոնի առեալ ընդ իւր , եւ երթեալ ի Մասգթաց  
աշխարհն՝ յանողիման լինէր Սանեսանաց թաղա-  
որին Մասգթաց , համաստհմին Արշակունեաց : Եւ  
քարոզէր զանձասելի Երդորդութեանն մի արար-  
չական զօրութիւնն և զմարմիանալն Աստուծոյ  
Բանին , զրազում եւ զանազան նշանագործութիւնո

յերկրի առնել, զիսաշիլն եւ զմեռանիլն եւ յերիբ առուր յառնելն , եւ նովին մարմնով ի յերկինս վերանալն. նոյնպէս եւ յերկրորդ գաղտեանն երեւիլն գատելով զկենդանիս եւ զմեռեալս : Եւ խընդութեամբ ընկալեալ՝ հաւատացին աւետարանական բանին զառաջինն :

Խակ ամենաչարն աստանայ մտեալ ի սիրտ նոցա դրգուէր շանասլ (30) կենաստոր հրամանի բանիցն Տեսան . սկսան դնել բարյաղսյս ճշմարիտ վարդապետական բանից երանելոյն. բանզի ի բարողութեանն ասէր զկամս բարերարին Աստուծոյ՝ ոչ աւարել եւ ոչ յափշտակել եւ ոչ դողանալ. այդ վաստակել ձեռօր եւ վայելել մարդերար, եւ երանելի լինել Աստուծոյ : Եւ ասեն. « Հայոց արքային կեղծաւորութիւն է այդ արգելու զմեզ յաւարէ Հայաստան աշխարհի. և ի՞ւ կեցցոր զի ոչ աւարեացոր » . ապա և զմագաւորն ևս խոնարհեցոց յեալ յիւրեանց ամենաչար կեղծաւորութիւնն : Յայնժամ կազեալ զմանուկն Պրիգորիա՝ ընդ ամենի ձիսց կապէին, ընդ աղի . և արձակէին ի դաշտին Վաստանայ : Եւ այսպէս պատկէր սուրբն: Զոր բարձեալ աշխակերտացն՝ բերէին յԱմարաս զիւզարազաքըն որ էր ի զաւատին Հարանդաց : Անդ եղեալ առեկեցցայն հուսկ ի բեմն ի հիսուսաց կողմանէ, եւ սուրբ արխինն Զարքարիայ ի միում աղակեղին չէ:

եղեալ, և իմիւսում չշի զերանելոյն Պահապալեւոնի ըզնչխարս. և եղեալ զերկոսին չիշն ընդ ամենաստոր նշխարս մանկանն Գրիգորիանի. և ինցեանք փախտուեայ ի Հայս անկանէին : Վասն զի Սանեսան բաղում և անթիւ զօրօրն Հոմաց ի Հայս արշաւէր : Եւ աստուածային բարերարութեանց զօրութիւն տուեալ Հայաստան նախարարացն առի իննդրել զիրէժ արեան մանկանն սրբոյն Գրիգորիանի . և ամենայն բաղմութիւն զօրացն ի սուր անկեալը՝ ոչ մնացր զուժաբեր յաշխարհն Մասդիաց . այլև զամենեսեան խողխողեալ սատակեր յիւրազգայնոյն սրոյ :

Խակ ընդ ժամանակս ընդ այն բերդարազաքն անուանեալ Յոի ( 31 ) ապստամբեալ յԱղվանից թաղաւորէն, և ձեռն տուեալ ի Պարսից արքայն : Եւ եկեալ Արդեսացիր ունէին զբաղարն : Խակ զըտեալ զերէց զաշակերտ մանկանն Գրիգորիանի՝ զորթողեալ էր ի սպասաւորութիւն սրբոցն, զերէցն ըղՅոոյ և զմանուին մարտիրոսացուցին. քանդի էր նորս զտեալ ճիզր ( 32 ) մանուկ մի որ լսէր հաւատոյն Քրիստոնի և հաւատացեալ առնոցր զբրիստոսական կնիրն, և անդէն աշակերտէր երիցուն. և ասկոմէր խելամուտ լինել վարուց քրիստոնէութեան : Եւ զերկոսսեանն ի իւապանս և ի չարչարանս արկեալ՝ ստիպէին լինել մոխրապաշտ դիւացն աղտե-

զոթեան . և իրեւ ոչ կարելին դամապիւտ լինել  
բռնութեամբ՝ մաղթելին զձիոյր մանուկին եւ ասէին .  
«մերոյ աշխարհիս մարդ ես, զիամս մեր արա՛ ,  
և մեծարու առնեմք դրեղ ի մերում իշխանու-  
թեանս » . և երանելին պատսախանի արարեալ  
«ըստ լիցի յառաջադոյն քան զերէցն մեռանիլ ինձ  
վասն անուանն Գրիտոսի, քան բնականալ իյարկս  
մեղաւորաց » : Եւ վաղվաղակի սրով զվասառեալք  
ընդունելին զերանութեան զարակին և զամենալայե-  
լուչ նահատակութեան յաղթանակ մրցանակն ընդ  
իւրեանց հոգեւոր հօրն մանկանն Գրիդորիաի : Զորա  
սուեալ Ասորեաց ուրեմն արեղայից՝ տանելին ի  
Հակո անուանեալ գիւղն . և անդ եղեալ ի զերեզ-  
մանի . և ինրեանք ի տեղւոջն վանս շինէին . և անդ  
է, ասեն, նշխարք երանելեայն մինչեւ ցայսօր :

Եւ լինէր այն առ քաջն Վաչէիւ՝ Աղվանից ար-  
քայիւ . և սիրած ածկեալ կային երանելեաց վկա-  
յիցն ամենասորբ նշխարքն մինչեւ ցթադաւորու-  
թիանն երրորդ բարեկալուտ Վաչադանաց՝ Աղվանից  
արքայի . քանզի ի քաջէն Վաչադանաց մինչեւ ի  
Վաչէ թագաւորք էին Աղվանից թուով ինն . որոց  
տասներորդ՝ բարեկալուտ եւ աստուածատէր թագաւ-  
որին Վաչադան՝ Աղվանից արքաց :

ԺԵ. — Գիր անուանց նախագահ կարգելոց, որը  
յայտնենիթարերէ, և յԱռանց մինչեւ ցերտորդն  
վկացան :

Յարէթ, Գասմեր, Թիրաս, Թարգոմ, Հայկ, Այր-  
մենակ, Արմայիս, Արմայիսա, Գեղամ, Հարմա, :  
Աւան : Առ սովաւ Արտահամ : Աշայն զեղեցիկ :  
Առ սովաւ Խառհակ : Անուշուան, Պարէտ, Արբակ,  
Հաւան : Առ սովաւ Յեսու : Հաւնակ, Վաշտակ,  
Հայկակ, Ամրակ, Առնակ, Շատարշ, Կորայր, Վըս-  
տամ, Կար, Գոռակ, Հրանտ, Ընծակ, Դղակ :  
Հաւրա, Զարմայր, Պերձ : Առ սովաւ Պատիթ.  
Արտան, Բաղդուկ, Հոյ, Յուսակ, Կայսրակ, Ակայոր-  
դի : Առ առ թագ ի Բարելացւոց թագաւորէն :  
Պարոյր, Հրաչեայ, Փառնավագ, Պաճոյճ, Կոռ-  
նակ, Փաւու, (Փաւոյ), միւս Հայկակ, Երտւանդ  
սակաւակեաց, Տիգրան :

Խ սոցա ծննդոց կարգեցաւ Առան նախագահ  
Աղվանից . եւ թիւ աւուրցն յԱռանց մինչեւ ցը-  
քաջն Վաշտական որէրի մեծ աղջէն Արշակունեաց,  
չէ յայտ : Եւ որ ըստ կարգի կային թագաւորք  
տանս Աղվանից՝ անուանք են այսորիկ . Վաշտական  
քաջ, Վաշէ, Ուռնայր, Յաւշագան, Միրհաւան  
(Միհրան), Սատոյ, Ասոյ, Եսուազէն, Վաշէ : Ա-

պա բարեպաշտն Ալաշաղան՝ արքայ Աղվանից .  
յորոց բազումը ի սոցանեն քրիստոնակեր եւ բարի  
վարուք կեցեալ՝ տարան զիւրաքանչիւր ժամանակի  
վախճան : Աակայն ոչ ինչ ումեք ի նոցանեն այս-  
պիսի աստուածային եւ հոգեւոր ծածկեալ զանձ  
յայտնեալ բնձեռեցաւ, որպէս վերջին Ալաշաղանայ՝  
բարեսպաշտ Աղվանից արքայի : Եւ ի հրամանէ Պե-  
րողի՝ Պարսից արքայի, չինեցաւ ի Ալաշէէ Պերո-  
զապատ մեծ քաղաք, որ այժմ կոչի Պարտաւ :

»»

**Ճ.Զ.** — Եկանք և վարք և կարգուորութիւնք Աղվա-  
նից, որ ի Ալաշաղանայ արքայէ եղան. և զիստ  
նշխարաց սրբոց :

Լակ զերեսուն ամ ի Ալաշէէ մինչեւ ցԱլաշաղան  
բարեսպաշտն առանց թաղաւորի կացեալ աշխարհա  
Աղվանից. քանզի ամենաչար եւ ամբարիշտ թա-  
ղաւորն Պարտից զայրացեալ մոլեգներ իբրեւ զկա-  
տաղեալ չուն, կամէք բառնալ զամենայն թաղա-  
ւորութիւնս աշխարհի միանդամայն, չարժել զե-  
կեզեցիս և բառնալ զկարդ քրիստոնէութեան  
և հաստատել կարդել յիւրօւմ իշխանութեան դմո-

լեզնութիւն դիւսակաշտոթեան . որ սմենայն  
սորբ վկայիցն՝ Քրիստոսի սրղադից ձևացյն արխիւն  
հեղուլ յերկիր . և յոյժ անմիւր անմեղաց անձինք  
խողխողեալ լինէին սրով չարին . ոյլ եւ կանայք  
տղայեօք հանդերձ արտօսրահառաւչ ձայնիւ գեր-  
եալը լինէին յօտար աշխարհ դառն սորելութեան .  
բազում նախարարս Հայոց , Վրաց և Աղվանից  
ի մողութիւն դիւսակաշտոթեան առ ի յածել ,  
կործանել , զոմանս բանոթեամբ եւ զոմանս սրար-  
դեօք ի մեծամեծ իշխանութիւնս ընձեռելով , եւ ի  
տեղիս տեղիս ատրուշանս կանգնելով , զօրանայր  
հրալից պաշտամունք դիցն աղտեղութեան . և  
աղդի աղդի սղանդը չարախոհ սաստանայի յոլովեալ՝  
թշուառացոցանէին դհիքացեալ մարդիկն աշխար-  
հին Աղվանից . Ամենապիզն զրագարտեալ սալբո-  
տամութեամբ սրատճառանօք՝ (33) կապանօք եւ  
բանտիւք նեղէր . և ակամայ ի մողութիւն խոնար-  
հեցուցանէր : Յնդ նոսին և Վաչագան առ բուռն  
սաստիկ չարութեան թագաւորին ակամայ հառա-  
նէր մողութեանն . այլ գաղտ ի յազօթո եւ ի սրահա-  
ն ի Քրիստոսի խոստովանութիւնն կանխիէր հա-  
նապաղ , մինչեւ այց արար ամենողորմին Աստուած  
հեղման արեան որբոց վկայիցն՝ Քրիստոսի եւ աւե-  
րածոյ սուրբ եկեղեցեաց , եւ դուր խողխողման  
ծերոցն եւ երիտասարդացն , եւ զերութեան կա-

նանց եւ տղայոցն , եւ կորատեան հոգեացն անմեղաց որ մողոթթեամբն եղեն հիգացեալ :

Եւ ասաքեաց զաւազան բարկութեան բռնառոր եւ արեանարդու թագաւորին Պարսից դշեփթաղական աղջն . որոց հարեւալ սաստակեցին , համացինչ արարին զամբարիչու իշխանն Պարսից աշխարհին հանդերձ խսունիճաղանձ ռամկօրն , անթիւ զօրացն բազմութեամբ : Եւ թերեւս ի վերայ սորս մարդարէանայր երջանիկն Եսայիսաս զտեսիլն զոր տեսանէր ի վերայ Բարելոնի օրա դիմեւալ զան հակայք յազեցուցանել զսրումնութիւն իմ . խնդան , զան եւ միանդամայն թշնամանեն : Տէր զօրութեանց հրաման եւս ազդաց բարմաց դալ յերկրէ հեռաստանէ , և հասեալ է Տէր իւրավը սպառապինօր . ողբացէր ամենայն պիղծ , չոր զաւակիրդ՝ զի մերձ է օր Տեսան . եւ բեկումն յԱստուծոյ հասեալ է ի վերայ ձեր . վասն ոյսորիկ ամենայն ձեռք լրցին . եւ երկունք կացեն զրեղ իրրեւ զիանայս ծննդականս . զի ահաւամիկ օր Տեսան հասեալ է ի վերայ քո մարդախաղխաղդ՝ անհարին , անրժշկելի բարկութեամբ անզաւակեցուցանել զբեկ յերկրէ , եւ իջացանել զհնացեալ չարութեամբ անձնող սրախողիսող տրումնութեամբ ի դժոխա . եւ կորուսցէ զհարաբութիւն անօրինիտ . եւ զբարձրութիւն ամբարտաւանիութ կորացուցեալ յերկիր կործանեացէ : Քանդի

որ ըմբռնեսցին ի չար զաւակէն՝ ի պարտութիւն մասնեսցին, եւ ժողովեալք ի միասին սրավ խող խողեսցին. Եւ զորդիս նոցա առաջի սատակեսցեն. և զունա նոցա աւար հարկանիցէն. Եւ դեանայս նոցա առաջի նոցա խայտառակեսցեն, եւ լցցին տռնիք նոցա ազաղակով եւ գումիւ : Զաւակ չար՝ պատրաստեա՛ զորդիս քո ի սպանումն վասն մեղաց հօրդ խրեանց. զի մի յարիցեն եւ ժառանգեսցեն զերկիր, եւ լցցեն պատերազմօր :

Յարուցից ի վերայ նոցա, ասէ Տէր Արտօնթ, եւ կորուսից զանուն նոցա յերկրէ եւ զարմ եւ զուակ. ամենայն թագաւորք երկրի ննջեսցեն սրատուով՝ ոյր խրաբանչխր ի տան խրում. Եւ որդիք նոցա յաջորդեսցեն եւ զթագաւորութիւնս նոցուն, այլ դու անկցիս ի վերայ լերանց իրրեւ զմեռեալ գարշեցի ի մէջ բաղմաց զիականց կոսորելոց սրավ, ի ծերոց ի դժոխու, զի աստականեցեր զերկիր իմ. Եւ զժողովուրդ իմ անողորմ կոսորեցեր. արդ՝ այսուհետեւ մի մնացես յաւխեան : Որում արդա՛րեւ երկրորդեալն կատարեցաւ մարդարէութիւնս այս ի վերայ Պարսից թագաւորին ամենաչարին Պերոզի, քանզի սկայարար հրամանով աստուածային զօրութեանն եկեալ Հեփիթաղական ազգն յազեցուցանել զարտմութիւնն ըստ հարկութեան Տեառն. զի նախ զորդիս նորա սռաջի նորա հարեալ սատակեցին.

սըլով թէրանոյ զչար զաւակն եւ զբաւանդակ  
նախարարն և զկուսակալս աշխարհին, ընդ նմին և  
զխառնիմաղանձ անթիւ զօրացն բաղմութիւնս եւ  
զնոյն ինքն զթագաւորն զամենաչարն զՊէրող  
ասեմ սրով խողխողեալ՝ ի մէջ անթիւ դիականցն  
լինէր կորուսեալ, և զթաղումն իշոյ թաղեալ . և  
զսմբարշտութեամբ մթերեալ ամբաւ մեծութիւնն  
աւարեալ ի բաց բառնային . եւ զկանոյս նոցուն  
խոյտառակէին. եւ ոչ խնայէին ի մանկունս նոցա ,  
եւ ոչ ողորմէին որրոց նոցա : Եւ արդարեւ յազե-  
ցուցանէին զարտնութիւն բարկութեան Տեսուն .  
և զհատուցումն չարեացն՝ զբ ամենայն աղդաց  
հասուցանէր արեանարբուն Պէրող եւ եւ թանասնիկ  
դարձաւ ի զլուխ նորա :

Յայնմամ լցաւ եկեղեցի Աստուծոյ երանու-  
թեամբ . զի զչար մանկունսն զայրացուցիչս կո-  
լեալ հարին ոչ զբարի այլ իրերան որոց թշնամեացն,  
որ չարաշար մահուսամբ վերացան ի կենցաղոյս : Այլ  
եւ զնոյն ինքն զպիոդն հանդերձ չար զաւակաւն  
սըրախողխող չարտմահ զառնութեամբ բառնային  
յաշխարհէ :

ԺԵ — թագաւորելին Աշտարշակոյ (34) . և ի նմա-  
նէն առնուլ Աշխազամայ զիւր բագաւորուրին  
Աղվանից :

Եւ յետ բառնալը չարին Պերողի չարաչար մոհ-  
ուամիր յաշխարհէս՝ թագաւորէր Վաղարշակ՝ հօր-  
եղբայր նորա : Եւ կատարի առ Վաչագան տէ-  
րունեան ասացեալ բանն՝ եթէ որ արասցէն եւ ու-  
ստացէն նա մեծ կոչեսցի յարբայոթեանն Աստո-  
ծոյ : Զոր ասուածամէր արքայն Վաշագան արար  
յառաջ քան զիմքն դարձուցանել ի մեղանչական  
ճանապարհն , և զործել բաղում և զանապան  
տարինոթիւնու , և զյոլով աշխարհն ի զիւական  
չարագործ սրաշտամանէն ի սուրբ եւ յուղիով յաստ-  
ուածալաշտոթեանն դարձուցանել ի պողոտայն , եւ  
բարի քառոթեամիր (35) աւարտել զառաքինոթ-  
թիւնն : Քանողի խրոյ աշխարհին նախարարք , որք  
միանդամ մողոթեամիրն ազտեղացուցեալ էին զո-  
գւոյն խոհականոթիւն դիցն դարշելի սրաշտամամբք  
և զմարմինա սրդապից սրոնկոթեամիր խենեշտո-  
ցեալ , յորդորական խրատու ածէր ի խստովանոթ-  
թիւն Փրիառոսի ճշմարտոթեան . և ստոցանէր  
Աստուածաշունչ զրոյ վկայոթեամիր թէ՝ հաւաս-  
տես լինելոց է յարտ թիւն մեռելոց հրամանաւ Աստ-

ուածորդւոյն Յիսոսսի, և անշէջ հրովարտան դատաւա-  
տան յանանց յաւխտենին յաւխտենից (36) որացո-  
ղոց և ոչ խառապվանելոց և ամբարիչու շարագործոց  
և մշտնջենաւոր և անձառելի փառուց սրարդեր  
խառապվանազաց դանկննելի Աստուածութիւն և  
ըստ կամաց նորուն Աստուածութեանն, բարե-  
զործութեամբ յարուցելոց : Եւ որք յետ չնորհի  
աւազանին վրկութեանն էին զառածեալր ի մոգու-  
թիւն, ապաշխարաւթեամբ հաստատելր . և որք ի  
տղայութեան իսկ երթեալ էին զհետ կորատեան  
ճանապարհին, հրամայեր լուսաւորել աւազանին  
վրկութեամբ . և արժանաւորա տանել ճաշակման  
առնենաստրը մարմնոյ և արեան կենդանացուցիչ  
Որդւոյն Աստուծոյ : Եւ ի՞ քն յոյժ ցնծայեալ ուրա-  
խանայր, ոչ այնշատի ընդ թագաւորութիւն, որչափ՝  
բնդ բոլոր նախարարաց աշխարհին միաբանութեամբ  
հաւսարել (37) ոխտի եկեղեցւոյ. լուեալ ի կե-  
նարար պատուիրանէն թէ՝ որ դարձուցանէ զողի  
ի մոլար ճանապարհէն, և ուստցանէ առարինատեր  
վարս, զիսր հազիմ վրկեսցէ ի մահուանէ, և բաւես-  
ցէ զրազմութիւն մեղաց խրոց :

Եւ օր բան զօր յորդորելով յաստուածառեր սրաշ-  
տամանա՛ անձանձրոյթ զյիշատակս սրբոցն կաստա-  
րեր : Հրաման տացր ոյնուհետեւ Արձոխ ամոր  
աշխարհին յիւրում ծառացութեանն ի բաց լրանել,

թողուլ զգիսապաշտութեանն զկարգս, դաղուեղի ղիցն զոհամատոյց պաշտամունա, յոյժ բարեմիտ եւ բարերար եւ աշխարհաշէն և հրամանատար ամենայն կողմանց իւրոյ թագաւորութիւնն հանեալ, և զիշխանոց զբնիկ իշխանութիւնն բարձեալ էր՝ անդրէն առ իւրաքանչիւրոն դարձուցանել զտերութիւնն :

Յայնժամ Աղվանից աշխարհն հարեալ զիւրեանց հայրենի թագաւորութիւնն և առեալ զԱ աշաղան ի թագաւորական զաւակէն քաջ արութեամբ, իմաստուն և վարժ խոհականութեամբ, բարձր և վայելու չասակառ, որդի Յազկերտի՛ եղբօր Վաչէի՛ Աղվանից արքոյի. և տարեալ թագաւորեցանեին ի ձեռն Վաղարշու արքային Պարսից : Եւ եկեալ յաշխարհն Աղվանից խնդրէր հնարս պատճառանաց, որով մարթացէ ի բաց թողուլ զաստուածուրաց զմոզութեանն զդենն. և յայտնապէս իսկ բերեալ ի իստուլանութիւն՝ Քրիստոս Աստուած ձշմարիտ դու : Յայնժամ նախախնամութեամբ մեծին Աստուծոյ աղդեալ ի միսս թագաւորին՝ հրաման տայր Վաղարշակ՝ արքոյն Պարսից եթէ՛ զիւրաքանչիւր օրէնսն հաստատուն պահեսցեն ըստ իւրաքանչիւր ախորժ ելց իսամաց, և մի՛ զոր վտանգեալ դարձուցանել ի մոզութիւն : Եւ լուեալ զայտ բարե-

պաշտ և աստուածաեր արքային Վաչագանայ  
բազում խնդալից բերկրանօք դիմեալ յեկեղեցի  
Աստուածոյ՝ բազում ազօթիւք և արտասուօք խո-  
տովանէր զմշտնջենաւոր և զանձառելի սուրբ  
Եղբորդութիւնն . եւ մազթէր բազում ազաքա-  
նօք զեսպիսկոպոսն եւ զերիցունա եւ զանարատա-  
կանան եւ զամենայն ուխտաւորս եկեղեցւոյ ցաւա-  
կից եւ ազօթակից լինել իւր առ ի հաշտեցուցանել  
զամենողորմե Աստուած : Եւ ինքն ի սրահ եւ յա-  
զօթս եւ յողորմածութիւնս ազբատայ առաստավէս  
կանիւէր հայեցեալ յերանելին Պետրոս, որ յետ  
ուրացութեանն կարաց զըսիս առաքելոցն լինել, եւ  
միանդամայն ժականակալ և իշխան երենից արքա-  
յոթեան. դարձեալ ոմն յաշակերտայն Տեառնթեր-  
ահաւատեալ, և յետոց Տէր և Աստուած խոտովա-  
նելով կարս. զկարգ առաքելութեան , և այլ ևս բա-  
զում և յողովք մեղուցեալք ի ծայրս առաքինու-  
թեան ընթացան . և եղեն ժառանդաւորք մշտն-  
ջենաւոր և վայելչական արքայութեան :

Ընդ որս բարեպաշտ թագաւորն հայեցեալ՝ սըր-  
բեալ մարրեաց զինքն յատակ հաւատոյն առաքի-  
նութեամբ ճշմարիտ դարձին առ ճշմարիտ Աստ-  
ուածութիւնն . եւ այլոց ևս բազում աշխարհաց  
րըժիշկ լինել առ բոլորեցունցն Աստուած Յիսուս  
Քրիստոս , և ազատել ի դառն աստանացական,

ծառացաթենէ . քանզի թժշկացն իսկ է հմուտ և  
առաւել տեղեակ թժշկութեան, որ յիւր մարդինն  
առեալ դժնողակութիւնս իւրոց խոցման եւ զա-  
ռողջութեան ի ձեռն հնարից և բազում պաճա-  
րանաց թժշկական դեղոց ընկալեալ , նովին դեղօր  
և զայս վիրաւորս կարող է վազիվազակի ածել յա-  
ռողջութիւն : Այսուդէս և մեղոց ցեսոյ որ որ դառնաց  
առ Աստուած յամենայն սրտէ , եւ թժշկական դեղոց  
արաշխարութեան ընդունի բառողջութիւն հոգւոյն ,  
և նովիմբ կենարեր դեղովին խոստավանութեան  
եւ առաշխարութեան կազող է եւ այլոց ևս առողջա-  
ցոցիչ և նորոգիչ գող հոգւոց եւ անմահացոց ցիչ  
մարմնոց . և զառնալ ամենելիմբ ի սուրբ և ի պար-  
կեշտ բրիաստոնէութեանն պաշտօն :

Պատուհաս և տուդան ի վերայ կարողէր , որ որ  
բաղին արացէ և դիսթ հնարեսցէ , և կամ եթէ  
զինչ եւ իցէ դից աղաւեաց (38) պաշտօն տարցէ ,  
և դիարդ բրիաստոնէութեան ամբողջ և հաստատոն  
ոչ պահեսցէ : Եւ զիախարդու և զդիսթու եւ զբուրմ  
յետ միանդամ եւ երկիցու խրատելոց , և ի նմին  
չարութեան դացի ի զործ , յայնժամ չարաչար կա-  
պանօր և զանփար ի զուռն արբունի հասուցեալ ,  
մեծագոյն պատուհաս կրեսցեն : Եւ զբազում կա-  
րարդու այնուհետեւ և զդիսթու և զբուրմա՝ զո-  
մանս խեղղելով , զոմանս շիտթակու առնելով , եւ

զոմանս յատրկութիւն արկանելով, եւ դյողով խրա-  
տելով՝ առեալ զրբիառնեական կնիքն՝ առներ ու  
սեալս աստուած գիտոթեան ճանապարհին Եւ կար-  
գեալ տեղեաց տեղեաց եպիակոպոս և երիցուն և  
հայեցագա. և ի Կամքէնս եւ ի յԱղվանս զնոյն հրա-  
մանս ասատից կարգէր. հաստատէր եպիակոպոս և  
երիցունս և սարկաւագունս. բոլոր խել ու խառ եկեղե-  
ցւոյ մեծարեալը և յարգեալը էին յամն թագաւորու-  
թեանն բարեկազտ Վաշագանաց :

«»

ԺԲ. — Պատմ կարգելոյ դպրոցս արքային վաւա-  
գանայ ըսրամնեանդ մանկանցն դիրաց. և  
դրառնել զպիդ աղանդն մատեանատորեան.  
և վախնան նոցուն :

Յաստուածուատ պատեալն այն Վաշագան հաս-  
մացէրժողովիել զմանկոնս կախարդացն և զիսթայ  
և քրմաց և մատնահատոց և զեղաստուաց. հրամայիքը  
ի դպրոցս ունել, և ուսուցանել զաստուածեղէն  
ուսումն և տեղեկացույանել վարոց քրիստոնեա-  
թեան առ ի հաստատել : Եւ յորժամ ինքն ի զիսզն  
դայր ի կատարել դյիշասակո սրբոցն՝ նստեալ  
ինքն ի դոկտորասանն՝ զորովիս զիսթայն եւ քրմացն

զինգեամբ կացուցանէր գործայաբար բակ առեալ  
բազմութեանյոյժ : Եւ ոմանց զիրս և ոմանց պնա-  
կիսո ի ձեռն ունելով, և միարան առ հասարակամե-  
նեցուն մեծաձայն հրամայէր կարդալ . եւ ինքն ու-  
րախ լինէր առաւել քան թէ մեծագոյն որեք (40)  
գտեալ առար :

Զեռն արկանէր յուղել եւ քննել եւ խնդրել զչար  
աղանդն մատնահատութեան . քանդի երկոչեան  
մարդասպանութեան են աղանդը : Եւ մինչդեռ  
յայսմ էր ի խնդրուածս՝ մարդասէրն Աստուած  
կամեցաւ ի ձեռն աստուածասէր թագաւորին բառ-  
նալ զչար աղանդն յաշխարհն : Քանդի ի բա-  
զում ժամանակաց , որպէս լուեալ էր Վաչէի  
զչարագործութիւնն աշխարհին Աղվանից , այլոց  
թագաւորացն աշխարհին Աղվանից ոչ կարացեալ  
ի բուռն առնուլ եւ կամ թէ անփոյթ խել արարեալ .  
խելանիծեալ և չար սպարաֆկ մարդպանքն չատ անդամ  
ի բուռն առեալ , եւ կաշառօք ի բաց թողեալ :

Խել ի ժամու միում մինչդեռ կատարէին զչար  
գործս մատնահատութեան յամուր մայրուոն առ  
ափն Առւր դետոյ , չորիսր ցցիսր ողբկելով զչորեցունց  
բութոյն կապեալ զմանուկ մի , և մորթէին կեն-  
դանւոյն . այլ ումեմին մանկագոյն պատանեկի դէսլ  
եղեւ ձանարարհու հուսդ անցանել առ նորօք . եւ  
ի վաղի անդ ի ներքս յառեալ տեսանէր զմարդա-

Խողիսաղ չարագործացն չարխա : Եւ նոցա դշետ ել՝  
եալ՝ կամէին ունել և զնա ևս, և վախտեայ եղեալ  
մանկանն՝ անկանէր ի կոր գետ . և ի միջոյ գետոյն  
ծառ մի ի կղղւոջն զիօվեալ . և ի յուղոյ անցեալ  
ելանէր ի ծառն՝ չպիտելով չարագործացն . և ի միտ  
առեալ ճանաչէր զմարդիկն . և զերծեալ անցանէր  
ընդ գետն . և եկեալ վութապէս սրատմէր արբային :

Եւ լուեալ թագաւորին՝ յաղօթս կացեալ դոհա-  
նայր զմարդասիրէն • Քրիստոսէ, և հրամայէր ոխոտի  
եկեղեցւոյն որահել և աղօթս առնել զի յայտնեացի  
շար զիւապաշտոթիւնն , և բարձցի յաշխարհէս :  
• Քանդի սաստանացի այսողէս կալեալ էր զմիտո խր  
շար արբանեկաց մինչ զի անկարեցի ումեք էր զչար  
աղանդոյն մարդիկ ի խոստումն ածել : Եւ իրբեւ  
հրամայէաց թագաւորն ունել զմարդիկն, զոր ի խող-  
խողման խակ տեսին , և յոլովադոյն այլ ևս մարդիկ,  
տոր ի ձեռն համբաւոյ զիտէին, և բազում դանիւր  
և շարաչար տանջանոր ի վործ առեալ՝ ոչ կարէին  
ի խոտ կացուցանել զշարագործան . ասրա բարկ  
բացախ և բորակ խառնեալ և զերկերեալ ( 41 ) զշա-  
րագործան արկանել հրամայէր ընդ ունկան , մինչեւ  
աչքն լնագոյն եղեալ շրջէին համայն . և յայնմ  
զառն տանջանան զոչ և զուրաստ կալեալ՝ շինէին  
խոստուկ :

Խոկ իրբեւ յԱստուծոյ յաջողեալ էր ի ձեռս թա-

գաւորին, որպէս եզեն ասացեալ, բառնալ զշար  
աղանդն յաշխարհէս, խմաստթեամբ խորհեցա  
ածել ի խոստ մն. հրամադիր զամենեսեան տանել  
ի տեղի սպանման. և զմի ոմն ի նոցանեն, որ Եր  
մանկադոյն աւուրրը, զառաջեստ հրամացեաց թու-  
զուլ. և երգուեալ մեծապէս թէ՝ զրեզ չհրամացեմ  
սպանանել եթէ խոստովան լինիս և հաւատալ ցու-  
ցանես գհանդամանս զիսապաշտոթեանն: Եւ ման-  
կանն սկսեալ և զզլուխն ընդ երկիր ածեալ և ուստ-  
մեալ դիսորհուրզս չար սպանդին տաէ. « դեւն յայտ-  
նապէս դայ ի մարդոյ կերպարանս, և հրամայէ յերիս  
դասս լինել և մէն՝ երիս մարդս ունիլ, և մի խոցել  
և մի սպանանել. այլ ողջոյն հանել զմորին, եւ դա-  
ջոյ ձեռին դրոյթն եւ մորթովն տանել ընդ լանջմն,  
եւ ի ձախոյ ձկոյթն հաստանել եւ լուծանել. եւ ըդ  
ձկոյթն եւս ի ներքս նոյնապէս. եւ նոյնապէս առնել  
զոտիցն մինչդեռ կենդանի կայր մարդն. եւ ապա  
սպանանել. եւ զմորթն հանել եւ կազմել եւ դնել  
ի սասպատիո:

Եւ իրեւ ժամանակ չար սրաշտամանն եկեալ  
լինի, արարեալ աթոռ. երկաթի ծալածոյ, եւ ոտքն  
այն ի մարդոյ սափյն նմանութիւն, զոր թերեալ խեկ  
տեսար բազումբ. եւ հանդերձ ինչ սրատուական  
զնեն ի վերայ աթոռոյն: Եւ եկեալ դեւն դդենու  
գհանդերձն, եւ նստի ի վերայ աթոռոյն, եւ առեալ

զէն մարդոյն զժորթն մատամրբն հանդերձ տեսաւնէ : Եւ եթէ չկարեն ունիլ զսակն՝ ( 42 ) զծառոյ կեղեւ հրամացէ հանել, եւ արջառ կամ ոշխար զենեալ առաջի նորա զոհ առնեն . եւ ուսէ եւ ըմակէ ընդ չար պաշտօնեացն . եւ ձի թամբեալ եւ սանձեալ կազմ սրահն , եւ հեծեալ ի ձին արշաւէ այնքան մինչեւ զկայ առնու ձին . եւ ապա ինքն չքացեալ աներեւութանայ : Այսպէս առնէ տարոյ տարուոյ ( 43 ) : Եւ եցոյց զայր եւ զկին աղանդոյն չարութեան . եւ ապա սցըր եւս եկեալ յաղանդոյն զնոյն խոստովանեցան : Եւ հրամացեաց ապա ի ազատորն նմին առն , որ պատուեաց զայս տմենացն , եթէ քեզ արեւդ չնորհեալ վասն երդմանն , զրբ վկայեցի . բացց արդ որպէս զայլոն առնէին դոնոյնալէս արաւ զնոսա : Եւ որպէս խոստուկն եղեւ նոյնալէս արար զբազումն ի նոցանէն առաջի բազում արբայական բանակին : Եւ կէսն ի նոցանէն յիւրաքամնչիւր դեօդս տանել առաջի նոցուն ընտանեացն՝ յիւրաքանչիւր դիրա նոյնալէս խողխողեալ , և բազում դեղասոսս հրամացէր սպանանել . քանզի և այն աղանդ ( 44 ) էր պաշտամանն՝ զոր դիւին ի տարուոնն միտում մարդոյ հրամացէր տալ և սպանանել . և եթէ այլում չկարէր տալ , այնչափ նեղէր զեւն , մինչ զիւրում ընտանեոյն տայր տանել զմահու զեղն :

Եւ այլ եւս աղանդք դիւապաշտութեանն , զի մի  
գեւն կոյր առնէր , և մինն՝ պիտակ , որբ հեղղոյին  
առնել զպաշտօն չարութեան . եթէ զայլ որ մատ-  
նեալ կախարդութեամբ չար դիւացն , զնոյն աղէսս  
կուրութեան և պիտակութեան ի վերաց հասո-  
ցանեին՝ զորս ի բուռն առեալ թաղաւորին՝ չարա-  
չար տանջանօք բառնայր յաշխարհէս : Եւ զայլս  
անդամ ջնջեաց յաշխարհէն Ազգանից իրրեւ բաջ  
և առարինի մշակ ջերմագութ սիրով խնամ տարեալ  
անդաստանացն՝ զփուչն և զորոմն ի բաց խլելով ,  
և զսերմն բարի սերմանեալ և տարածանեալ առ ի  
պտղարերա առնելոյ երեսնաւորա ևւ վաթսնաւորա  
ևւ հարիւրաւորս առնելով : Յայնժամ բաւական  
ևւ առաստառուր ողորմածին Աստուծոյ հայեցեալ  
յառնն ամենաբարս բարուցն վայելչութիւն , եւ տե-  
սեալ թէ որսկէս վոյթ ունի առ աստուծացին կա-  
մացն կատարումն , այնուհետեւ չորհեաց՝ ուր ու-  
րեք հոգեւորական եւ անարատում գանձ կայր ծած-  
կեալ՝ նշխարք ամենասուրբ վիսյիցն Քրիստոսի :

ԺԹ. — Յայտնութիւն նշխարաց սրբոյն Զաքա-  
րիայ՝ հօրեն Յովհաննու և Երանելույն Պանտա-  
յևնի որ վկայեաց ի Նիկոմիդիա քաղաքի,  
զոր տարեալ մանկանն Գրիգորիսի յաշխարհըն  
Ճղբաց :

Բաղում նշանը եւ արտեստը լինէին ի քաղաքըն  
անուանեալ Յոհի, ի տեղւոջն, յորում Երանելի վկա-  
յիցն Քրիստոսի նշխարքն կային, իրրեւ ոչինչ ումեր  
գիտելով զզիր նշխարաց սրբոցն խմացան. զի աշ-  
խարհն հեթանոսը էին՝ երթեալ ջերմուտը եւ ախ-  
տաժէտք հող առնուին յեկեղեցւոյն ուր նշխարք  
սրբոցն կային : Թռչակէտ եւ հեթանոսը էին՝ լինէր  
մեծ բժշկութիւն. իսկ ամենաչար Պարսկաց սրագան-  
ձական սրաշտօնն, զի միշտ հակառակ կայր եկեղե-  
ցւոյ Աստուծոյ, մտեալ Պարսկկ մի մոգ ուր կային  
սուրբ Զաքարեանց նշխարքն, առ ի ծաղր առնելոյ  
կամիր զպէտս խր վճարել . եւ իրրեւ լուծեալ ըդ  
խոնջանն աղլիքն ի վայր թափեալ չարաչար տան-  
ջանօր ելանէր ի կենցաղոյս :

Զայս նշանադործութիւն Յունան՝ Յունաց ( Է 5 )  
Եսովիսարա, որ ի Առկթոց աշխարհին էր ; եւ յոյժ  
ձշմարտափառ, որ խր իսկ ականատես եղեալ սրա-  
մեաց : Իսկ ի Հակո, ուր երանելեաց վկայից նշխարքն

իսպին, որը վկայեցին ի Յոհ առաջի Պերգեսացոյն ( 46 ) Պարսկի, վանաց երիցուն երեւէր ի տեսլեան զիշերոյ, որում անուն էր Յակոբ. այս մի աւագաւուք լուսաւոր կերպարանօք, եւ միւս եւս մանուկ յարանց նոյնագէս ահաղին լուսաւոր կերպարանօք, և ասէին. «Երթի Յոհ, եւ ասա գործակալի բաղարին Խոճկորիկ անուն՝ նախարար յԱղվանից աշխարհէն, մեք նմա ցուցանեմք զտեսիլդ. սուրբք Նմք յեկեղեցւոչն, հանէք զուք եւ նա» : Եւ անփոյթ արարեալ երիցուն ( 47 ). եւ կրկնեալ եւ երերինեալ նոյն տեսիլ. եւ դարձեալ ի վերջ ընկեցեալ անփոյթ առնէր, եւ ապա ուժգին անկեւալ ի հրանդոթիւն՝ մերձ ի մեռանիկ : Եւ եկեալ նոյն արք հրեշտակաշուք եւ լուսաւոր կերպարանօք, եւ ասեն ցերէցն . «Է՞ր աղաղաւ մեռանիս՝ զիտէ՞ս, Նթէ՞ ոչ . եւ նա ասէ. «Եթէ ոչ՝ տեսարք . Եւ նորս ասեն. «Վասն զի հետոեալ յամառեցեր . ոչ չոգար ի Յոհ առ Խոճկորիկ առնուլ զմեր նշխարս անտի. արդ մեռանիս աւաղիմք» :

Եւ աղաշեալ երիցուն հացցէր զբժշկութիւն . զի փութով երթեալ կատարեցից զհրամայեալոն . եւ նոյս ձեռն եղեալ ի վերայ՝ կնքէին կենդանակիր խաչի նշանաւն . եւ վաղվաղակի ընդունէր զառողջութիւն . և յարուցեալ զնայր ի քաղաքն Յոհ : Եւ իրեւ զտանէր զԽոճկորիկ, որ էր դործակալ ի քա-

զարին. և նորա ոչ ինչ հարցաքննին արարեալ՝ այլ, որպէս առն արեղայի, արար ընդունելու միւն։ Եւ վասն դի ի տեսլեանն ասացեալ էր եթէ խոճկու, րիկայ նոյնապէս ցուցանեմ զտեսիլդ. երէցն ոչ ինչ ի վեր հաներ դրանսն. և իրրեւ յընթրեացն ի վեր յառնեին՝ երէցն երթեալ յեկեղեցւոջն հանդչէր հանդերձ երկու եւս երիցամբք, որ ընդ դործակալին էին։ Եւ խոճկորիկն երկու սրատանեօք՝ յիրում վանսն. և եկեալ նոյն արբն նոյին(48) ահաւորագոյն կերպարանօք, և ասեն յխոճկորիկն «ի վե՛ր արի, յեկեղեցին՝ Երթ, եւ սուրբբն անդ են»։ Երէցն եւ դու հանե՛ք»։ Եւ զարթուցեալ ի բնոյն՝ ասէր «ուրեմն ի ժամ վաղ չողայ. վասն այսորիկ է տեսիլդ»։ Եւ վաղվաղակի անդէն քունն առնոյր։ Եւ դարձեալ երեւէր նոյն տեսիլ եւ ասէին «ոչ եթէ վասն այնուրիկ ասացար եթէ ի ժամ վաղ չողար. այլ մեր նշխարբն կան յեկեղեցւոջն»։ Երթ դու եւ երէցն հանե՛ք»։

Եւ զարթուցեալ յերկիւղ ահաղին՝ դարձեալ քունն առնոյր բաղցրագոյն։ Եւ եկեալ Երբորդ անգամ նոյն արբն լուսազգեստր՝ յոյժ սրայծառ կերպարանօք չքեղացեալք. եւ ասեն «արի», Երթ յեկեղեցին, եւ տեսանես լոյս մեծ յեկեղեցւոջն։ Եւ ուշ կալջի՛ր լմւսոյն, յոր տեղ լցան ժաղովի. անդանօք կան նշխարբ սրբոցն ։ Եւ նոյն տեսիլ նոյնալիսի.

նոյն ժամայն երիցուն երեւեր : Եւ յարուցեալ երէցն՝  
յեկեղեցոյն ի դարս ելաներ առ Խոճկորիկ գալ .  
և սա՝ առ երէցն պատմել զտեսիլն, իրերաց զիալէ-  
ցան, խոստվանեցան երկրորեան զմի պատճառս .  
և պատմէին զտեսիլն իրերաց : Եւ այնուհետեւ  
երէցն Յակոբ և նախարարն Խոճկորիկ անուանեալ ,  
և երկու ևս այլ երիցունք, որ էին ընդ զործակալին,  
և երկու պատանիք, որոց տեսառնազրեալ զինքեանս  
կենարար նշանու խաչին՝ զիմէին յեկեղեցին :  
Խրբեւ մտին ի զատիթ եկեղեցոյն՝ մօտ առ բեմն .  
և արարեալ երկրագութիւն առաջի խաչին՝ հայե-  
ցեալ տեսին ըսյս սաստիկ յեկեղեցուն ահառորագոյն  
յոյժ, և առաջի սուրբ խաչին . և յահագին երեւե-  
ցելոյ լուսոյն ոչ կարէին ի վեր յառնել . և պաշտե-  
ցեալ սաղմոս մի, քանզի ոչ կարէին յահեղ լուսոյն .  
և պաշտեն զերկըրդ սաղմոսն, չկարէին ևս այնու  
անգամ մի ի վեր յառնել . և զերրորդն կատարեալ՝  
օգնութիւն ստեալ յամենազօրէն Աստուծոյ՝ որպէս  
թէ յեկեալ մարդ ոք՝ զամենեսեան ի վեր առնոյր :  
Եւ բոլորեցունց դարձեալ կնքեալ զինքեանս նշա-  
նաւ տէրունեան խաչին՝ ի ներքոյ յեկեղեցին մտա-  
նէին լցեալ պայծառագոյն լուսովն . և պաշտէին  
մինչեւ ցառաւոտն . և ընդ այդանալն՝ ժողովել  
սկսանէր լցյան բովանդակ ի բեմ անդր, և երթեալ  
միարանէր ի տեղին, ուր երանելեաց վկայիցն

Քրիստոսի ամենասուրբ նշխարքն կային : Եւ յըս-  
ալառիլ լուսոյն զօրէն ձրագի , մերթ լուցանէր եւ  
մերթ անցանէր ի վերայ տեղւոյն ուր սուրբ նշխարքն  
կային , մինչեւ նշանակէին զտեղին : Եւ ապա բա-  
ցեալ զտին զնշխարս երանելեացն , և զիր ի վերայ  
զարմանալին , ուր սուրբքն կային , զայս օրինակ և ես  
Գրիգորիս բերի զայս սուրբս Զաքարիա՝ զնայր  
Յոհաննու , և զՊանտալեոն երանելին , որ վկայեաց  
ի Ակլոմիդիա քաղաքի : և ես աստին վախճանեցայ :

Եւ առեալ լուսանային և օծանէին զնշխարս սրբ-  
րոցն անոյշ խւզով . և կնքէր Խոճկորիկ խրով մա-  
տանուով . և ինքն գեսպան ձխով առ բարեսպաշտ  
արքայն Աղվանից հասանէր . և սկսամէր զերեւումն  
մեծաղոյն նշանացն :

Խակ աստուածասէր թաղաւորին յոյժ ցնծալից  
ուրախութեամբ զուարձացեալ՝ կանխէր յաղօթս և  
ի բարերանութիւնու մեծին Աստուածոյ . գոհանացը  
զմեծաղոյն տուելոցն զպարդեւաց . և անդէն վաղ-  
վաղակի ժողովէր զեսպակուրս , զվանականս եւ  
զանառառառականս . մեծասպէս կատարէր զյիշատակ  
սրբոցն : Եւ աղբաստաց առաստաղէս առնէր ողոր-  
մութիւնն . և զեսպակուրս և երիցունս զզեցնեցանէր  
սկսառական հանողերձխօք : Եւ զԱմենասէ՝ զիսր  
զրան երէցն , որ էր յոյժ հաւատարիմ , հանգերձ  
խոր սկաշտօնէիւր առաքէր փութ ապէս առնուլ

դամենաստորք նշխառք վերայիցն : Եւ ի գալ սրբոցն  
թագաւորն հանդերձ թաղուհւովելի հետիւտաւ ելանէր  
ընդ առաջ բազում պաշտօնելիսք, տէրունեան պայ-  
ծառացեալ խաչին նշանաւ, խնկօք և զանազան  
ծաղկօք և անթիւ ժողովոյ բազմութեամբ՝ օրհնեալ  
և վառաւորեալ հոգեւորական երգօք ի ձեռն ա-  
ռարինոստէր նահատակացն «Քրիստոսի՝ զՅիսուս  
Քրիստոս՝ ձշմարիտն Աստուած :

Եւ այնուհետեւ զանազան թագաւորական ըղ-  
գեստի ք յարմարեալ սպասս սրբոցն կազմէր ու-  
կրով և արծաթովեւ ակամիք պատուականօք . եւ  
հրամացէր առնել խորան վայտեղէն ծալածոյ , եւ  
շիկակարմիր կազմել մորթով եւ սպիտակ կտուօք .  
Եւ ի ներքոյ զրուազեալ ղճանդստարան սրբոցն  
Եւ բոլոր կտուկարանաց կոյեան : Եւ Շուշանիկ՝  
աշխարհաստիկին Ավղանից՝ յոյժ հաւատացեալ եւ  
բարեալ կին, զիսր մեծազոյն խորանն հրամացեաց  
ի շիկակարմիր խորանին սրբոցն ի վերայ հար-  
կանել եկեղեցարար՝ յորում պաշտօնեացքն եւ  
թագաւորն եւ յողովրի ժողովրդենին կոյին իներքս,  
որ ի ջերմուն հով ունէր ի ստորք խորանին, եւ յանձ-  
րեւարեր խոնստէն ցամաք պահեսցէ . եւ բէժ  
կտաւով զմեծ խորանան շորջ որմած վակարար  
սպատեալ յորում բանակն արքունի ի ներքս մուեալ  
ի ժամ՝ սրաշտամանն առաջի ամենաստորք խաչին

և երջանիկ վկայիցն՝ ՚Քղիատոսի՛ երկրագո թեամբ  
մաղթել զԱստուած և ունին դնել Աստուածա-  
շունչ դրոց :

Եւ քանզի միշտ ընդ իւր առեալ կրէր զնշմարս  
երանելեացն՝ հրամայեր դեսպանակա առնել յանուն  
սրբոցն . և նոյնպէս չիկակարմիր մորթով կաղ-  
մեալ և սպիտակազգեստ սպատուական կտաւով ի  
վերայ յարմարեալ, և խաչ ուկեղէն ի պատուականա-  
գոյն ականց. և զանուն թագաւորին ուկեգործ քան-  
դակով ի վերայ դրեալ, զոր ի վերայ դեսպանին հա-  
րեալ կանգնէին, և դունակ զունակ կերպաստոց  
յարբունական թագէն խաչին նշանք փողփողեալը  
շողային . և յարգունի սասպաստանէ սպիտակ ձիս  
ընտրեալս, որ իւր յոյժ սիրելի և պատուականի երե-  
ւէին. և զաղիս ձիոցն կարմիր ներկուածով տացր  
յարմարել, և սրաշտակա յայտ արարեալ սրբոցն  
դեսպանի և ձիոցն սպաս ունել : Եւ մի ևս ինչ  
ունել ի դեսպանին բայց միայն սուրբքն և Աւե-  
տարանն հանդերձ այլ ևս Աստուածաշունչ դրովք.  
Եւ սոյլս ևս հրամայեր կազմել սպիտակ եղամբը  
Ծելովք, որ դիսորան սրբոցն բառնայցէ, և երի-  
ցունս բազումն և սարկառադունս և զրակարդացս  
և փաաղտա ոլահէր արբունի զրանն, որբ միշտ ի  
տուէ և ի զիշերի սպաշտէին և սպաս ունէին սրբոցն :  
Եւ յորժամ չու լինէր բանակին՝ յառաջ սրբոյն

գեսալակ Ելանէր առաջի սպիտակազդեաց կտաւով  
ծածկեալ և ուկի խաչ ի վերայ զեսալակին՝ թաղա-  
ւորական թաղով, դունակ դունակ կերպաստցն  
փողիողելով, ապիտակ ձիովք կարմրազդեաց ընդ-  
ելուզեալ կերպաստք . և զալուրա թաղաւորական  
ձիոցն (50) կազմեալ թաղով . եւ բազմութիւն  
պաշտօնէիցն առաջի եւ զինի զեսալակին՝ խաչ ի  
ձեռին՝ սաղմոսանուադ երդով միարանութեամբ  
բարերանէին, դիցրորդութեանն մի զօրութիւն :

Եւ ասրա զեսալակ աշխարհատիկնոցն , եւ տիե-  
նունի դունդն զհետ նորա : Եւ յորժամ բանակիւ-  
կամիին . յառաջ սրբոցն հորկանէր չիկակարմիր  
խորանն , եւ խաչ ուկի ի վերայ . եւ ասրա սպիտակ  
մեծ խորանն ի վերայ, յոր եկեալ սուրբրն մեծա-  
զզուշութեամբ՝ յորժամ անուշագոյն խնկօրն ծիւե-  
ցելովք ի հանդստարանն մտանէին : Եւ ասրա ար-  
քունական խորանն, եւ այլ եւս զանազան սոլասք ար-  
քունեաց հարեալ կազմէին : Եւ ինքն թաղաւորն  
հանդերձ թաղուհւովն եւ բոլոր բանակօք կանխէր  
զցայդ . եւ զցերեկ յաղօթս եւ ի փառարանութիւնն  
սրբոցն. զի մանուկ չէր (այսինքն շունէր թաղա-  
ւորն արտ ժառանգ ) աստուածատէր եւ բարե-  
սպաշտ թաղաւորին . վանականաց ուխտազրու-  
թեամբ աղաչէր դԱստուած՝ ի ձեռն սրբոցն զի  
շնորհեսցէ նմա դաւակ . և մարդասէրն Աստուած

որ է մատակարար բարեաց, ըսեալ արօթից նորա.  
չնորհէր նմա զաւակ արու : Եւ խնդոթեամբ  
ընկալաւ զարգեւս ի Աստուծոյ ի ձեռն որրոց  
վկայիցն. Եւ դնէր անուն մանկան Պանտաղեւոն .  
Եւ հրամայէր սնուցանել ընդ երկիւղիւն Աստուծոյ,  
եւ միշտ առաջի ամենասուրբ վկայիցն Քրիստոսի  
երկրագաղոթեամբ կանխեալ :

Եւ յորժամ յընթրիս լինէր բարեսէր թաղաւորն՝  
թակոյի մի յարդունի սովասէն լցեալ արքայի ըմակել  
զինի, եւ երկուս արծաթի մեծաղոյն սեղանս լցեալ  
արքունական հացին՝ հանապաղ առաջի արքունա-  
կան սեղանոյն դնել հրամայէր . Եւ սարկաւաղ մի  
յոտն կացեալ առ արքունական սեղանոյն . Եւ որ  
ինչ ի սեղանն զոյր՝ յամենայն խորտկացն տուեալ  
ի վերաց սեղանոյն դնէր, եւ իրուեւ զրաւ լինէր սեղո-  
նոյն արքունի ընթրեաց. յայնժամ առեալ սարկա-  
ւաղին մատակարարէր աղքատաց : Եւ յամենոյն  
կիւրակէի՝ յորժամ զաստուածային խորհուրդն հան-  
գերձեալ էին կատարել, եւ կենդանարար բանքն  
ընթ երցեալ լինէին առաջի յողովագոյն ժողովրդոցն,  
ոչ ունայնաձեռն երթայր թագաւորն յողոյն Աւե-  
տարանին : Եւ արտարեւ միշտ բեւեռեալ էր ընդ  
երկիւղն Քրիստոսի, եւ ջերմախառն սիրով վու-  
թայր հանապաղ ի պահս եւ յաղօթս հանդերձ  
թագուհւովն եւ ամենայն դրամին . եւ անձանձրոյթ

կատարելը զյիշատակ սրբոցն՝ յօրդորելով զամեն-  
նեսեան ի հաւատոսն Քրիստոսի . և Խրախոսցեալ  
միջտ գօրանայր հանդերձ յուստիլն Քրիստոսի անան-  
ցական բարութեամբ յանանց յաւիտեանսն :

♦ ♦

*H.* — Գիւտ նշխարաց տորբ մանկանեն Գրիգորիսին՝  
որ վկայեաց առաջի Ասմեսանայ՝ արքային  
Մասզրաց :

Յոյժ ցանկալի տենչանս ո.նէր բարեպաշտն Վա-  
չաղան՝ արքայն Աղվանից, առ ի գիւտ նշխարաց  
սրբոյ մանկանն Գրիգորիսի քանդի տեղեկացեալ  
էր ի հանդամանացն ( 51 ) պատմութեան եթէ ի  
Վատնեայ դաշտին կատարեցաւ երանելին Գրի-  
գորիս, և բարձեալ աշակերտաց ոմանց բերին յԱ-  
մարաս զիւղ. և եղինյեկեղեցեցումն զոր հիմնարեկալ  
էր մեծին Գրիգորի . և ոչ ինչ նշան արարեալ  
տեղոյն՝ Երկուցեալ այլ ուրուք բառնապոյ զնշխարս  
երանելոյն, և կամ թէ յերկիւղէ հիմին մեռելոյ ,  
կամ թէ ի յոլովութենէ ամաց բաղմանալոյ ի մոռա-  
ցումն ընկեցեալ եղանէր տեղին նշխարաց սրբոյն :

Խորհուրդ կաղեալ թագաւորին ընդ երիցունա  
խրոյդրանն խորհել, պատճառելի ինչ, որով կարացէ  
զտանել զցանկալին յոյժ բարի անձինն. և կոչեցեալ  
զվանաց երեց զեղջն՝ հարցաներ եթէ նշան ինչ  
ուրեր է՝ առ եկեղեցեաւն ի գերեզմանին վերաց թէ՝  
ոչ : Եւ նա ասէ. բազում զերեզմանք են արդ շորջ  
զեկեղեցեաւն. վասն զի թ հիմախաղաց ժամանակին  
և ի մեծագոյն հիմնարկութեան եկեղեցւոյն ոչ ոք  
կարաց չինել և զոր մեծին Գրիգորի հիմնարկեալ  
էր : Եւ ասէ թագաւորն թէ զշող տեղւոյն ի բաց  
հրամայեմ սկզբել, ասէ, զուցէ ի բազմութենէ  
զերեզմանացն ոչ կարեմք կալ ի վերաց ամենաստրը  
զերեզմանի երանելոյն . այլ ապաստան սրաբու է  
լինել ի սպահու և յաղօթու, և բազում աղաչանօք  
խնդրել յամենողորմն Աստուծոյ, յիշեցեալ տէրու-  
նեան զրան, որ ասէ զբարի հոյցումն վաղվաղակի  
առնուլ յառաստատուրն Աստուծոյ :

◇ ◇

ԽԵ. — Թաղը արքային վաշագանաց առ ամենայն  
եպիսկոպոսունս և քահանայս առ ի շնորհել  
նմա ի ձեռն աղօրից և պատճառանաց նոցա  
զիամկեալ գանձն :  
Յայնմամ հրամայեր թագաւորն հրովարտակո  
9.

առնել ընդ ամենայն աշխարհու տէրութեան իսրայ  
առ և պիտի կոպոս, երիցունու և անապատակնու և ամե-  
նայն ուխտաւորա եկեղեցւոյ պաշտել և պահել եւ  
առնել ինդրուածս առ մարգարին Աստուած առ  
ի չորհել մեզ զնշխարս երանելոյն Գրիգորիս:

Եւ ապա այնուհետեւ ամենայն եսպիտիկոպոսը  
զիւրաբանչիւր իշխանութեան զերիցունս և զար-  
կաւագունս և զրոյոր ուխտ եկեղեցւոյ հանդերձ  
տէրունեան նշանաւ խաչին առեալ՝ միարանու-  
թեամբ և յոյժ փութեալ ժողովեացին ի սեպհական  
զեօղն արբունի, անուանեալն Գիւտական: Եւ որ  
ապուժեալ (52) յամենոյի որ՝ մեծ սրասուհասի վերաց  
հրամայէր զնել: Եւ անդ զերիս ու որս մեծապէս  
կատարեցին զյիշաստակ սրբոցն. յորում ինքն խակ  
թագաւորին սովորութիւն էր յուն կող և պաշտել  
զրոյոր ու խտ եկեղեցւոյն անողը ժողովեալ: Գառ-  
նէր և զամենաստորը նշխարս Գրիգորիսի և յոյժ  
հոչակելոցն Հոխիսիմեայ և Գայիխանեայ ի Պարա-  
հոջ զեօղն որ է ի նահանողին Արձախայ, զոր էր  
բերեալ երիցուն Մատթէ անուն կոշեցեալ՝ ի Յո-  
հաննէ՝ Հայոց կաթաղիկուն, զոր ունէր նորին  
մատանեաւն կնքեալ. և առաքեալ երիցունս ու-  
նոյր ընդ իւր: Եւ ի զալ մեծին Գրիգորի հանդերձ  
պատերազմակից պատկելօք՝ Հոխիսիմով և Գայի-  
անով ի մեծ ժողովն Գիւտականու (53) ընդ առաջ

ելանէր թագաւորն հանդերձ թագուհովն և ամենայն մեծամեծ նախարարոքն հեռաղոյն ի դեղջին . ընդ առաջ ելանէին ամենայն եպիսկոպոսնքն իսրարանչիւր իշխանութեամբ և պաշտօնէիւր բազում՝ դասր դասր և զունդր զունդր . յիսրարանչիւր զնդինշանք սրբոցն՝ մեծապէս պատուով , ընդ Աւետարանին պատուեալը բազմութիւնը խաչիցն զանազան նշանացն փողփողելով . ծուխ խնկելոցն ուժգին բուրեալ յիսրարանչիւր դաստէն . ձայն սաղմոսանուագ հոգեւոր երգոցն քաղցրագոյն ճշմամբ , անհատ բարերանելով զԱւտուած զուուողն մեծագոյն պարզեւին :

Եւ այնպէս թագաւորն մեծագոյն բերկրանօր ողջունեալ սրբոցն հանդերձ բազմութեամբն՝ ինքն մեծաւ զդուշութեամբ սորտաստորէր երիցոն , որ զնշխարս սրբոցն բարձեալ տանէր . և բերեալ ի հանդատարան սրբոցն՝ դնէր առ երանելեացն Զարարիայ և Պանտալեոնի : Եւ վաստահացեալ այնուհետեւ բարեաէր արքային յիւր հաստատոն հաւաստոյնինդիրեյառարինութիւնաժողովոյն բարեհացցումն , առէ հաստատուն դիտեմ զի տաց ինձ Աւտուած ի ձեռն մեծիս Պրիգորի զամենաստրր նշխարս սրբոցն Պրիգորիի :

Առնոյր այնուհետեւ թագաւորն զբազմութիւն ամենաստրրժողովոցն , և հրաման տայլը բոլոր եպիս-

իոսպասացն երիցամբը եւ սարկաւագօք եւ անապատաւորօք եւ բոլոր ուխտիւ եկեղեցոյ՝ սրաշտօնէիւր իւրաբանչիւր։ Աւետարանաւ եւ խաչիւ յոլովլութիւն խրաբանչիւր դաստի, եւ բազմութիւն բուրժառաց խներոց ծխելոց։ Եւ ինքն արրունի դրան երիցամբը, յոլովաղոյն սրաշտօնէիւր, եւ զաշխարհատիկինն թէալէտեւ կամեցաւ անդէն թողուլ քանդի ժամանակն գարնանային էր։ Եւ յոլովլութիւն անձրեւացն բերման սաստկանացը յերկիր, ոչ հաւանէր առնուլ յանձն, այլ մեծաւ փափաղանօք տենչացաւ եւ ինքն երթոյը ի խնդիր սրբոցն և Եւ Պէտքեւան զամենաստուրը վկացն Կրիստոնի՝ զմեծն Գրիգոր եւ զերանելին Զարարիս եւ զամենաստորն Պանտաղեւոն, զյոյժ հռչակաւորս զալատերազմաղթու զՀռիփիմիմէ եւ զԴայիսանէ առեալ ի բարեխտառութիւն մեծին եւ բոլորեցուն Աստուծոյ առ ի շնորհելոց ի մեռն նոցա զինքեան փափաղէլին Եւ զանազան թաղաւորական հանդերձիւր սրաւել զնչիստարս սրբոցն բազում խնկօք եւ զանազան անուշահոտ ծաղկօք հանդերձ զնէր ի դեսպանի սրբոցն։ զոր շիկակարմիր մորթով կազմեալ եւ սպիտակ կտաւով ի վերայ յարմարեալ, եւ ոսկի խաչի սրամուականագոյն ականց բանդակեալի վերայ գեսպակին հարեալ, եւ ծխս սպիտակի կտրմիր ներկուածով զաղիսն կազմեալ, եւ զպուրս (միջոց

երկուց ականձաց ) եւ զաղխն թաղաւորական ձիոցն թաղիս պերճացուցեալս : Եւ բաղմոթիսն պաշտօնելիցն արքունի զրան առաջնոց եւ վերջնոյ (իմա առաջի եւ զինի) դեսարակին՝ խաչ ի ձեռն անհատ բաղցրաբարբառ պաշտամամբը զցայդ եւ զցերեկ անդադար բարերանէին զԱստուած : Եւ ինքն թաղաւորն առ դեսարակովն երթայր . եւ ինքն երգակից էր սաղմուաց օրհնութեանն : Եւ դաք եալիակոպուաց խրաբանչիւր հանդերձ մեծաղոյն ժողովավելն երթայրին ի շորեցունց կողմանց դեսարակի սրբոցն՝ սաղմուելով եւ բարերանելով զՄիածինն Աստուած՝ խնդրելով զամեննեցուն ցանկալին ըզ սուրբ նշխարս սրբոցն Գրիգորիսի :

Եւ հրաման տուեալ թաղաւորին Վաչագանաց հանդերձ եալիակոպուացն ոչ ինչ ձաշակել ումեր մինչեւ ցերեկոյ . եւ յերեկոյին լոկ սակաւ հացիւ զօրանող : Եւ ինքն թաղաւորն զնոյն առնէր մինչեւ ի դիւտ սրբոցն : Խակ զրան Երիցունքն արքունի յոյժ ջերմաղոյն պահէին, եւ խնդրէին ի բարերարէն Աստուծոյ : Եւ սմանք ոչ ձաշակեցին մինչեւ ի դիւտ սրբոց նշխարացն : Եւ ի տուէ եւ ի զիշերի յամենայն ժողովելոցն անդադար լինէին աղօթք եւ խնդրուածք ուժզին զոչմամբ՝ հացցել զամեննեցուն զցանկալին զԳրիգորիս : Եւ յորժամ խորհուրդ արար բարեկապաշտ արքայն Վաչագան , եւ Ժամանակ

յոյժ արարեալ ինդրելց զնշխարս երանելոյն  
Գրիգորիսի :

Ընդ առւրսն ընդ սյնոսիկ առաքեաց արրայ  
զՄատթէ՛ երեցն Դարանահու (54) հոնդերձ սպաշ-  
տօնէիւր ի Սուհառ սպաշտօն աւնել եւ սպատարազս  
մաստոցանել յանուն սրբոցն, որ անդ յայտնեցան :  
Եւ մինչդեռ զառաւօտին կատարէին զպաշտօնյոտն-  
կաղեաց(55), նիրհ անկանէր երիցուն Մատթէիւ. ձայն  
ըէք ուժ զին ասելով «զառարելն Պրիգորիս ինդրելցէք  
ընդ արեւելս» . որ եղեւն իսկ : Յորժամ՝ ըրեին ըզ  
տեղի գերեզմանին՝ սխալեալ ի հիւսիսակողմն արա-  
բեալ զրբածն՝ դտին զամենաստորք նշխարս երանե-  
լոյն ըստ եկեալ ձայնի հնչմանն :

Իսկ յորժամ՝ չու արար թագաւորն ի Պիտա-  
կանէ բազմոթեամբ ժողովոյն՝ եսլիսկուար եւ  
երիցամբը և ամենայն սպաշտօնէիցն յոլովոթեամբ.  
և որպէս եղեւն սասցեալ՝ սպահը և ազօմը և խնդ-  
րուածք յամենայն ժողովելոցն լինէին սու մարդա-  
սէրն Աստուած : Եւ հասեալ ի գեօլ մի Այսաւանս  
անուն . և սարկաւադ մի Յովիլ՝ անուն նորս, ի  
դրան արքունի, տեսանէր ի տեսլեան յառաջ քան  
զծագել առաւօտուն՝ իրրեւ այն թէ բա՛ ունիցի  
յուսն և զնշխարս երանելոյն Պրիգորիաի իննդրիցէ :  
Եւ ինքն իսկ Պրիգորիս երեւեցաւ սպիտակ հանդեր-  
ձիս՝ յարեզայի կերպարանու և հարցեալ ցսորկո-

ասզն թէ զի՞նչ խնդրես . խոկ նորաս որատասիտանի  
արարեալ Եթէ՝ արրայ և սովոնայն պաշտօնեայք և  
բովանդակ գունդն Աղվանից զԳրիգորիս խնդրեմք .  
և ոչ կարացաք դտանել , խակ երանելոյն կալեալ  
զձեռանէ սարկաւագին , խոնարհեցուցեալ ի տեղին  
ուր կային նշխարք սրբոյն , եթէ զԳրիգորիս խնդ-  
րէք՝ աստ է , ասէք . և հրամայէք բրել զտեղին .  
մօս ի գերեզման անզը փորր լլրիկ մի էր և խաչ  
ի վերաց : Եւ երթեալ երանելոյն ի վերաց բլույն՝  
առընթեր խաչին կացեալ , և երէց մի Նաթան  
անուն՝ Եղբայր նորուն սարկաւագին , և միւս ևս  
երէց Գեղուոն ( 56 ) անուն , բրէին զտեղին : Եւ  
Յովիլի ծունկս իջեալ չալակ ունէք առաջի . և  
զտեալ զնշխարս սրբոյն՝ զնացին խնդրալով : Եւ  
նորա ձայնեալ անզը առէք . կողքս և ստկոնքս աստ  
են , ի ձե՛զ առէք . և մեք դտանէաք զոր ասացն :  
Եւ զարթուցեալ ոլսումնք զտեսիլն արրայի . և զի  
չէք բնաւ երթեալ սարկաւագին յԱմարաս , առէք ,  
զտեղին զոր եցոյց , զիտեմ :

Եւ արրայ յոյժ խնդրալից եղեալ՝ զԱմանասէ՝ զիսր  
դրան երէցն , և զնոյն սարկաւագն առաքէք յԱմա-  
րաս յառաջ քան զիւր երթաղն . և երթեալ ցուցա-  
նէք զնոյն տեղին , որ ի նմին խակ տեղւոջն զտանէին  
զնշխարս սրբոյն : Եւ չուեալ յԱբաժանից սրբոյն  
Զարարիայի և երանելոյն Պանտաղեւանի և յոյժ

վայելչականին Գրիգորի և առաւել հռչակեցեալ  
սբատերազմովին Հոխոխմեաց Գայիանեիւ հան-  
դերձ, թագաւորն և յոլովագոյն ժողով և եռիակո-  
ւուունը, քահանայր և պաշտօնեացր . և հասեալր  
ի Քարուէճ (68) փորրագոյն դեօղ մի . և լինէր անդ  
ցայդապաշտօնս : Եւ դարձեալ ցուցանէլր նոյն  
Յովելայ սարկաւագի ի նմին տեղւոջն արու չրու  
աւաղագոյնս արեղայս, և զնոյն Գրիգորիա մանկա-  
գոյն ևս բան զնոսա տեսլեամբ՝ չորջ կայեալ  
զնոյն տեղեօքն զոր րրել հրամայեաց : Եւ յահէ  
անտի ի բերանս անկեալ սարկաւագին, և անդէն  
ի վեր յարուցեալ կամէլր հարցանել ինչ . եւ նորա  
աներեւոյթ լինէին ի նմանէն : Եւ յորժամ սկիզբն  
լինէր ցայդապաշտամանն ի նմին աւուր . ևս բարե-  
սպաշտ արդարայն անդադար խնդրելր յԱստուծոյ զդիւտ  
որրբոյն Գրիգորիաի, և տեսանազրեալ զինքն տերու-  
նեան խաչի նշանաւն՝ յոյժ բազում աղաչանօր՝ ծա-  
ծուկ սրտիւ հայցէր զառատատուրն յԱստուած :

### Տեսիլ երանելոյն Կաշագանայ :

Եւ մինչ նատեալ ի դիւերապաշտամանն էր՝ նիրհ  
առնոյր փորրագոյն զթագաւորն . ևս եկեալ հաշին  
ձայնի ասէր . զոր զու հայցես աղաչանօր, անդ երե-  
ւեցաւ : Եւ զիտացեալ ի տեսլեանն, որպէս պատ-

մեացն, թէ ևս յԱմարաս Երթամ. եւ որ անդ, ասէ, Երեւելոց ուժեք իցէ մարդոց : Եւ անդէն վաղվաղակի զԱնասոէ՝ զիւր զրան Երէցն, յառաջ քան զիւր Երթանը յԱմարաս յշեաց . եւ ասէ . զիմ տեսիզդ մի ուժեք յայտներ. եւ եհարց եթէ յայտնեալ ինչ ու մեր իցէ : Եւ Յովիլ՝ Երէց մի անսպասական, որ առ արքային լինէր, պատմեաց եթէ՝ ևս տեսի ի նմին տեղւո՞ջ, ուր Յովիլ սարկաւազին ըրել հրամացեաց, ազրիւր ելանէր յականէն նրբագոյն, եւ յառաջ խաղացեալ յոյժ յորդագոյն . եւ իմ զարմացեալ եթէ յառաջ չէր ազրիւր ի տեղւո՞ջ, արդ այս յորդ ուստի ելանէ : Յորժամ չուեալ ի Քարուէմէ՝ կանացը յառաջ ելանէն ի զիւղարազարէն Ամարասաց . եւ որպէս եղեւն ասացեալ, ժամանակին գարնանային էր, եւ յորդութիւն անձրեւաց անդադար հռամամբ իջանէր յերկիր. եւ բազմութիւն սմբակակոխ ձիոցն յոյժ վաստակոխ (59) գործէր զմանապարզ : ։

Խակ թագաւորն ասէ. ոչ ինչ զանդադիլ . առ ի յոյժ ցանկալի տենչանացն ի վայր յերիվարէն ի ջանէր, եւ չըջեալ ընդ դաս դաս եսիակոստացն եւ Երիցանց՝ կարդել եւ յարմարագոյնս Երթալ հանդարտիկ, եւ յորդագոյն քաղցր ձայնիւ սաղմոսանուար երդօք բարեբանել զկենարար Երրորդութիւնն : Եւ ինքն անցեալ մեծաւ զգուշութեամբ սպասաւորէր զեսոպակի Երանելեաց վկայիցն Քրիս-

տոսի. Եւ ի բազմութենէ ձայնիցն պաշտամնաց յայլ եւ այլ լեզուս՝ մեծագոյն ջնջէր երկիրն. Եւ ի յոլովութենէ տէրունեան խաչից եւ նշանաց, եւ ի փողփողերոյ նշանարձակ դռնակ դռնակ երանգախառն կերպարանաց, եւ ի փայլունս ոսկրոյ եւ արծաթոյ եւ սպասուական ականց, որ ի բազմութիւն խաչերոյն էր կառուցեալ, որ իբրեւ զըստաւոր ամս ծածկեալ ունէր զերկիր :

Խոկ դեռքակս սրբոցն սպիտակաղղեատ կազմածով, սպիտակ ձիով, ակի ականակառալ խաչիւ ի վերայ կառուցեալ, յայժ սպասուական թագ խաչին նշանարձակ ի վերայ դեսպակին լշակ իբրեւ զասող սպայծառագոյն լուսով, եւ ուժգին չքեզացեալ փառ երիւայր ի մէջ քրիստոսական բանակին : Եւ յորժամ ի դեօղն մտանէր սուրբ եւ աստուածասէր ժողովն՝ գետ փորբագոյն անցանէր ընդ մէջ չինին, և կամուրջ կազմեալ արբունի սպողուսային : Խոկ արքայն առ ի յոյժ սիրոյն, որ առ սուրբան ունէր, ոչ հաւանէր զղեսակակ սրբոցն յայլ որ թուղուլ. այլ ինքն թագաւորական զգեստիւր հանողերձ ագելեաւն (60) անցանէր ընդ գետն. և երիւեալ ի նշանակեալ տեղին՝ երկարագոյն ծնրադրութեամբ թագաւորն հանդերձ եսլիսկոպոսօք և բազմութեամբ ժողովոյն առնէր խնդրուածս : Եւ հարեալ զիսրանն արբունի ի վերայ տեղւոյն՝ հրամայէր զգուշանակ մինչեւ

ցվաղիւն : Եւ ընդ այն ժամանակս եւլխակոսոս ոչ  
կայր յԱմարտա, և հարցեալ զվանաց երէց գեղջն  
և դայլ եւս աւաղանի եթէ ձեր ինչ տեսե՞ալէ ի  
տեղւոջն թէ՝ ոչ :



ի՞ն. — Երանելոյն Յորսայ ճգնաւորի հաւատացու-  
ցանել զմեխազոյն Արձախայ զաւառն Պարք-  
կանց ( 61 ) :

Եւ պատմեաց վանաց երէցն և ասէ, երէց մի Նկ-  
կերտու Յոր անուն՝ ( 62 ) ճգնաւոր եւ յոյժ առա-  
քինի վարուք կեցեալ յաշխարհի, որ ունէր եւ  
առաքելական շնորհու քանզի եւ մեծագոյն աշխարհ  
մի Արձախայ Պարծկանց անուն զարձուցանէր  
ի մոլորութենէ եւ առնէր աստուածածանօթս եւ  
անձառելի խորհրդոց խորհրդակից Երրորդու-  
թեանն պաշտօնատարս : Սա եկեսով կատարէր բա-  
զում անգամ զյիշատակ սրբոյն Գրիգորիսի, եւ  
ասէր երկիցս եւ երիցս առաջի բազմաց . եթէ թա-  
գաւոր հաւատացեալ յառնելոց է յաշխարհիս Աղ-  
վանից, եւ խնդիր առնէ տեղւոյս եւ սուրբ նշխա-

բացս Պարիգորիսի: Եւ դարձեալ այլոմն անապատաւոր հիւր եկեալմեզ. եւ մերընդ առաջելեալ ընկալաք զնա, որպէս սովորութիւն է եղրարցս, եւ լուսցեալ զոտս, ճաշակեալ փոքրադոյն ինչ, եւ ելեալ ի տեղւոջդ յայդմ ի քոն մտեալ հանդչէր. եւ յարուցեալ վաղվաղակի՞ խաչ արարեալ իւրովի խիկանդնէր ի տեղւոջն. եւ մեզ պատուիրէր ասելով. մի ոք զխաչդ ի բաց հանցէ ի տեղւոյդ, այլ մեծագոյն խաչ տո՛ւք հարկանել ի տեղդ. եւ այգուն և յերեկոյն աղօթս կատարել եւ խոնկ ծխել զիմեծ սրանչելիս տեսանեմ ի տեղւոջս :

Եւ սյլ արեղայ ոմն հիւր ( 63 ) եկեալ. եւ մեք ճաշ հրամայեցաք տալ, եւ մինչ նա հաց ուտէր. եւ մանուկ մի զինի տայր բաժակով. եւ ի շինին ամրոխիմն լինէր : Եւ մեր ամենեցուն զհիւրն թողեալ մեկնակ՝ յաղվաղակն երթայաք, եւ հիւրոյն յարուցեալ զրաժակն առեալ զնայր. եւ տարեալ վաճառէր, եւ զգինսն առեալ ի դալրոց մտանէր. եւ ուսանէր թոշակաւն : Եւ տեսանէր ի տեսլեան բաժակագողն զայր մի եւլիսկոպոս նստեալ ամուռով առ խաչին, զոր անապատաւորն կանդնեաց, սոլիստակաղզեստ հանդերձիւ. եւ յոյժ ահաւորադոյն տեսլեամբ. եւ զինքն մերկ կապեալ՝ տանջել հրամայէր ի վերասըրբոյ գերեզմանին : Եւ յարուցեալ ցուցանէր ըդմարմինն բազմաց զի կապուտակացեալ էին հարուա-

ծօք յահաղին տանջանացն. Եւ այնպէս օր ըստ օրէ  
հրամայէր տանջել. Եւ նորա ի բռնութենէ տան-  
ջանացն ապաստանեալ ի սուրբ քաղաքն Երու-  
սաղիմ խնդրելով զրոյժ տանջանացն :

Եւ տեսանէր դարձեալ անդ ի տեղոջն գնոյն  
եպիկոպոսն, դժնղակաղոյն ևս հարկանել հրամա-  
յէր և ասէր. չի՞ք հնար բուժիլ քեզ ի տանջանացդ՝  
եթէ ոչ երթեալ խոստովանեացիս ի նմին տեղոջ,  
ուստի զրաժակն գողացար : Եւ յարուցեալ արե-  
ղայն՝ առնոյր զգինո բաժակին. և դնացեալ յԵ-  
րուսաղիմէ՝ զայր յԱմարաս . և մտեալ յեկեղեցին՝  
կոչէր առ ինքն զվանաց երէցն, սկսանէր լալով  
խոստովանիլ զիտոն. և բաղում աղաչանօք տուեալ  
զգինո. և եկեալ ցուցանէր զտեղին ուր խաչն կայր.  
եթէ այդրեսլիսկոպոսնատէր, ասէ, լուսաւոր զգեստու  
և ահաւոր կերպարանօք եւ զտեղին ցուցեալ գերեզ-  
մանին եթէ այդր հրամայէր զիս հարկանել : Եւ ըն-  
կալեալ զառողջութիւն տանջանացն՝ գնայր խաղա-  
զութեամբ : Եւ բաղումք ի գեօղս, ասեն, որ անոր-  
դիք մեալ են, և եկեալ ուխտեալ և հող առեալ ի  
տեղոյս՝ որդեծնութեան զաւակի հասին. և ամենացն  
ներմատ հող տուեալ՝ վաղվաղակի ընդունէին զառող-  
ջութիւն. և մինչդեռ զայս ամենացն նշանադործու-  
թիւնա պատմէին առաջի արքացին ( 64 ) :

ի՞զ. — Ի այն խորհուրդ տեսիլ մի և Խոճկորիկայ՝  
պոռեկրորդոյն Եսվաղենայ՝ արքային Աղ-  
վանից, որ էր կարգեալ կողմնապահ. և  
պատմէ արքայի :

Այս այն Խոճկորիկ անուն, որում ի Յոհ երա-  
նելին Գաքարիա և սուրբն Պանտավեւոն յայտնեցան,  
ի հասարակ աւուր ի քուն կայր. և տեսանէր ի տես-  
լեան եթէ երթացը յեկեղեցւոջն սպիտակ, պճը-  
նաւոր պարեգօտիւք. և խօսեալ առն ընդ արեղայս  
ասէ. օրհնեալ արք՝ յորժամ դուք աստ էք, ընդէր  
ոչ ցուցանէք զաեզի նշխարաց սրբոյն Պարիզորիափ,  
զի ոմանք ասեն եթէ աստ է, և ոմանք՝ եթէ անդ.  
և մեք յաշխատութիւնս եւ ի բազում հոգս եմք:  
Պատասխանի ետուն ամենեքեան եւ առեն. նշան  
ինչ տեսե՞ք. նորա պատասխանեալ ո՛չ : Եւ մի յեօ-  
թեանցն առաջնորդեալ առնն եւ ասէ. Եկ զինի  
իմ, եւ ցուցից քեզ զնշանակեալ տեղին. եւ տարեալ  
ի տեղին, զոր ցուցեալն էք յառաջ . եւ տեսանէի  
զի երկիրն պատառէք, եւ ընդ պատառուած ճրադ  
լուցեալ էք եւ երեւէք. եւ բոց ճրագին յերկուս բա-  
ժանեալ բուրէք ի վեր. եւ ասէք ցաքեղայն, որ  
զնշանն ցուցանէք թէ. երթամ, պատմեմ արքոցի

զնշանդ, զոր ցուցեր ինձ. Եւ նու ասէ. Երթ Եւ պատմեաւ : Եւ զայր սցըն առ արքունիան, Եւ թուէր ւթէ արքայ ի բուն իցէ . Եւ ինքն չիշխէր զարթուցանել :

Եւ անդրէն դարձեալ առ սցըն ասէ. արքայ ի բուն էր, Եւ ոչ իշխէցի զարթուցանել : Մինչեւ անդրէն դատնայր սցըն, երկիրն նոյն պատառեալ կայր. Եւ ճրագն լուցեալ, Եւ արեղայն առընթեր կայր ի տեղւոցն : Եւ ասէր արեղայն ցացըն, յորժամ զարթնու արքայն՝ զոր տեսերդ պատմեսջիր նմա : Եւ կոտեցաւ ուսամբն զպատառուածն ծածկել Եւ զրյան արգելուլ. Եւ Խոճկորիկայ բուռն ( 65 ) հարեալ արգելոյր Եթէ՝ մի առներ զայր, մինչեւ արքայն եւս տեսցէ : Եւ նորա չտուեալ եւս յանձն՝ ուսամբ հարեալ զտեղին՝ անյայտ արարեալ զպատառուածն ասէ. արքայ յորժամ զարթ չի՛ պատմեսջիր զնշանդ զոր տեսերդ : Եւ զարթուցեալ ի բնոյն՝ եկն պատմեաց զայս ամենայն արքայի . և ցայցն բոլոր ամենայն բազմութիւնն ժողովելոցն հանդերձ ամենայն բազմութեամբն անդադար խընզորուածն եւ պալաւատանս մասուցանելին առ Աստուած սուտղն ամենայն բարութեամց : Խակ ի վաղիւ անդր յորժամ զպատառուն կատարելին զպաշտօնա՝ Եւ կեալ միաբանութեամբ ամեներեւան ի տեղի նշանաւոր խաշին . և զբորանն արդունի ի վերայ տեղոյն

հարեւալ . և շուրջ զիսորանառն թէժ ածեալ բացա-  
գոյն , և արտարոյ թէժին ամենայն ժողով եպիս-  
կոպոսացն՝ դասր դասր խրաբանչիւր աշակերտոք  
շուրջ կացեալ զրէժովն , սարկաւազապետացն՝ խաչ  
ի ձեռս , եւ երիցանցն՝ Աւետարան ի զիրկս , եւ  
պաշտօնէիցն՝ բուրփառս ի ձեռս զանազանութեան  
խոնկս ծխել . եւ ի միարանութենէ սազմոսելոյն  
եւ բարերանելոյն զանձառելի Երրորդութիւնն հըն-  
չէր երկիրն :

Խակ առարինասէր թաղաւորն հորսնեալ , եւ բահ  
ի ձեռն առեալ՝ բաջարար առնէր զրրածն . եւ բարե-  
սէր եւ յոյժ հաւատացեալ թագուհին զիսինձ մատու-  
ցեալ թագաւորական զգեստու՝ ի հողոյն կրէր փո-  
թապէս : Յայնժամ եպիսկոպոսունք եւ երիցունք  
եւ նախարարք եւ կանայք նախարարացն՝ իւրաքան-  
չիւր զգեստուք մեծաւ փափաղանօք կրէին ի դուրս  
դշող զրանցն . սխազեալ առ կողմամբն առնէին ըզ  
բրածն . խակ երանելոյն նշխարդն յարեւելս կոյս  
մնայր Յայնժամ յոյժ տրտմութիւն կալս զթագա-  
ւորն եւ զամենայն ժողովս բանակին , մինչեւ նատէր  
ստրջացեալ թագաւորն ի մեծագոյն հողս . եւ ապա  
բաջալերեալ արքային ճշմարիտ հաւատով ասէր .  
անսխամալ լինի բան ամենակեցոյցն Աստուծոյ՝ Եր-  
կուց եւ երից ժողովելոց յանուն կենարարին վաղ-  
վաղակի դասնել զիսնդիր բարուոն : Խակ այսչափ

բազմութիւն ժողովելոցո յամենասուրբ անուն բոլոր  
բեցուն Աստոծոյ՝ հաստատեալ զիտեմ զի ոչ  
անխոյթ արարեալ մերժեցէ զմեզ ամօթալ : Եւ  
հրամայեալ այնուհետեւ զսուրբ Զաքարիա եւ զա-  
մենասուրբն Պանտաղեւոն, զմեծ եւ զյոյժ հաշա-  
կելին Գրիգորիա եւ Հոփիակիմէ Պայշտանեաւ հան-  
գերձ բերել եւ դնել առաջի բրածին : Ա աղքաղա-  
կի առեալ առն միոյ զբան՝ թողոյր զառաջին  
բրածն (66), եւ սկսանէր զկողմանէ յարեւելս  
զիմու . եւ պատահէր ամենասուրբ զերեզմանի  
երանելոյն : Յոյժ խնդապից եղեալ թագաւորն և  
ամեներեան որ էին ի խորանին :

Եւ աղքումն լիներ բազմութեան ժողովոյն զի ոտ  
նշխարաց սրբոյն, և զիմեալ ամենայն բազմութիւնն  
ի նշխարս սրբոյն՝ առ ոսո կամէին հարկանել ըզ  
բէժն և զիտրանն, մինչեւ արտաքս ելանէր թաղա-  
ւորն, եւ հազիւ ուրեմն զաղարեցուցանէր զգի-  
մեալն : Խակի բանալ զերեզմանին եւ յերեւիլ նըշ-  
խարացն՝ անընդելական (67) իմի բուրեալ անուշից  
հոտ, մինչեւ ամեներեան ի թմբութեան լւալ ժամս  
բազումն, ծածկելով զյողովիցն խնկարկո թեանցն  
հոտ (68). ընդ որ յոյժ հիացեալ արրաց եւ ամե-  
նայն որ ընդ նմա՝ մխարան տոցին վառա տուովին  
այնալի ահաւոր բարեաց : Աստէր առ զերեզմանի  
որբոյն թագաւորն ի վերաց երկրի, եւ զանազան  
10

սղատուեալ սղատուց արքունի հրամայեր բերել, եւ  
Եղեալ սապատ ի վերայ ինքեան ծնկացն՝ յոյժ եր-  
կիւղիւ սպատեր : Եւ երիցունքն հանելով զնշխարս  
հաւաքէին ի վեր ի սապատն, զոր թաղաւորն ունէր  
ի դիրկո իւր . եւ գտեալ շիշ երկուս ապակիս առ  
նոյն նշխարաց որրոցն . ի միում կայր յարենէ Զա-  
քարիայ, եւ ի միւսում՝ ի նշխարաց որրոցն Պանտա-  
լեւոնի : Եւ առեալ զամենն ի դուրս՝ ողջունեին  
ամենացն բազմութիւնն մինչեւ ցերեկոյ. եւ կնքեալ  
արքունի մատանեաւ՝ հրամայեր մեծաւ զգուշութե-  
ամբ սրահել մինչեւ ցառաւունն : Եւ գտանէին ապակին  
մի նորին Պրիդորիախ ըմպելի, զոր առեալ զոհանայր  
արքացն զԱստուծոյ ամենակալ բարեացն տուե-  
ցելումն իւր :

Եւ ի վաղիւ անդր հրամայեաց զիւր խակ վառն  
արկանել ի վերայ երկրին, և ուկեղին մաղղմայս  
( 68 ) բերեալ անոյշ դինւով զնշխարսն հրամայեր  
լուանալ և յարեւացուցանել ի վերայ ստորարկեալ  
վառին : Անդ ուրեմն զողացեալ արեղայի ի նըշ-  
խարացն, որ էր յԱմարտաց վանից, և մեկնեալ :  
Պրիդորիախ ի տեսլեան մեծավայելու չ փառօք ու-  
մեմն երեւեալ ասաց զանոն արեղային և զգողա-  
նալն, զոր հրամայեալ արքացին, խոստովանեալ  
երեր առաջի նորա զխորեալ մասն : Եւ սրտըն-  
ջեալ առն միոյ ի քարակրացն՝ սկսաւ հայհցել ըդ

Նահաստակն աքրիստոսի զԳրիգորիա, ասէր. մեղ նեռն  
ընտրեցաւ Գրիգորիան այն . և խակոյն հասեալ նմա  
պատուհաս յԱստուծոյ զգետնեալ յերկիր՝ դառ-  
նոյր երեսքն յետա, և այնպէս բազում աւուրս առ-  
նէր ընդ առնն, մինչեւ եկեալ եւ հող առեալ ի  
տեղւոյն, ուր կայր զերեզման սրբոյն . հեղեալ ար-  
տասուս յոյժ, ապա գտանէր զառողջութիւն եւ  
յանցանացն թողութիւն : Ա՛հ մեծ յայնժամ ան-  
կանէր ի վերայ զործօնէիցն եւ զործակալացն . եւ  
փութապէս երկիւղիւ զործէին դշինուած սուրբ  
եկեղեցւոյն :

Աստանօր հրամայէր տալ մասն իւրաքանչիւրումն  
յեղիսկրպուաց առ ի բաշխել սիմակելոց խրեանց.  
Եւ մեծադոյն ինչ մասն յԱմարաս հրամայէր թո-  
ղուլ ի նշխարացն . եւ զայն մեծս զզոշութեամբ  
եւ զանազան սպասիք ինքն խակ սպասաւորեալ  
սկանէր թագաւորական կնքով կնքեալ : Եւ ի վերայ  
զերեզմանին հրամայէր հիմն արկանէլ մասրան, եւ  
փութապէս ոււարտել եւ անուանել մաստոռն սուրբ  
Գրիգորիաի : Եւ այնուհետեւ ուսանասոր տքնու-  
թեամբ անձնասպաշտ լեալ արբացն զեսիսկոսպատն-  
սըն հանդերձ ումենեքումբր ցնծայից ուրախու-  
թեամբ սպաշտէր զհամայն ժողովն ի ձայն բազցր  
յերդս սազմուաց յորդադոյնս ի բարերանութիւն  
Աստուծոյ : Ելանէր ի բանակէն . եւ յերրորդում

գիշերին, յորժամ չորրորդն մերկանայր տիւ, ի  
կատարել սպազտամանն կատարէին դՏէրունեան և  
զկենդանական ահաւոր խորհուրդն :

Ապա չուէր բանակն ամենայն առաջին կարդա-  
ղբոթեամբն և սրբոցն դասուք. անդանօր բարեա-  
ցարարան Առաջան արքոյ զհոգեւորականն :  
զգերաշխարհիկն զայն աւարտեալ, որ էր անանց ևւ  
անօրատեղի բարեացն առիթ, զոր նախ եղելոցն  
թագաւորաց նախ քան զնա՛ իւր խակ նտիսնեացն ոչ  
ումեր համբարեցաւ այսպիսի մեծասրանչ սրար-  
գեր . և քրիստոսածովով բանակին աւարամասն  
առեալ զովորմոթեանցն Աստուծոյ՝ զրերումն ան-  
ձառարար ատանային ի ձեռն քրիստոսազգեատ ար-  
քային Առաջանայ, զորոյ զովոթիսնն ոչ ինչ  
նուազ զով վարեկանիմ քան զտրեւմասկանին տիրով  
Առատանտիանոս կացոր, կամ զԱքակոնին Տրդա-  
տիոս՝ մեծաց Հայոց փրկութեան զտով, որ և մեզ  
արեւելեայց : Աս եղիւ դուռն լուսոյ աստուծ-  
գիսութեան և բազմազան բարեաց օրինակ երջա-  
նիկս այս. սա մեծապէս ելեալ ի հանդիս յայս,  
զանայց՝ ըստ որում զգալնէր պատրաստեալ. նոյն-  
գոնակ և առաւելադոյն եւս հայեցուցանօղ պայ-  
ծառութեամբ դճանսալարհն յօրինեաց : Շարժի ի  
տեղւոջէն . եւ հետիւտս կացեալ արքոյին, ամե-  
նայն բազմոթիւնն հանդարտիւ ցածազնաց բայլիւր-

նման խաղաղացեալ ծովու երթային. Եւ ի քաղցրա-  
մայն ճշմանցն եւ ի ճառադայթ արձակ նշուաց  
փողփողելոց օդն զուարձացեալ. Եւ հրեշտակը իսկ  
երգակիցք. թուէր թէ երկիրս երկինք վերերեւիւր :  
Եւ ինքն իսկ թաղաւորն անխանջ վաստակով , որ-  
ովէս ի զալն , նոյնալէս ի գնալն , անցուցաներ ընդ  
նոյն գետն , եւ կացուցանել հրամայեր զդեստակն  
սրբոցն: Եւ նատէր թաղաւորն ամենայն բազմու-  
թեամբ. եւ եպիակոստուացն օրհնեալ զխառնիձա-  
ղանձ բազմութիւնն՝ հրամայեին գնալ յիւրաքանչիւր  
տեղիսն եւ զդասա եպիակոստուաց եւ երիցանց եւ  
սցլալատուական արանցն առեալ ընդ սրբոցն՝ տա-  
նէր մինչեւ ցիքարուէճ օմի տեղ . եւ անդ դոհացեալ  
զամենեցունց թաղաւորն եւ երկպադութիւն  
մասուցեալ չնորհիւ. եկելոցն ի նորա հրամանսն եւ  
ի գործակցութիւն խնդրոյն այնմիկ՝ մասուցաներ  
եւ ասէր. որոց բարեխօսութեամբ եւ ձեր աղօթիւը  
եւ ցանկալինինձ եւ ձեզ չնորհաղին Գրիատոսի միշտ  
փառք և գոհոթթիւն: Եւ նոյս միաբան օրհնեալ  
զթաղաւորն թաղուհովին հանդերձ եւ ամենայն  
զրամանակն ասեն. զամենայն բարի զօր խնդրեսցես դու-  
յԱստուծոյ ի ձեռն սրբոցն Գրիորիսի տացէ քեզ  
և չնորհեցցէ մեզ լինել քեզ ընդ երկայն առուրս  
խաղաղակը ըստ աշխարհի . և ի քառաղարդու-  
թիւն եկեղեցւոց ստանելսովէոյ յարողարելով օր ըստ

օրէ . զվախճանն քոյ ՚Քրիստոսի խոստովանութեամբն, կնքեսցէ՛ կենարարն ՚Քրիստոս և նորին Հայրն երկնառոր : Եւ առեալ ինքեան զաւագ եպիակապուապեան (69) Շուշի՞նազիւոյ, և յորժամ զեղջ ուրուր յայտ ելանէր զեսպակ սրբոցն՝ իջանէր թագաւորն, և հետեւակ սպաս արկանէր (70) սրբոցն, մինչեւ տարեալ ընդ շինանիատն անցուցանէր , ո՞չ որպէս զօրէն թագաւորի վասիկութեամբ յօրացերց հաղարտացեալ այլ իրրեւ կիրթ եւ յոյժ հմուտ կարգի բրիստոնէոթեան՝ արգելաւորութեամբ վարեցեալ իհանդատարանվամիկոթեանն, և երկասիրութեամբ հմտացեալ հպատակէր սպասուիրանացն Աստուծոյ :

Այսոյինկ սցսովէս եղելոց . եւ յոյժ հռչակեալ ըուր սրբոցն Գրիգորիափ ընդ ամենայն տշխարհն Աւտուացոց զաւառին . եւ յոր գեօղ կամէին մուանել սուրբբն՝ ընդ առաջ ելանէին ծերը եւ տղայր , արք եւ կանայր . եւ հեռագոյն եւս գեօղը խաշիւք եւ զանազան ծաղկօք եւ բորմամբ խնկոց անուշից , անթիւ բաղմութեամբ զային խնդացեալք . եւ անզաղար վառատրութեամբ օրհնէին զմիասնական սուրբ Երրորդութիւնն : Այս ձեւով զային, հասանէին ի սեպհական զեօղն Ռիւտական . եւ անդ հանդուցանէին կատարելով զյիշատակ նոցա մեծապէս . եւ մեծաղնի իւղօք օծանել հրամայէր ըդ նրշխարս սրբոցն :

Եւ դուստր մի խնչիկ անոնն՝ տղայ հաստիով ,  
յոյժ սիրելի արբայի , որոյ անուսամբ շինեալ էր  
դաստակերտ մի . տայ նմա մասն մի ի սրբոյն  
նշխարացն . եւ ի նորին դաստակերտին մեծապէս  
կատարի յիշատակ պէսալէս պատուով : Առնոյր  
և ինքեան մասն , զոր միշտ ի բանակին շրջեցուցա-  
նէր ընդ Զափարեանց . եւ զմեացեալն ի նշխարացն  
կնքեալ՝ մեծաւ զզուշութեամբ տայր սրահել ի սուրբ  
եւ յազնուական սենեկիի , մինչեւ կատարեսցի հիմ-  
նարկութիւն մատրան որ ի Պիւտական զեղջն յա-  
նուն Պիանտապէւոնի . զի անդ փոխեալ զերանելին  
մեծարեսցէ յոյժ : Թողոյր զերիցունս եւ սարկա-  
ւագունս եւ յոլովագոյն զունդ սրաշտօնելից . եւ ինքն  
ի տեղոջն երիցս անգամ՝ կատարէր զյիշատակ  
սրբոցն զերիս երիս աւորա . եւ միշտ անձանձրոյթ  
էր ի սրահս եւ յաղօթս եւ ի տուրս աղբատաց : Իսկ  
որոց ի նշխարացն հրամացեաց տալ պատուէր տայր  
մեծապէս կատարել զյիշատակ սրբոցն . յուշ տո-  
նէր հեղգացելոցն զահագին աստուածացին դատաս-  
տանն , եւ ջերմագոյն փութացելոցն՝ զնորին բարե-  
րաբութեանցն անպատում սրագեւս : Այսպէս  
փառաւորէ Աստուած զսուրբս իւր :



ԽԴ. — Հարցումն Ալաբամայ՝ արքայի Աղվանից,  
զԱՌատրէ, երեց զիտեառոր :

Ասէ արքայ. ողիք հրաժարեալը ի մարմնոյ զգու-  
յունի են քէ՝ անզգայ, կամ կենդանիքս նեշեցելոյն զի  
արդ կարևո օգնել :

Լուծումն. Աղաչելով զԱսոուած պահօք և աղօ-  
թիւք կամ այլ ինչ բարի յիշատակօք որյանուն նոցա-  
կատարի : Եւ զորորինակ, Պատիմ զգեցեալ զըս  
սրառաղինութիւնն Ասուղայ՝ կաղալ և զթել  
սկսաւ . խակ յորժամ մերկացեալ ի բաց ընկէց ըզ  
ծանրութիւն զինուցն և թեթեւացեալ յիւրն դար-  
ձաւ բնութիւն : Այնոքէս եւ հոգիք, միջեռ զգե-  
ցեալ զաղառաղինութիւն մարմնոյ, կան ի ծան-  
րութեան . խակ յորժամ զսա ի բաց զնիցեն, որպէս  
եղեւն ասացեալ, սրառեսիկ եւ քաջիմաց եւ առա-  
ւել զգացուն լինեն : Եւ որք ասացին անզգաց լինել  
զնողի ելեալ ի մարմնոյն, յանդիմանեմք զնոտա  
Ասոուածաշունչ զբոց վիրայութեամբ : Ասէ. Մով-  
սէս՝ ծառաց խմ, վախճանեցաւ. խակ արդ եկեալ  
Մովսէս չքնարազդեառն փառօք առաջի Ասոուծոց,  
ոչ մարմին զգեցեալ, որում Պետրոս բաղձացեալ

իսնղբէր ի Տեսառնէ զանդէն բնուկութիւնն : Խալ եթէ  
անզգաց էր հոգի մարդարէին , որ ասեսդ , Ելեալ  
ի մարմնոյն , ի՞ր դայր յդդայութիւն . և սյալէն  
վայելու իկերապարանս խօսիլ ընդ Աստուածորդուոյն  
Աստուած , ասէ , կենդանեաց եմ եւ ոչ մեռելոց ,  
մեռեալ մարմինն ոչ ապարէն անզգաց է , խակ ան-  
զգացացեալ հոգին , յայտէ թէ՝ մեռեալ է . և դարձեալ  
եթէ՝ վերակացու եղէց քաղաքիդ սյդմիկ վասն իմ  
եւ վասն Պատթի՝ ծառայի խոյ . արդ աղէ ասաւ .  
անզգացացեալ հոգւոյն զի՞նչ մեծարանք էին վերա-  
կացու լինել զաւակին նորա . ոցը յաղաղու կենդանի  
հոգւոյ մարդարէին արար չնորհու վերակացու լինել  
քաղաքին փրկել դնա ի սրոյ թշնամուոյն : Եւ ասա-  
բեան Պօղոս ասէ . Ելանել ի մարմնոց եւ ընդ Քրիս-  
տոսի լինել լսու համորիմ . որ նոյն խալ կենարար  
քանն ասէ . հոյր՝ ( 71 ) զօրս ետուր ցիս , կամիմ զի  
ընդ իս իցեն , եւ զիտառն իմ տեսցեն :

Այդ ըստ քո բանիդ , անզգաց հոգւոցն որպէ՞ս  
մարթ էր ընդ Տեսառն լինել կամ զանձառելի վաս-  
սրն տեսանել , կամ մեռեալ մեծաստանն հոգին ի  
տանջանարանէն հեռագոյն սրատես աչօր զԱր-  
րահա բեւ զՂաղար տեսանել կամ զիտել ուստի՞էր .  
զի յայտնարէս Պիրէին ձայն երեւեցուցանէ ճրշ-  
մարիս առակովն եթէ առաւել քան ի մարմնի ,  
յորժամ արտաքսանայ քան զմարմինն , լինի քաջա-

տես եւ առաւել իմաստուն հոդին. ոչ միայն սրբոցն  
եւ վայելչացելոց հոդիր, այլ եւ մեղաւորացն զգան  
եւ են լցեալ խմաստոթեամբ, որպէս մեծաստունն  
քաջատես լինէր՝ ընդ մեծ վիճ ընդ մէջ կարել ճա-  
նաչել զլլրահամ : Եւ մեղ ուսոց ճշմարիտ հա-  
սատն իջումն Աստուծոյ ի գժոխս ի փրկել զնոսա  
եթէ՝ արդարեւ զգայուն են եւ առաւել իմաստնա-  
գոյն հոդիր հրաժարելոցն ի մարմնոյ. եւ որբ կատա-  
րեն զյիշատակ սրբոցն՝ մեծարեալ սարդեւօք  
աղաչեն զհոդիա նոցա . եւ նորօք հայցեն զողորմու-  
թիւն յառատատուրն Աստուծոյ. արդար եւ կարեն  
բարեխօսել հոդիր սրբոց . եւ վաղվազակի ընդումի  
Աստուծուն զիսնդիրա նոցա . եւ մեղացն չնորհէ ըզ  
թողոթիւն :



իշ. — Երաներոյն Արրանամո՛ Մամիկոնեից ե-  
պիսկոպոսի , առ վաշազան՝ Աղվանից ար-  
քայ, բուղը սակա նեչեցելոց :

Միտ զիր ո՞վ սիրելի՝ զի թէ զիստոթիւն եւ  
տղիստոթիւն յաղագս հոգեցոց ննջեցելոցն ասիցեմ,

( շլր ) Բնէ ընտու այնպէս ախմար քան զոչ հան-  
գուցեալըն . այլ Աստուած ընդունի զպատարապսն ,  
տառցանեն զմեղ Գիրը սուրբը . որպէս Եղիաչոս  
ոչ մանկան մեռելոյն լսելով . այլ մօրն աղաչանաց  
լսելով՝ կենդանացոյց զմանաւին , եւ առանդեաց  
մօրն . եւ Տէր Աստուած մեր զթացեալ յացրին՝ յա-  
րոց զմիամօր որդինորա . եւ Առարելոցն յացրեացն  
արտաստու եւ ի հառաչանս նայելով յարուցին զՏո-  
րիթայն և առանդեցին զնան նոցաւԱրդ՝ Եթէ ընտա-  
նեացնազօթքիմեռելով թենէ իկենպանոթիւննդիւնն  
ածել . ապա աստուածացին զօրութիւնն կարի յոյժ . եւ  
մեղաց թողոթիւն հաստատացուր առնուլ յուսով  
ննջեցելոցն , որբ կենդանիքս նոցախնդրեմբ թողու-  
թիւն մեղաց յԱստուծոյներողութենէն :

---

Ի՞Չ . — Ամհմանադրիւն կանոնակոմ ի վաշա-  
գանայ՝ Աղիանից արքայէ , եղեալ ի ժողովին  
( 72 ) որ յԱղիան եղեւ :

Յամա Ալաչագանաց՝ արքայի Աղվանից , բազում  
հակառակութիւն լինէր ի մէջ աշխարհականոց եւ

եպիսկոպոսաց եւ քահանացից, քոր եպիսկոպոսաց, աղատաց և ռամբաց. ասդու կոմմ եղեւ արքացի առնել ժողով բազմամյուս ստեան յամսեանն Մարերի, որ օր երեքտասան էր ամսոյն :

Ես Վ. աշաղան՝ Աղվանից արքայ, և Շուփհաղից՝ Պարտաւայ արքեպիսկոպոս, Մանասէ՛ Կապազոց եպիսկոպոս, Յունան՝ Հաշուայ եպիսկոպոս, Անանիա և Ասհակ՝ Եւուսոյ քոր եպիսկոպոսք, Յովսէփ՝ Կաղանկայտուաց երեց, Մատթէ՛ Պարտաւայ երեց, Թամա՛ թաղաւորի ղրան երեց, Պօղոս՝ Գեղաճոյ երեց, Շմառոն՝ Ցրայ քոր եպիսկոպոս, Մատթէ՛ Պարահոնոյ երեց, Արիկազ՝ Բեղդայ երեց, Ուրբաթ՝ Պրմանուշաց (73) երեց, Յովիլ եւ Պարմիդէ եւ Յակովիր Երիցունք, եւ ազատ մարդիկ եւ նահապետք Արձախաց. Բակուր՝ Կաղանկայտուաց նահապետ, եւ այլ բաղումք, որք միարան առաջի իմ եկին ի հանդէս ի հովոցի տեղունչԱղուէն. կարգեցաք այսակէս :

Ա. Արիցունք, որք ի չենա լինին, երիցա (74) անգամ ի տարւո՞նն եպիսկոպոսին երկիր սլաղցեն, Եւ զկազազ հոգեւորս ուսցին ի նմանէ ըստ Գրոց. Եւ որպէս կարգնէ, ի տարւո՞նն եպիսկոպոսին ընծայ տարցեն :

Բ. Քահանայ եւ սարկաւագ յորժամ ձեռնադրէն, չորս ղրամ քահանացին, եւ երկու սարկաւա-

զին, երեք՝ աղաս մարդոց եւ թագաւորավնուոյ ինչ հոգւոյ մասն տացէ խրով ձեռամբ, ի կենդանութեանն ձի թամբօք եւ ամանձօք, եւ դինչ կարողութիւնն է իւր՝ տացէ, ապա եթէ ի կենդանութեանն չտացցէ, յետ մահուանն ընտանիքն տացցեն :

Գ. Պատուղ ի ժողովրդենէ երիցս կարդ այս լինի. թուանիկն չորս զրիւ ցորեն եւ վեց զրիւ դարի եւ 16 թաս (75) քաղցու . եւ որ տառապեալն է՝ հոցոց (76) զեկան տացցէ, եւ դինի՛ որչափ եւ կարող է :

Դ. Խակ որոյ վար (77) եւ ոյզի չէ՝ մի առցեն, եւ որ ուելի քան զոյս տացցէ ամես հոգւոյ՝ բարի առնէ, որպէս Պօղոս ամէ. որ առաստով եամբ սերմաննէ, առաստով եամբ հնձեացէ . եւ ոյր ոչխար է՝ ոչխար մի եւ երեք դղամթ բուրդ եւ մի սրանիր :

Ե. Եթէ աղաս է, եթէ շինական եւ եթէ ոյլոր յաշխարհականուաց ի տարսոջն զպատարագն մի խափանեացէ, այսինքն զմեռելոց յիշաստակն, որպէս եւ կարողն է. եւ անմասն մի արտացեն զմեռեալն ի վաստակոց խրեանց . եւ մեռեալ մարդոյն եթէ ձի է՝ մի ձի զոր եւ կամի. եւ եթէ արջառ է՝ մի արջառ զոր եւ կամի, յեկեղեցին տացցէ :

Զ. Վանաց երեց կամ՝ վանական որ եթէ, ի վանացն կայտակ (78) որ առնէ, և ի վերոց յայտնի լինի . անարդեսցեն, ի տեղւոյն ի բաց հանցեն, եւ զխոստակըն յեկեղեցին կաղցեն :

Ե. Եթէ վանաց երիցունք բազում են, եւ ժողովուրդը՝ սակառ. և այլ վանաց ժողովուրդ բազում են. եւ երիցունք՝ սակառք. ի բազում ժողովրդենէն առցեն և տայցեն, որոյ երիցունք շատ են :

Ը. «Քրիստոնեայ մարդ որ կուի և արիւն հեղու, տարցեն սուածի եսլիակուստին, եւ ըստ օրինացն պատուհաս արացցեն :

Թ. Երէց, որ զշէն մեծ պահէ, այլ մի պահեսցէ չէն. եւ որ մօտ երկու ազարակը են, մի Երէց պահեսցէ՝ և այնչափ հովուեսցէ Երէցն՝ որչափ սուածնորդելն կարասցէ :

Ժ. Այս զերորդ աղջի կին մի արացէ, եւ զեղոր կին մի արացէ :

ԺԱ. Եւ որ զկին թողու առանց պատճառանաց, եւ առանց պասկի կին առնէ. եւ որ անօրէն եւ մարդասպանէ, եւ կամ զզէտս հարցանէ, զայնայխին կապեալ ի գուռն արքունի տարցեն, եւ դառն մոհ ի վերայ դիցեն :

ԺԲ. Եւ այնք որ կոծ զնեն զտանուտէրն, զգուանա կապեսցեն եւ ի դուռն արքունի տարցեն, եւ պատուհաս ի վերայ դիցեն, եւ ընտանիքն զհետ արտասուել մի իշխեսցեն :

ԺԳ. Որ զմեռելոտի ուտէ, եւ որ ի քառաներորդն միս ուտէ, եւ ի կիւրակէի զործ ինչ զործէ եւ

յեկեղեցի չերթայ, երէցն սպառուհաս արասցէ ժողովրդեամբ հանդերձ :

**ԺՊ.** Եւ որ ի շորեւշարթի կամ յուրբաթի միտուտէ, յառաջ քան զազուհացն միշաբթ պահեացէ. Եւ եթէ երիցուն առաջի որ զայ եւ վերայէ վասն մարդոյն թէ չէ այդովէս. աւագն շինոյն կացէ եզն մի եւ յերէցն տայցէ :

**ԺԵ.** Եթէ աշխարհական որ երիցու կամ սարկաւագի բամբասանս դնիցէ, և նորա խոստովանեսցին եթէ այդովէս է. եպիսկոպոսն դնիցէ ի վերաց կարգ. և յանապատի ապաշխարեացեն. ասք թէ ոչ խոստովանեսցին ճշմարտութեամբ, և դոր ոյլըն ասեն՝ ճշմարտութեամբ ի յայտ զայ, որպէս ի կանոնաբնէ զրեալ, սպառուհաս զիցեն և ի բաց հաղածեսցեն ի շինեն, և եթէ մեղքն չէ յայտ՝ սպառութագ հրամացեացեն մասսացանել բահանացին :

**ԺԶ.** Եւ եթէ ընկերը մեզս ի վերաց դնեն, երիցուն, և ինքեամբ հասատարիմ են. երէցն առաջի սեղանոյն կայցէ, և ամբասանովքն ժողովը զետանն առաջի, ի բեմէն ի վայր առցեն, և ի շինէն արտաքր հանցեն. առա եթէ աշակերտոքն քինով լինին, և ժողովութքն դիտէին թէ՝ յառաջ խոսվէին. բահանացն առաջն անիծիւք ի բաց հաղածեցեն : Եւ թէ խոստովանին թէ՝ սուտ սասցաք, սպառշխարթիւն ի վերաց

դիցեն, և ի վանաց մի հանցեն, խակ եթէ յետ այնուրիմ վնաս գործ եսցեն՝ կանոնօք դատեսցին :

**ԺԵ.** Դարձեալ եպիսկոպոսունք և Երիցոնք զաշտ արանց առաջի արքայի եղեն տրոտոնջ եթէ ի շինի երկուս կամ Երիա եկեղեցիս առնեն վանս : Եւ արքայի առաջի ազատ մարդիկ սպայմանեցին . և արքայի եւ եպիսկոպոսաց եւ ազատաց այսպէս հաճոյ թուեցաւ, եթէ զարարեալ եկեղեցիսն թողցեն, եւ զարուղ եւ զհաս եկեղեցւոյ վտամ ( 79 ) եկեղեցւոյն տայցեն :

**ԺԲ.** Եւ որ տասանորդ ստանայ, ազատ մարդիկ զիկսն ի բռն եկեղեցին տայցեն, եւ զիկսն խրեանց եկեղեցւոյն տայցեն :

**ԺԹ.** Ավարակիին տէրն եւ ծառայն ի վսամ եւ կեղեցին երթիցեն յազօթս, եւ զյիշատուկ յեկեղեցին արասցեն . այլ անաշխարհիկն զչողեաց տուրն յեկեղեցին տայցէ :

**Խ. Ա.** զատ արանց, որչափ խրեանց դատակերտուքն իցեն, զերէց առանց եպիսկոպոսին մի իշխեացեն հանել եւ առնել . եւ Երիցոնք եթէ յազատէ կամ ի ժողովրդենէն վտանգ լիցին, առանց եւ սպիսկոպոսին զնալ մի իշխեացեն :

**ԻԱ.** Եւ ազատ մարդ որ յիւր եկեղեցւոչ թէ սեղան կանգնէ կամ նշանար ինչ բերէ կամ արատարագ առնէ, եպիսկոպոսին հրամանաւ արասցէ, որչոփ

Եւ իսր կարողութիւն իցէ . Եւ որ զայս հրամանով  
առնէ եւ կատարէ՝ օրհնեաւ լիցի . Եւ որ չառնէն՝  
հեռի եղիցի յեկեղեցւոյ . Եւ ապա ըստ կարի տու-  
գանս բերցէ առաջի եպիսկոպոսին . Եւ յետ այնոր  
որչափ տուգանս տայցէ մարդն՝ որ ի կանոնան զը-  
րեալն է, ընդ օրհնութեամբ արասցէ :

Ի՞ . Զայս պայման արարին եպիսկոպոսունք և  
քահանոցը և աղաստ մարդիկ առաջի արքայի եթէ ի  
մեր եպիսկոպոսաց և յերիցանց և յեկեղեցւոյ բե-  
րանոյ օրհնեաւ լիցի թաղաւորն թաղուհւովն և զու-  
սակովն հանդերձ . որք յայս ժողովս են, օրհնեաւ  
եղիցին : Եւ զայս հրաման մատանեցին, մուծին  
արքայի հրամանաստար Միքարիկ հազարապետ աղ-  
դապետ, Մարտի ( 80 ), Տիրազդ, Ապարակոս,  
Ղամա, Բակուր, Աւատան, Արշէս, Վարդան քաջ՝  
Գարդմանաց տէր, Խուլս՝ Բերմուսան, Խոմիքն՝  
Փիւրողի նահապետ, և ամենայն աղաստ Աղվանից  
արքայի մատանիս եղին ի վերայ նորս :

»»

Ի՞ . — Յաղացս սրբոյն Միսարորայ և ընկերաց  
նորս պատմութիւն վիստասանար :

Եւ եղեւ յետ մերայութեանն Պափողորիսի՝ Աղվանից

կաթողիկոսի, բարբարոսական ազգ կողմանցն արեւ-  
ելից վերտափն ի դիւցախելար կռամոլութիւնս ( 81 )  
կործանեցան . և բազում ուխտ առրուշանաց կա-  
տարելով յարուցին հաղածանս ի վերաց քրիստոնէից  
Մի ոմն ի նախեղելոց վարդապետաց, որ ի Հոգւոցն  
որրոյ խնամոյն նշանադիր երից ազգացն առնէր՝  
Հայոց, Աղլանից և Վրաց, նա այնուհետեւ ի  
տարբն երթացր յԵրուաղէմ մասուցանել ուխ-  
տազրութիւն : Անտի գարձեալ աշակերտօքն, և  
ընդ ինրեան ունելով դիսաչն արծաթեղին ուկի  
խաչաց տեսակով, յորում ի տերունեան խաչէն էր  
մասնաւորեալ . անցանելով ընդ Հայաստան՝ ճանա-  
պարհէ հասանել ի սահմանս արևելից, ի գտառն  
Ուտիական . և մտեալ բնակէին ի ճախճախուտ  
տեղիս ևւ ի լուսաբոյս մօրսն, առ տեղումն որում  
Գիսն կոչեն : Եւ յայնժամ նորողեալ զեկեղեցւոյ  
հաստատէ զհաւասս : Եւ ձգէր զբարզութիւն առե-  
տարանին յաշխարհէն Ուտիացւոց և յԱղլանս եւ  
և ի Փլինս ( 82 ), և ի Կասուս և ի գուռն Զողաց .  
( 83 ) և զայլաղդի ազգսն, զորա գերութեամբ էր  
ածեալ Աղերսանորի Մակեդոնացւոյ, և նատո-  
ցեալ զմեծ լերամբն Ասւեսառ՝ զՊարզաբան ( 84 )  
և Կամիճիկ Հեփիթաղմն, զարձուցեալ ի հաւասա՛  
զկարդ աստուածաշաշտութեան ուսուցանէր, զոր ի  
զաղնջոց ուսեալ՝ էին մոռացեալ :

Բողորովին քարոզ եւ առաքեալ խուժազուժ Աս-  
րուտանեացն լինելով ըստ նոցին բարբառոյ գալրու-  
թեան առնէր զնոսա ծանօթս : Եւ անտի դարձեալ  
ի մօրան երթեալ բնակէին զօղեալ ի սպառնալեաց  
զըժնդակ իշխանացն, եւ անտի անսու, ծածուկ լեալ  
որ ըստ օրէ հաստատէր զեկեղեցին Աստուծոյ :  
Եւ անդէն ոզի մողորութեան զրդոէր վմիտա զա-  
զանացեալ բոնակալացն, զայրագնեալ նոցա փոյթ-  
յանձին կալեալ սպառնանել զնոսա : Խակ երանե-  
լոյն Մաշտոցի ի Հոգւոյն որրոյ ազդեալ՝ վութա-  
ցեալ փորէր փառ մի ըստ պիտոյից գործոյն . եւ  
զաստուածային առեալ զանձն որ է խաշն տէրու-  
նական, եղեալ ի տապանի ծածկէր ի զետնակար  
կայանի :

Եւ այնուհետեւ հաստարիմ և զուգակիրան  
աշակերտօքն միարան յաղօթս եւ ի խնդրուածս ա-  
պատինեալ՝ միմեանց կամառ յերկուս բաժանէին  
ջոկս. կէսն ի կէս կողմանց դաւառացն ելանել խոր-  
չէին. կիսոցն բազում աշխարհօ հատեալ՝ անցեալ  
քարոզէին հաւասոս. բոյց մնացեալ դասն ի տեղւոջ  
կայանի խաչին՝ յետ սակաւ ինչ աւորց զմարտիւ-  
րուական առնուին սպակ : Յորոց նահատակու-  
թեանցն տեղւոջ նշանք լուսեղէնք եւ հրաշալի  
սքանչելիք երկեալ. զոր տեսեալ բազում անդամ  
անհաւատիցն, և տսեալ թէ՛ մեծին Աստուծոյ է

այն նշան , հաւաստային միարան և միլրուին առ  
հասարամել :

Խակ մի ոմն ինորահաւատիցն որ բազում անդամ  
տեսեալ էր զնշանն զայն ի վերայ գետնափոք կայանի  
խաչին , շինէ մաստուռն մի հողեղին չորերկուսի ,  
և տասլան տախտակամած արարեալ՝ ամիտիէր զնշ-  
խարս նոցա ի տասլանի անդ . և ամ յամէ ուխտա-  
որեալ կատարէր զյիշատակս նոցա : Եւ յոլովից  
լինէր թժշկոթիւն ի տեղւոջն , յորս հաստատեալ  
նուանեցան հաւաստայեալըն : Եւ նախ անդ եղեալ  
հիմունս հաստատէին եկեղեցի Աստուծոյ , ի կայա-  
րանի խաչին , զոր հին եկեղեցի տեղւոյն անուա-  
նէին որում Գիտն կոչեն : Այլ և յետ բազում ժա-  
մանակաց վեհազդի ոմն իշխան Վարազիերուժ  
անուն յԱռանշահիկ տոմէ՝ կամեցեալ նորոգել ըդ  
հին եկեղեցին , և ոչ կարէր քակել զաղիւասար սոցը  
